

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՇԻՊՆԱԿԱՆ ԳՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՆՆՈՒՄԸ

Աշխարհին համակել է գաղափարական ճգնաժամը: «Համաշխարհայնացում» («գլոբալացում») կոչվող հրեշը փորձում է կուլ տալ բոլոր մյուս գաղափարախոսությունները և իր միահեծան իշխանությունը հաստատել ողջ երկրագնդի վրա:

Աշխարհում պատերազմ է, գաղափարական պատերազմ: Մյուս բոլոր հակամարտություններն ու «տաք» և «սառը» պատերազմները՝ ռազմական, տնտեսական և այլն, մինչև իսկ միջազգային ահաբեկչությունը, այդ պատերազմի տարբեր դրսևորումներն են միայն:

Ճգնաժամը համակել է նաև հայությանը: Այլ կերպ չէր էլ կարող լինել:

Հայության համար ճգնաժամը **համազգային է, համակարգային և համակարգված՝** ինչպես ողջ մարդկությանը համակած ճգնաժամը:

Համազգային. այն ընդգրկել է հայության բոլոր հատվածները: Իհարկե, տարբեր տեղերում ճգնաժամի տարբեր դրսևորումներն արտահայտվում են տարբեր ուժգնությամբ: Օրինակ՝ ՀՀ-ում առավել ցայտուն է ճգնաժամի սոցիալ-տնտեսական բաղադրիչը, Սփյուռքում՝ ազգային ինքնության պահպանման տազնապը (կախված գանազան գործոններից՝ երբեմն միևնույն գաղթօջախի տարբեր վայրերում էլ տարբերակումներ կան):

Հայության ճգնաժամը համակարգային է. այն ընդգրկել է հայության կենսագործունեության և նույնիմքն գոյության բոլոր կողմերը՝ հոգևոր, նյութական, մտածողության և այլք:

Ճգնաժամը նաև համակարգված է: Ողջ մարդկության, ներառյալ՝ հայության ճգնաժամը, ծրագրավորել և գործողության մեջ է դրել Համաշխարհային կենտրոնը, որը թշնամի է բոլոր ազգերին, ազգություններին, ժողովուրդներին և արժեքային համակարգ կրող մարդկային բոլոր հանրույթներին: **Այս նոր Նեռի նպատակն է հասնել համաշխարհային տիրապետության՝ ստրկացնելով համայն մարդկությունը՝ ի սպաս իր «սատանայական խրախճանքի»՝ այս նպատակին ծառայեցնելով գիտատեխ-**

նիկական նորագույն նվաճումները, մասնավորաբար տեղեկատվական գերարդիական տեխնոլոգիաները:

Ի՞նչ անել: Ո՞րն է ելքը: Հավերժական թվացող հարց, որի պատասխանը տվել է մեր անմահ նախահայրը՝ չենթարկվելով բռնակալ Բեկին:

Դիմադրել և հաղթել Բռնակալին: Ահա՛ պատասխանը:

Ասել՝ մերօրյա Բեկն ունի ահռելի զինանոց և անհմաստ է նրան դիմադրելը, արդարացում չէ, հավասարազոր է ինքնասպանության: Բեկն էլ իր ժամանակի ամբողջ զինանոցով էր խուժել Հայաստան՝ ստրկացնելու հայկյաններին: Պատմությունը ցույց տվեց՝ ովքե՛ր հաղթեցին, ինչո՞ւ և ինչպե՞ս հաղթեցին:

Չկա՛ անկարելին, եթե կան ամենազոր ԿԱՄՔՆ ու վերջինիս շարժիչ ՈՒԺԸ:

Այդ Ուժից՝ ՀԱՅՈՑ ՈԳՈՒՑ էլ բխում է մեր պարբերականի անվանումը: Շրջադարձ դեպի Ոգին, դեպի Ակունքները, դեպի Անվախճանն ու Հավիտենականը:

Շրջադարձ՝ այսինքն նաև էական, դրական փոփոխություն հայության կյանքում:

Շրջադարձ՝ այսինքն ոչ թե դարձ ի շրջանս յուր, այլ պարույրածն զարգացում:

Մենք ճանապարհ ենք դուրս գալիս համահայկական տեսլականով: «Շրջադարձի» էջերում չեն լինի հայությունը հատվածական որևէ հատկանշով բաժանող հրապարակումներ: Առանձնահատուկ ուշադրություն կդարձնենք համահայկական խնդիրներին, սփյուռքահայության հարցերին, Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին, հայրենատիրության և հայրենադարձության փրկարար գաղափարների, հայկական ու մարդկային հոգևոր արժեքների քարոզչությանն ու արմատավորմանը:

«Շրջադարձի» էջերում իր գործնական արտացոլումը կգտնի «Մեկ Ազգ, մեկ Հայրենիք, մեկ Մշակույթ» Հավատո հանգանակը: Ազգը, Հայրենիքն ու Մշակույթը, մեզ համար, եռամիասնություն է, սրբազան գաղափար, իսկ մենք՝ որպես ամենահամեստ սպասավոր, գալիս ենք ծառայելու այդ գաղափարին:

Ո՞Վ Է ԼՌՈՒՄ



Արդեն վեց ամիս է, ինչ գտնվում են Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Ամեն օր ծանոթանում են հայկական մամուլի նորություններին ու վերլուծականներին: Ու ամեն անգամ զգում են ինձ աշխարհի ամենաանգոր մարդը, երբ Հայաստանից լսում են վիատեցնող նորություններ ու ոչինչ, ոչինչ չեն կարողանում անել...

Ավելի ի՞նչ մեծ ցավ կարող է զգալ հայ մարդը, երբ կարդա, որ Ստամբուլում իրենց մարմիններն են վաճառում հարյուրավոր հայուհիներ: Ինչպե՞ս կարելի է առանց սահմեկելու կարդալ Մուն կոչեցյալի սրբապիղծ աղանդի՝ Հայաստանում գործունեության մասին: Ինչպե՞ս կարելի է չզարհուրել, իմանալով, որ հոկտեմբերի 27-ի պատվիրատուներն այդպես էլ չբացահայտվեցին, ավելի շուտ՝ «պարզվեց», որ այդպիսիք չկան էլ: Ինչպե՞ս կարելի է չտարակուսել, երբ տաղանդաշատ գիտնականին չեն տալիս դոկտորի կոչում՝ ազգայնական լինելու պատճառով: Իսկ մինչ այդ՝ թույլ չեն տվել նրան ելույթ ունենալ «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային համաժողովում, համաժողով, որտեղ ամենից առաջ պետք է ելույթ ունենար Արմեն Այվազյանը... Ինչպե՞ս կարելի է զայրույթով չլսել իշխանությունների հանդեպ՝ կարողալով հանրակրթական դպրոցների «օպտիմալացման» փառավոր «գյուտի» մասին: Ինչպե՞ս կարելի է առանց ցասման կարդալ այն մասին, որ քիչ էր մնում Ղարաբաղը Եվրախորհրդում դառնար «գրավված տարածք»...

Եվ ամեն անգամ, երբ կարդում էի այս բոթերը, ուզում էի անպայմանորեն իմ ձայնն ավելացնել բոլոր այն մարդկանց ձայներին, ովքեր իրենց ցասումն են արտահայտում այդ ամենի նկատմամբ: Սակայն ամեն անգամ խուսափում էի գրելուց... Չէ՞ որ «տաք տեղից» են գրում...

Ու արձագանքս այս տխուր իրադարձություններին ամփոփվում էր անքուն գիշերների մեջ, հաճախ խոնավացած անկողնում...

Բայց գալիս է ժամանակ, երբ ոչինչ չես կարող անել, բացի գրիչ վերցնելուց, ու թեկուզ՝ ոգևորելու բոլոր այն արդար մարդկանց, ովքեր կարծում են, թե իրենց բանակը շատ փոքր է... Բայց գալիս է մի պահ, երբ հասկանում ես, որ պիտի՝ ասես, քանզի կան բառեր, որոնք պիտի հնչեն՝ կանգուն պահելու



տիեզերքը, քանզի տիեզերքը կարոտ է ճշմարտության...

2004 թվական, 19 փետրվարի, Հունգարիա, Բուդապեշտ: Առավոտյան ժամը 5-ին Ադրբեջանի պաշտպանության նախարարության ավագ լեյտենանտ Ռամիլ Սաֆարովը կացնահարել է 26-ամյա հայ լեյտենանտ Գուրգեն Մարգարյանին: Ադրբեջանցի սպան մահափորձ է կատարել նաև մեկ այլ սպայի նկատմամբ, որը, բարեբախտաբար, կանխվել է:

Այսպիսի վայրագություն 21-րդ դարում դժվար էր պատկերացնել: Չնայած՝ ամբողջ կյանքում հավատացել են Ջորավար Անդրանիկի այն ասածին, որ «թուրքը մնում է թուրք»: Սակայն մեր օրերում այսպիսի բան չէի կարող երևակայել: Այստեղ, թերևս, կարելի է հիշել թուրքերի հայր կոչվող Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի մտքի «փայլատակության» գագաթնակետը. «Ի՞նչ երջանկություն է թուրք լինելը»...

Եվ ինչքան էլ զարմանալի հնչի, տարակուսանքս ոչ այնքան թուրքական նոր «հերոսության» պատճառով է, այլ ՀՀ իշխանությունների արձագանքի...

Մեր ծանր օրերում Գուրգենի ողբերգության օրինակով ցույց տալ աշխարհին Ադրբեջանի իսկական կերպարը, մեղմ ասած, քաղաքական տկարամտություն է: Ճշմարտությունն ստիպում է խոստովանել, որ ադրբեջանցի սպան ավելի մեծ օգուտ չէր էլ կարող տալ Հայաստանին՝ սպանելով երիտասարդ հայ զինվորականին... Բայց արի ու տես, որ մեր մեծարգո իշխանավորները շատ ավելի կարևոր գործերով են զբաղված. ձերբակալում են ընդդիմություն կոչված խմբերի անդամներին, Աժ օրակարգ ստցնում օրենքի այնպի-

սի նախագծի քննարկում, որը, բնականաբար, մեծ աղմուկ էր բարձրացնելու...

Մի՞թե այս ամենը պարզապես համընկան միմյանց հետ: Մի՞թե Գուրգենի սպանությունը պետք է ետին պլան մղվեր՝ ուսանողական ցույցերի և հակաիշխանական գործիչների ձերբակալությունների «աղմուկի» ներքո...

Ու այդքանից հետո մյուս հայ սպան, որին նույնպես փորձել էր սպանել ադրբեջանցին, մնաց Հունգարիայում: Այդքանից հետո Հունգարիայի իշխանություններից չպահանջվեցին բացատրություններ՝ հայ սպաների անվտանգությունը չապահովելու համար: Ներեցեք, մոռացել էի, որ մենք արդեն «Եվրոպա» ենք դարձել: Երևի սա է՛լ կմտցնեն ժողովրդավարություն կոչեցյալ բառախաղի մեջ: Երևի հայերիս «սազում է», չէ՞, զսպված լինելը:

Իսկ եթե այս դեպքը կրկնվի՞: ՀՀ իշխանությունները հավանաբար կասեն տեսա՞ք՝ լռեց համաշխարհային հանրությունը, դրա համար էլ կրկնվեց: Բայց իրականում ո՞վ է լռողը, իրականում ո՞վ պետք է խոսի այդ բարբարոսության մասին, իրականում ո՞ւմն էր Գուրգենը...

Այսօր հասկացա մի բան՝ Հայոց ցեղասպանությունն անպատիժ է, քանզի մենք ենք լռել, և ոչ թե «միջազգային հանրությունը»... Ի վերջո, ինչքան պիտի մեր սխալները բարդենք ուրիշների գլխին: Ե՞րբ պիտի դասեր քաղենք մեր պատմությունից: Քաղենք և ոչ թե տանք...

*Սիմոն Մաղաբյան
Արապահո համայնքային քոլեջի
ուսանող, 17 տարեկան*

«ԱԹԱԹՈՒՐՔԸ ՄԵՉ ՎՐԱ ՊԻՏԻ ԽՆԴԱ»

ԱՅՍՊԵ՛Ս «ՆՇԵՅԻՆ» ՄԿՀ-Ի ՀԻՄՆԱԳՐՄԱՆ 80-ԱՄՅԱԿԸ

Մարտի 16-ի առավոտյան Մելգոնյան կրթական հաստատության (ՄԿՀ) տնօրեն Անի Լաչինյանը դպրոցի դահլիճում հավաքված ուսուցչակազմին և աշակերտությանը տեղեկացրեց, որ, ՅՄԸՄ-ի Կենտրոնական վարչության որոշման համաձայն, 2005թ. հունիսից փակվելու է Մելգոնյան կրթական հաստատությունը:

Ուղիղ ութ տասնամյա անցյալ ունեցող դպրոցն արդեն իսկ չի ընդունում նոր աշակերտներ, իսկ 18 երկրներից, այդ թվում՝ ԴՀ-ից և Արցախից: ՄԿՀ հաճախող աշակերտներից շատերն ստիպված կլինեն հաճախել օտար դպրոց, քանի որ Կիպրոսում, Մելգոնյանից բացի, հայկական ոչ մի ուրիշ միջնակարգ կրթօջախ չկա:

Այս առնչությամբ ՅՄԸՄ-ի ղեկավարության հրապարակած **անգլերեն** հայտարարության մեջ ասված է. «Լայն կշռադատումներից և ամբողջական գնահատումներից հետո կենտրոնական վարչությունը միաձայն վճռեց դադարեցնել ՄԿՀ-ն 2005թ. հունիսին»: Հայտարարության մեջ շեշտված է. «Այս որոշումը գերազանցապես հիմնված է վարչության եզրակացության վրա, թե ՄԿՀ-ն այլևս չի կարող ստանձնել իր առաքելության մարտահրավերները հայաշխարհի ներկա կոնտեքստում»:

Թե ինչ չափանշերով են «կշռադատել» ՅՄԸՄ-ի վարչականները, հայտնի է բոլոր հակազդեբալիստներից. նրանք պարզապես հայանուն ամերիկացիներ են՝ օտարի գործակալների ձեռագրով: Սակայն զարմանալի է, երբ նրանք պնդում են, թե «վարչությունը լրիվ ընդունում և հարգանք է տածում տեսիլք ունեցող Մելգոնյան եղբայրների ժառանգության նկատմամբ»:

Հայտարարության մեջ ասվում է նաև, որ ՅՄԸՄ-ն «վճռել է նրանց (Մելգոնյան եղբայրների - խմբ.) հիշատակը հավերժացնել կրթական նոր ծրագրերով, որոնք պիտի իրականացվեն Կիպրոսում և նրա սահմաններից դուրս»: Այս վերջին «վճիռն» ակամա մեզ հիշեցրեց ՅՄԸՄ վարչականների մեջ պտտվող խոսքն այն մասին, թե «Լիբանանում կառուցվելու է մի լրիվ «էլիտար» դպրոց, որի աշակերտության 50 տոկոսը պիտի լինի ոչ հայ», նպատակը՝ «հայկական լոբբիի ազդեցության գոտու ընդարձակում»: Այսպես կոչված «էլիտար» այս դպրոցի կառուցման համար նախատեսվում է 6 միլիոն դոլար:

ՅՄԸՄ-ում և նրան մոտ շրջանակում շատերն են այն կարծիքին, թե ժամանակին Լուիզ Սիմոն-Մանուկյանի հրաժարականն ուղղակիորեն առնչվում էր ՄԿՀ փակման հետ: Նա փորձում էր այդպիսով շեղել դպրոցի փակման հետևանքով առաջանալիք բողոքների սլաքը (նկատի ուներ Պերժ Սեդրակյանին): Գուցե թե այս «քայլը» ինչ-որ չափով հաջողված է թվում, սակայն խնդիրը ոչ թե անհատների, այլ ողջ ՅՄԸՄ-ի և նրա 80-ամյա վաստակի վարկն է, որը հարցականի տակ է դրվում:

Մյուս կողմից՝ նկատի ունենալով այն իրողությունը, որ Մելգոնյանի բյուջեի բացը դյուրությամբ կարելի է փակել «կրթական ծրագրերի համար» նախատեսված ծախսերի միայն բանկային տոկոսներով, հարց է ծագում՝ արդյո՞ք ՄԿՀ-ն զոհվում է որոշ մարդկանց անձնական շահի և անտարբերության

նր, երգել են Կիպրոսի և Հայաստանի հիմները, ապա վարժարանի քայլերգը: Նրանք պաստառներ են պարզել՝ «Աշակերտության ապագան գողանալը ոճիր է», «Աթաթուրքը մեզ վրա պիտի խնդա»... Նույն դպրոցի շրջանավարտների միությունը մտադիր է դիմել դատարան՝ դպրոցի փակման որոշումը չեղյալ հռչակելու համար: Իսկ Եվրոպահայերի համագումարը (ԵՀՀ) մարտի 4-ին ՅՄԸՄ-ին կոչ է արել վերանայել դպրոցի փակման որոշումը:

ԵՀՀ-ի հաղորդագրության մեջ ասված է. «Անժխտելի փաստ է, որ սփիւռքի տարածքին, հայ դպրոցը ամենէն ամրակուռ ամրոցն է հայեցի ինքնութեան ու ոգիի պահպանման, մասնաւորաբար համաշխարհայնացման մեր ժամանակներուն, երբ փոքր ժողովուրդներ կը գտնուին մշակութային միատարրացման եւ ազգային այլա-




պատճառով: Սա ավելի է մտորումների տեղիք տալիս, մանավանդ երբ պարզվում է, որ ՅՄԸՄ կրթական պատասխանատու Քերոլայն Արսլանյանը ընդհանրապես ծանոթ չէ հայոց լեզվին ու գրականությանը:

Մեզ մնում է միանալ Մելգոնյանի աշակերտության և հայապահպանման համար նախանձախնդիրներին և պահանջել ՅՄԸՄ ղեկավարությունից՝ վերանայել այս դավադիր որոշումը:

Մելգոնյանի փակման որոշումը տարբեր հակազդեցությունների առիթ տվեց: Առաջին՝ դպրոցի աշակերտները, լուրն առնելուն պես, շրջապատելով Մելգոնյան եղբայրների դամբարա-

սերման հզոր յորձանքին դեմ յանդիման: Իսկ շուրջ 80-ամեայ հարուստ աւանդոյթ ունեցող Մելգոնեան Կրթ. Հաստատութիւնը կը նկատուի միջնաբերդը ազգակերտման ու ազգապահպանման սփիւռքի գաղթօճախներուն համար: Արդարեւ, Հաստատութիւնը՝ եղեռնէն ետք, ղեկավար քատրերու եւ ազգային-հասարակական ու մշակութային գործիչներու յաջորդական սերունդներ պատրաստած է համայն հայութեան համար:

Հաստատութիւնը փակելը վստահաբար շատ ծանր հետեւանքներ պիտի ունենայ ոչ միայն Կիպրոսի հայութեան, այլև Միջին Արեւելեան, Եւրոպական,



Եւրոպահայերու Համագումարը կը դիմէ Գ. Գ. Նախագահ Ռոբերտ Քոչարեանին, Գ. Գ. Ազգային ժողովի Նախագահ Արթուր Բաղդասարեանին, Գ. Գ. Արտաքին գործերու Նախարար Վարդան Օսկանեանին

Նորին Վսեմութիւնք,

20 Յունուար 2004 թուականին, Հայաստանի Բրիտանիոյ դեսպանուհին, Տիկին Թորդա Աբբօթ-Ուաթը, Հայաստանի մէջ դիւանագիտական իր պաշտօնակալութեան առաջին տարեդարձին առթիւ տուած մամլոյ ասուլիսի մը ընթացքին, անդրադառնալով 1915ի դէպքերուն, յայտարարած է, թէ հակառակ այն իրողութեան, որ Բրիտանական կառավարութիւնը ատենին դատապարտած էր ջարդերը որպէս խժոժութիւն, ապացոյցները բաւականին պարզորոշ չէին, որպէսզի կարելի ըլլար դէպքերը ցեղասպանութիւն որակել՝ ըստ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան 1948ի Ցեղասպանութեան համաձայնագրին եւ թէ այս միւթին վիճարկումը կը շարունակուի պատմաբաններու եւ իրաւագէտներու միջեւ:

Նկատի ունենալով, որ աշխարհի մէջ արդէն տասնհինգ պետութիւններ եւ խորհրդարաններ, կարգ մը շրջանային խորհրդարաններ եւ տեղական վարչութիւններ ու միջազգային կարեւոր կազմակերպութիւններ, ինչպէս ՄԱԿի Խտրականութեան Կանխարգիւման եւ Փոքրամասնութիւններու Պաշտպանութեան Ենթայանձնախումբը, Եւրոպական Խորհրդարանը եւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը պաշտօնապէս ու պարզորոշ կերպով ճանչցած են Հայկական Ցեղասպանութիւնը,

նկատի ունենալով, որ սա երկրորդ անգամն է, - նմանօրինակ ժխտողական յայտարարութիւն մը ըրած էր Տիկին Ռիվքա Քոհէն, Հայաստանի մօտ Իսրայէլի դեսպանուհին, 2002 թուականին,- որ օտար դիւանագէտ մը կասկածի տակ կը դնէ Հայկական Ցեղասպանութեան իրականութիւնը,

նկատի ունենալով, որ Հայաստանի կառավարութիւնը, երկու անգամուն ալ, ոչ մէկ հակադէտութիւն ցուցաբերեց կամ շատ մեղմ կերպով հակադարձեց երկու դիւանագէտներու մեծապէս վիրաւորական յայտարարութիւններուն ընդդէմ Հայկական Ռոջակէզի յիշատակին, որ ընդունուած իրողութիւն մըն է՝ ըստ միջազգային նորմերու,

նկատի ունենալով, որ այսպիսի յայտարարութիւններ հայկական պետութեան սահմաններուն մէջ երբ համապատասխան վերաբերմունքի չեն արժանանար, իրենց ուղղակի ազդեցութիւնը կ'ունենան հայ ժողովուրդի գերիշխանութեան վրայ, տկարացնելով հայկական Սփիւռքի ջանքերը ի խնդիր Հայկական Ցեղասպանութեան միջազգային ճանաչման,

նկատի ունենալով, որ Հայաստանի կառավարութեան լռութիւնն ու անտարբերութիւնը հայ ժողովուրդի եւ Հայաստանի պետութեան ուղղուած անընդունելի եւ վիրաւորական յարձակումներուն դիմաց, քաղաքական վնաս կը հասցնեն Հայաստանին եւ Սփիւռքին միատեղ՝ վտանգելով անոնց մղած պայքարը ի պաշտպանութիւն Հայկական Ցեղասպանութեան գործադրութեամբ ոտնակոխուած հայ ժողովուրդի իրաւունքներուն,

նկատի ունենալով, որ Հայաստանի պետութեան ձեռնպահ կեցուածքը կ'ականահարէ Հայաստանի Հանրապետութեան բարոյական դիրքը Ղարաբաղի ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան իր ջանքերուն մէջ՝ ընդդէմ Ատրպէյճանի, մինչ հայերու ջարդերը Սունկայիթի (1988), Կիրովպատի (1989) եւ Պաքուի (1990) մէջ կը կորսնցնեն իրենց մշակութիւնը, որովհետեւ ըստ արժանւոյն չեն փաստագրուած ու դատապարտուած, եւ պատասխանատուները ցարդ անպատիժ կը մնան, եւ

նկատի ունենալով, որ նմանօրինակ յայտարարութիւններ, անպատիժ մնալու պարագային, կրնան ամրապնդել թրջական կառավարութեան առկայ ժխտողական քաղաքականութիւնը Հայկական Ցեղասպանութեան նկատմամբ, ինչպէս անցեալ տարուայ Թուրքիոյ ազգային կրթութեան նախարարութեան կողմէ նախակրթարաններու եւ երկրորդական վարժարաններու աշակերտներուն պարտադրուած հերքումը՝ քսաներորդ դարու սկիզբը տեղի ունեցած հայերու, ասորիներու եւ պոնտացի յոյներու բնաջնջումին, բացայայտօրէն ոտնակոխելով շատ մը միջազգային համաձայնագրեր, գլխաւորաբար՝ Մարդու Իրաւունքներու Համաշխարհային Յայտարարութեան 26րդ յօդուածը եւ Երեխաներու Իրաւունքներու Միջազգային Համաձայնագրի 29րդ յօդուածը,

Եւրոպահայերու Համագումարը կը միանայ Նեօշաբէլ-ժիւրայի Հայկական Համայնքին, Հայ Տիկնանց Միութեան, Ժընեւ, Զուլիցերիա-Հայաստան Ընկերակցութեան եւ կը պահանջէ, որ

Հայաստանի խորհրդարանն ու կառավարութիւնը ձեռք առնեն հարկաւոր օրէնսդրական եւ դիւանագիտական միջոցները, որպէսզի յետագային կանխարգիլուի ուրիշներու այսպիսի վիրաւորական յայտարարութիւններ ընելը՝ հայ ժողովուրդի յիշողութեան դէմ Հայաստանի տարածքին մէջ:

Հայաստանի մօտ Բրիտանիոյ դեսպանուհի Տիկին Թորտա Աբբօթ-Ուաթ իրապարակաւ ներողութիւն խնդրէ իր յայտարարութեան համար ու պաշտօնապէս ետ առնէ իր խօսքը. իսկ թէ մերժէ, դեսպանուհին անբաղձալի անձ յայտարարուի Հայաստանի Հանրապետութեան սահմաններուն մէջ:

նախկին Խորհրդային Միութեան թէ այլ երկիրներու հայութեան, ուրկէ Մելգոնեան կը յաճախեն ծագումով հայ պարման-պարմանուհիներ: Քանզի հայեցի կրթութեամբ միայն կարելի է հայ նորահաս սերունդները էպպես հաղորդ դարձնել իրենց մայրենի լեզուին, մշակոյթին ու պատմութեան եւ անոնց ներշնչել հայ մնալու գիտակցութիւնը եւ յանձնառութիւնը: Հոս ընդգծելու ենք նաեւ, որ Եւրոպայի ամբողջ տարածքին՝ միակ հայկական կրթարանը Մելգոնեանն է, եթէ նկատի չառնենք վերջերս Ֆրանսայի մէջ հիմնուած դպրոցը:

Հետեւաբար, նման որոշում մը լուրջ հարցականի տակ պիտի դնէր սկզբունքներն ու նպատակները Բարեգործականի ղեկավարութեան, որ տասնամեակներ շարունակ ստանձնած է Մելգոնեանի յանձնաճումը, հաւատարիմ մնալով հայապահպանման եւ հայակերտման իր նուիրական առաքելութեան:

Արդ, Եւրոպահայերու Համագումարը սրտագին կոչ կ'ուղղէ Գ. Բ. Ը. Միութեան ղեկավարութեան, որ ամբողջական պատասխանատուութեամբ անգամ մը եւս վերաբնէ իր որոշումը՝ ի խնդիր համայն սփիւռքի գերագոյն շահերուն: Հակառակ պարագային, նման որոշումի մը գործադրումը պատմական շեղում մը պիտի նկատուի Բարեգործականի առաքելութենէն, անոր ենթադրած ամենածանր հետեւանքներով:»

Մելգոնյանցի

Աթաթուրքը թեւ շատ հայերի կոտորեց, բայց հայկական դպրոց չփակեց: ՀԲԸՄ-ի ղեկավարներից ՊԱՀԱՆՁՈՒՄ ԵՆՔ անհապաղ հետս կոչել իրենց որոշումը, այլապես նրանց սպասում է ազգի դավաճանների անփառունակ վախճանն ու հայ ժողովրդի հավերժական նզովքը:

Մարտի 16-ին հրապարակած երկրորդ յայտարարությամբ ՀԲԸՄ Կենտրոնական վարչությունն արդեն «ավետում էր»՝ որոշվել է վաճառել ՄԿՀ տարածքը, իսկ ստացվելիք գումարի հաշվին, ի միջի այլոց, Նիկոսիայում հիմնադրել հայագիտական հետազոտությունների կենտրոն: Սա նույնքան վտանգավոր ու ազգադավ ծրագիր է, որքան ՄԿՀ փակումն ու վաճառքը: Մենք շատ լավ գիտենք, որ ենթադրյալ «հայագիտական կենտրոնը» ծառայելու է հայագիտության ամերիկյան «դպրոցի» հակահայկական աշխարհաքաղաքական ծրագրերին:

Խմբագրություն

Եւրոպահայերու Համագումար, Բրիւսէլ, Մարտ 16, 2004

ԿՐԿԻՆ ՎՏԱՆԳՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ



Նիկոլ Աղաբաբյան. *Իմ սեր, իմ կյանք, իմ երազ*

Որքան կարողում, տեղեկություններ են ստանում, այնքան սարսափում ու սարսափով են լցվում. մեր այսքան փոքր մնացած երկրի վրա քանի-քանի թշնամու աչք կա: Քանի-քանի թշնամի երկրների ու ժողովուրդների մարդատյաց ծրագրեր են գործադրվել հայ ժողովրդի ու Հայաստան երկրի նկատմամբ: Ամենից սարսափելին այն է, որ հայակործան ծրագրերը հիմնականում իրագործվել ու իրագործվում են հայազգիների միջոցով: Այսօր մենք ունենք ձեռքբերումներ, որոնց մասին 100-200 տարի առաջ երազում էինք՝ ազատագրված հող, պետություն, պետական լեզու, պետության նախագահ և բոլոր այն անհրաժեշտ նախադրյալները, որոնք հարկավոր են ինքնիշխան երկիր ունենալու համար:

Սակայն ես՝ նկարիչս, գրիչ վերցրեցի այն ժամը մտահոգությամբ, որ այսօր նորից մտնում ենք փակուղի, որը մեծ վտանգ է պարունակում մեր ժողովրդի և երկրի համար: Ես իրավունք չունեմ չհավատալու յուրաքանչյուր հայրորդու: Սակայն այն, ինչ կատարվում է մեր շրջապատում, մեր երկրում, հատկապես հայրողիների իմացությամբ և նրանց ձեռքով, դավաճանություն և ազգադավություն չկոչել չեմ կարող: Հայ ժողովուրդը և հայազգի մտավորականները (բոլորիս հայտնի դարձավ) ունեն միաբանվելու կարողություն, որի արդյունքում էլ ունեցանք այսօրվա ձեռքբերումները: Ավելի քան համոզված եմ, որ այսօրվա «զայլաշխարհի» մեջ, ինչքան էլ շատ լինեն թշնամիները և հզոր, կա ճանապարհը, որը կբերի մեր և մեր պապերի երազած հայրենիքի ստեղծմանը: Պարզապես հարկավոր է գտնել այն: Կարծում եմ՝ հասունացել է ժամանակը, որ յուրաքանչյուր սրտացավ հայրորդի հնարավոր ամեն ինչ ներդնի հայրենիքակերտ գործին: Նախ՝ մի կողմ թողնելով անձնական հակասությունները՝ հարկավոր է փնտրել ու գտնել միմյանց, ապա փորձել զալ մեկ ընդհանուր հայտարարի: Թշնամին գործել է, շատ է, և գործում է անընդ-

հատ: Ուրեմն՝ հարկավոր է երբեք չթուլանալ, և ուղղորդված աշխատանք տանել՝ առանց հոգնության:

Ես քաղաքական գործիչ չեմ և չեմ կարող հաստատապես մեր երկրի դեկավարների մեջ թշնամիներ հայտնաբերել ու մատնանշել նրանց: Նրանց մեջ կարող են լինել նաև նվիրական հայրողիներ: Մենք ունենք նաև պետական անվտանգության մարմիններ: Ուզում եմ հավատալ, որ նրանք կատարում են իրենց մասնագիտական պարտականությունները հանուն հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության: Շատ եմ ուզում հավատալ, որ մեր երկրի նախագահը հասկանում է, թե ինչ է կատարվում թե՛ աշխարհում և թե՛ Հայաստանում: Ու եթե

մտավորականության ուսերին. միմյանց աջակցությամբ գտնել ելքը և թույլ չտալ, որ մեր հավերժական թշնամիները նորից ոչնչացնեն այն, ինչ որ գոնե այսօր ունենք: Եթե նախկին ծախված քաղաքական այրերը կորուսանեցին մեր և՛ հայրենիքը, և՛ հայրենիքի հողերը, և՛ մտավորականությամբ, այսօր էլ քաղաքական կոչված այրերը, որոնց «քաղաքականությունը» սեփական գրպանից այն կողմ չի անցնում, նորից նույնն են անում: **Եթե մենք իսկապես ունենք մտավորականություն, որի մասին այսքան խոսում ենք, ապա հարկավոր է գործել և գործել միաբան:** Ուզում եմ հավատալ, որ մենք ունենք և՛ առողջ ժողովուրդ, և՛ մտավորական: Գործելու ժամանակն է, սիրելիներս: Այո՛, շատ կառույցներ, շատ շինություններ ավարտին հասցվեցին, և շարունակվում են: Այս ամենը ձեռքբերումներ են, որոնք չտեսնել, չնկատել չի կարելի, սակայն Հայաստանն օտարվում է հենց հայ ժողովրդից: Ժողովուրդն աստիճանաբար դառնում է կրավորական դիտորդ այն բոլոր ձեռքբերումների, որոնք թվում է՝ մեր երկրինն են: Ամենուրեք իշխող դիրքեր ունեն կան այլազգիները, կան օտարամուկները: Եվ հայ ժողովուրդը հայտնվել է չեզոք դիտորդի դերում: Ուրեմն՝ ի՞նչ է ստացվում: Այն, ինչ ցանկանում էին օտարները՝ Հայաստան՝ առանց հայերի: Համոզված եմ, որ այն նորաթուխ, մեծահարուստ հայերը, ովքեր չեն նպաստում և չեն փորձում նպաստել հայրենիքի՝ հայերեն դեմքով բարգավաճմանը, վաղն արժանանալու են նույն այն ճակատագրին, որ ունեցան կորուսանված Արևմտյան Հայաստանի մեծահարուստները: Համոզված եմ, որ կան հայրողիներ, ովքեր պատրաստ են իրենց միջոցներով նպաստել հայեցի հայրենիքի բարգավաճմանը: Սակայն, ինձ համար անհասկանալի է՝ ինչո՞ւ են հապաղում, ինչո՞ւ են սպասում. գործելու ժամանակն է այլևս...



Չամբեղուրի վանքից

կարիք լինի հայրենիքակերտման համար կանգնել նախագահի կողքին, ես առաջինների շարքում կլինեմ: Սակայն այն, ինչ կատարվում է այսօր, իմ կարծիքով, կրկնությունն է անցյալ դարասկզբի Առաջին հանրապետության ճակատագրի: Խիստ դժգոհելով մեր նախնիներից, որ թողել են մեզ դժբախտ ու դաժան ժառանգություն, չեմ ցանկանում, որ մեր եկող սերունդն էլ արժանանա նույն ճակատագրին: Եվ, կարծում եմ, որ այսօր մեծ առաքելություն է դրված հենց հայ

Նիկոլ Աղաբաբյան
Գեղանկարիչ

«ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱՑ»

Ձրույց «Սփիւռք» հանդեսի գլխավոր խմբագիր **Յովսէփ Արթիսյանի** հետ

- Որո՞նք էին, ըստ Ձեզ, հայ ազգային-ազատագրական պայքարի նորագույն փուլի սկզբնավորման նախադրյալները:

- Հիմնական նախադրյալն աննպատակ հայապահպանությանը հայկական իրականության քարացածությունն էր: Մեկ կողմեն էտրոհրդային Հայաստանը՝ իր սահմանափակ իրավիճակով, մյուս կողմեն՝ հայկական սփյուռքը՝ իր գլխավորույս վիճակով:

20-րդ դարու 50-ական թթ. վերջավորության սփյուռքահայ իրականության մեջ նոր-նոր սկսած էր դրսևորվիլ անկախ մտածելակերպը գործի վերածելու գաղափարը՝ հայկական ավանդական կուսակցություններուն զգվտոցներեն դուրս տեսնելով հայոց պահանջատիրության աշխատանքը: Միևնույն ժամանակ էս. Միության հետստալինյան ձևհալն սկսած էր բարեխառնել այնտեղի քարացած մտայնությունը՝ ազգային իրավունքի սահմանափակ ու շրջված հասկացողությունը բարեփոխելու գծով: Իսկ նույն դարուն 60-ական թթ. սկսած նոր մտածելակերպի դրսևորումը, Հայ դատի հետապնդման միասնական աշխատանք տանելու առնչությամբ, իր գազաթնակետին կհասներ 1965թ. Հայոց ցեղասպանության 50-ամյակին նշումով, որմեն ետք կու գար մեն հուսախաբությունը:

Ազատագրական այլ պայքարներու օրինակներեն օգտվելու և նույնիմքն հայկական անցյալի պայքարին քննական վերարժևորման առիթ կու տար այն իրողությունը, որ կսկսեր գոյառնել խմբակային աշխատանքներու փորձերով քիչ մը ամեն մեկ հայազաղութի մեջ, մինչև 1973թ. Գուրգեն Յանիկյանի արձակած փամփուշտներով սկսած նորագույն ազգային ազատագրական պայքարը:

- Ո՞րն էր այդ պայքարի նպատակը:

- Ազատագրել Արևմտահայաստանի բռնագրավված հայկական հողերը Թուրքիո լուծեն և այլ հայկական հողատարածքներու հետ միացնելով (էս. Հայաստան, Նախիջևան, Արցախ և Ջավախք)՝ վերականգնել հայոց ազգային պետականությունը՝ ցաքուցրիվ դարձած հայության հոն մեկտեղումով: Նակ վնասուց հատուցում ստանալու պահանջք դնել Թուրքիայեն՝ Հայոց ցեղասպանության իբր հետևանք հայության կրած մարդկային ու նյութական կորուստներուն դիմաց:



- Ինչպե՞ս կրնութազրեիք պայքարի ռազմավարությունը և մարտավարությունը:

- Մարտավարությունը զինյալ պայքարի (գործողություններու) միջոցավ Հայ դատը վերակենդանացնել և միջազգային բեն հանելն էր, իսկ ռազմավարությունը հայության բախտակից և աջակից ժողովուրդներն ու պետությունները ի նպաստ հայոց դատին շահիլն էր՝ մինչև նպատակի իրականացումը:

- Ի՞նչ ձևեր ու մեթոդներ որդեգրեց պայքարը:

- Հիմնականորեն զինյալ և քարոզչական, բայց հայկական նեղ շրջանակեն դուրս գալով, բազմալեզու իրատարակություններով և այլ տեղեկատվական-քարոզչական ձևեր օգտագործելով՝ քաղաքական արժևորում տալով զինյալ գործունեության:

- Ի՞նչ էր գրված պայքարի դրոշին: Ի՞նչ փոփոխություններ է կրել հայ ազգային-ազատագրական շարժման կարգախոսը ժամանակի հոլովությում՝ աշխարհաքաղաքական զարգացումներին զուգընթաց:

- Նկատի ունենալով, որ հայկական նորագույն ազատագրական պայքարին հառաջապահ ուժը Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակն էր (ՀԱՀԳԲ/ԱՍԱԼԱ), անոր պաշտոնաթերթ «Հայաստան»-ի կողքին վրա միշտ կային այս կարևորագույն լուրուզները (կարգախոսները). «Կեցցե՛

իրաւագրկուած ժողովուրդներու յեղափոխական միասնականութիւնը» և «Զինեալ պայքարն ու քաղաքական ճիշդ գիծը ուղին են Հայաստանի», որոնց միջև կար ամբողջական Հայաստանի քարտեզը՝ մեջտեղը բռուցնքով դեպի վեր բռնված հրացանով մը (որ միևնույն ժամանակ միջազգային հեղափոխական-ազատագրական շարժումներու խորհրդանիշն էր):

Գալով հարցումին երկրորդ բաժնին վերջին տասնամյակին և անկե քիչ մը ավելի ժամանակամիջոցին, աշխարհի վրա ի՞նչ երևույթ կա, որ փոփոխություն չէ կրած: Նույն ծիրին մեջ եթե փորձենք բնորոշել հայկական ազգային-ազատագրական պայքարը, զայն Արցախյան ազատապայքարով փոխարինելու փորձերը ճիշտ չեն, նկատի առնելով, որ Արցախի հարցը այդ պայքարին մեկ մասնիկն է (ինչպես որ նշված է նախապես): Իսկ անգիր փոփոխությունը այդ կարգախոսին այն է, որ հողային արդար պահանջատիրությունը փոխարինված է Հայոց ցեղասպանության միջազգայնորեն ճանաչման հարցով, որ պարզապես մարտավարական միջոցներեն մեկն էր պայքարին և ոչ թե ռազմավարական նպատակ մը: Ցավ ի սիրտ, այսօր հայոց պետականության առկայության իրողությամբ, հայկական ազգային-ազատագրական պայքարը կասեցված և վերածված է իշխանաաթոռային գրավման ընտրապայքարային լրծմանշուրթն տնտեսական բարելավման փուլ լրզունգայնության:

Իսկ համաշխարհայնացման այս ընթացքին մեջ, Հայաստանի հետանկախացման ժամանակին, սփյուռքահայության բոլոր ուժերը հայրենիքի վերականգնման մղելու շլացուցիչ լրզունգայնությամբ տարված, հայկական դասական կուսակցությունները մոռցած են հայկական ազատագրական պայքարը և Հայաստանի մեջ աթոռակռիվով ու իշխանատենչությամբ զբաղած են՝ իրենց իսկական դիմակները բացահայտելով, ի մասնավորի ՀՅԴ-ն, որ, ինչպես միշտ, հառաջատարի դերով մեջտեղ կուգա՝ ամեն մեկ ազգային նախաձեռնություն փանջուևիաբար քանդելու համար...

- Ինչպես ամեն մի շարժում՝ հայ ազգային-ազատագրական պայքարն էլ ունի իր շարժիչ ուժը: Ո՞րն է այն արդի փուլում:

- Հայաստան վերադարձի գաղա-

փարն է շարժիչ ուժը, բայց ոչ թե այսօրվան մասնիկ Հայաստան-Արցախը միայն, այլ ամբողջը, այն, որ հայության օրրանն է, որուն մեծ մասը թուրքի լուծին տակ բռնագրավված կմնա:

- Պայքարը հայրենիքում և սփյուռքում:

- Կազմակերպվիլ բոլոր միջոցներով, ինչ որ կտեսնենք թե այսօրվան իրողականությամբ բացակա է:

- Ի՞նչ խոչընդոտներ և դժվարություններ հաղթահարվեցին Հայրենիքում և արտերկրում:

- Դասական-ավանդական քարացած մտածելակերպերու և գործելաձևերու արգելքները բավականաչափ հաղթահարել է տեղ տակավին կհաղթահարվի հիմնական խոչընդոտը, որ անտեղյակությունն է կամ, ավելի ճիշտ՝ ապատեղեկատվությունը, որ կշարունակվի հայկական ազատագրական պայքարին դեմ՝ զայն ներկայացնելու համար իբր ծախողված կամ անարդյունք գործունեություն՝ ջուր լեցնելով հայոց զանազան տեսակի թշնամիներու հակահայ ջրաղացներուն:

- Որո՞նք են պայքարի իրական և բարոյական հաղթանակները:

- Իրական հաղթանակը հայուն հաղթանակ տանելու հավատքին վերականգնումն է՝ դարավոր պարտություններն և կորուստներն ետք՝ առայժմ դրսևորված թուրքի և անոր մանկավիթի Ազրայեյճանի գազազածությամբ: Իսկ բարոյականն այն է, որ համայն հայության համար կենդանի օրինակը կա, որ, ոտքին տակ հող չունենալով հանդերձ, կարելի է պայքարիլ և արդար իրավունքներ պահանջել:

- Իսկ կորուստներ՞ը...

- Արևմտահայաստանն ու ցեղասպանության զոհ միլիոնավոր հայոցն են ետք բուռ մը նվիրյալ հայորդիներու նահատակությունը, բայց ոչ թե պարապ տեղը, այլ անոր դիմաց ձեռք բերված ազգային հավատք և արժանապատվություն ու Հայրենիքի մեկ մասին վերադարձը իր ժողովուրդին (ԼՂՀ և հարակից ազատագրված տարածքներ - խմբ.) ուրեմն կորուստներու նվազագույն չափով մեծագույն ձեռքբերումներ, որ հազվագյուտ է հայոց պատմության գոնե վերջին հարյուրամյակներուն ընթացքին:

- Ինչպե՞ս գնահատեց միջազգային հանրությունը հայ ազգային-ազատագրական պայքարի արդի փուլի ձեռքբերումները (արժե՞, որ մենք միշտ կախման մեջ մնանք այլոց կարծիքից և հարմարվենք նրանց պարտադրած սոմալենենտարիզմին կամ երկակի ստանդարտների քաղաքականությանը):

- Միջազգային հանրության կողմն սկիզբը իբր ահաբեկչություն բնորոշ-

ված պայքարը (որ իր թուրքակներն ուներ և ունի հայ իրականության մեջ), հետագային շատերու կողմն արդարացվեցավ, երբ հստակացան պայքարին դրդապատճառներն ու նպատակները: Ինչ կվերաբերի հարցման երկրորդ մասին, ինչպես կհստականա այս հարցադրույցեն, ազգային առումով որևէ շահ ձեռք բերելու նախապայմանը անկախ ըլլալն է և անկախ մոտեցում ունենալը՝ հարցերուն նկատմամբ: Փորձը ցույց կուտա, որ թեև դժվար է այդ ուղին, բայց հարգանք պարտադրող և, ամենակարևորը, արդյունավետ:

- Ինչպիսի՞ն է, Ձեր կարծիքով, մեր ազգային երազանքների իրականացման ապագան:

- Հարցադրումն ավելի քանի մը հաստատումներ կուզեն ընել: Խորհրդային Հայաստանի անկախացմամբ և Արցախի ազատագրմամբ, ճիշտ է, որ հայոց հույսերը պահ մը թևավորվեցան՝ ազգային հեռանկարներու իրականացման գծով, բայց անոր հաջորդեց ազգային հուսախաբությունը, որովհետև ազգովի պատրաստ չէինք ընկալելու մեզի շնորհվածը և լավագույնս օգտվելու անկե, որ հետևանք էր հայկական զանազան ղեկավարությանց՝ տասնամյակներով այս գծով որևէ մեկ շոշափելի աշխատանք չտանելուն (սա չի նշանակեր, որ, ուրեմն, պետք է վերադառնանք անցյալին, ինչպես որ կփորձեն պատճառաբանել ու արդարացնել շատեր):

Դժբախտաբար, հայության մեջ բույն դրած այնտերը Հայաստանի նորանկախ պետության մեջ պետական մակարդակի վրա դրսևորվեցան, երբ երկրորդ անգամ ցնցումի ենթարկվեցավ հայաստանահայությունը, ազատականացման այնպիսի խեղաթյուրված ձևով մը, որ հստակ էր, թե ինչի կմիտեր (այսօրվան իրավիճակը լավագույն փաստն է ըսվածին):

Առաջին ցնցումն ալ եղած էր 20-րդ դարու 20-ական թվականներուն, երբ ցեղասպանութենն մազապուրծ և ներքին ու արտաքին պատճառներով, բայց մանավանդ առաջինին իբր հետևանք, ծախողած հեղափոխության մը իբրև արդյունք՝ կիսատ-պռատ հայրենիքի մնացուկ մը հազիվ մնացած, սովամահ և հիմնականորեն ավատապետական կարգերով առաջնորդվող հայության ազատական այլ հանրապետություն մը կպարտադրվեր. անկե ետք ալ բազում



փորձություններով կպարտադրվեր ընկերվարության անվամբ բռնատիրության ամենատոկալի ձևերեն մեկը, որմն ֆիզիկական զոյապահպանությամբ դուրս գալն ալ ազգային շահ կսեպվեր հայության կողմն:

Ինչո՞ւ կատարվեցան այս մատնանշումները՝ անկախ տեսանկյունն, առանց կողմնակալության: Պարզապես ցույց տալու համար, որ մեզի նման փոքր ժողովուրդի մը ինչպիսի մահացու ցնցումներ տրված են պատմական կարճ ժամանակամիջոցի մը մեջ, որուն արդյունքը եղած են նախկին ստրկատիրական մտածելակերպին վրա ավելցված հոգեմաշունի հետցնցումները, որոնց արդյունքն ալ մոտիկ անցյալին և այսօրվան բազմամիլիոնանոց արտագաղթն է անկախացած Հայրենիքի մնացուկեն ու անոր շրջակա երկիրներեն՝ ոտնակոխելով ամեն տեսակի պայքարի զոհողությամբ ձեռք բերածը:

Այս մատնանշումներն ու մտորումները կատարվեցան նաև՝ մտածել տալու համար, թե մեր ազգային զոհողությունները պետք է արդյունավետ ըլլան և ազգային շահին հօգուտ ու ոչ թե անոր ի վնաս հետևանք ունենան: Պատմութենն դաս քաղենք, որպեսզի խուսափինք սխալներն, որոնք կրնան ճակատագրական ըլլալ ասկե ետք:

Բեյրութ, 2004թ., փետրվար

(Հարցազրույցը տեղի է ունեցել գրավոր հարցադրումների հիման վրա: Խմբ.)

1932Թ. ԻՐԱՆ-ԹՈՒՐԷԻԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԱՂՏՆԱԶԵՐԾՈՒՄԸ ՀԱԿԱՍՈՒՄ Ե ԻՒՅ ԸՆԿՆԵՐԻՆ



Էմմա Բեգիջանյան


1918-20թթ. Անդրկովկասում տեղի ունեցող բուռն իրադարձություններում, իր ռազմավարական մեծ նշանակությամբ, ուրույն տեղ ու դեր է ունեցել Նախիջևանը, որի ճակատագիրը որոշվեց 1921թ. Խորհրդային Ռուսաստան-Թուրքիա «Բարեկամության և եղբայրության պայմանագրի» շրջանակներում: Նախիջևանը, Թուրքիայի պահանջով, իբրև ինքնավար մարզ, դրվեց Ադրբեջանի խնամակալության ներքո. վերջինս իրավունք չունեի խնամակալությունը զիջել երրորդ պետության: Պայմանագիրը 1922թ. հունվարի 25-ին հաստատվեց Նախիջևանի խորհուրդների առաջին համագումարում, երբ ձևավորվեց նաև մարզի գործադիր կոմիտեն, իսկ 1924թ. Նախիջևանը վե-րածվեց Ադրբեջանի կազմում ինքնավար հանրապետության:

Խորհրդային Միության փլուզումից հետո էլ Նախիջևանը դարձավ կարևոր գործոն՝ տարածաշրջանի և դրանից դուրս գտնվող տերությունների փոխհարաբերություններում: Ինչպես հայտնի է, 1993-94թթ., երբ Թուրքիայում պանթուրքիստական զգացմունքները «խիստ բորբոքվեցին», բնակչությունը երկրի ղեկավարությունից պահանջեց օգնել Ադրբեջանին: Թուրքիայի պաշտոնական շրջանակները հայտարարեցին, թե 1921թ. Խ. Ռուսաստան-Թուրքիա պայմանագիրը վերջինիս դեռևս հնարավորություն է տալիս, անհրաժեշտության դեպքում, ռազմական աջակցություն ցուցաբերել Նախիջևանին:

Հայտարարությունն արժանացավ Մոսկվայի խիստ հակազդեցությանը. ԱՊՀ զինված ուժերի հրամանատար գեներալ Շապոզնիկովը Թուրքիային նախազգուշացրեց, որ յուրաքանչյուր ռազմական միջամտություն վճռական հակահարված կստանա: Նախազգուշացումը Թուրքիայում զսպեց կրքերը: Միաժամանակ Մոսկվան հայտարարեց, որ 1921թ. Կարսի պայմանագրով, «անհրաժեշտության դեպքում, Թուրքիայի միջամտությունը» նախատեսված է: Այս առնչությամբ ավելացնենք, որ, ինչպես նշեցին միջազգային ՁԼՄ-ները, այդ ընթացքում զաղտնագերծվեց հիշյալ պայմանագրի կարևոր մի դրույթ, որի համաձայն՝ Նախիջևանում կացության փոփոխության դեպքում Թուրքիային իրավունք է վերապահվում լոկալ տեսակետ հայտնելու: Սակայն Թուրքի-

այի նախագահ Թուրգութ Օզալը, հեռանալով այդ սահմաններից, այն մեկնաբանեց որպես ռազմական միջամտության իրավունք: Տվյալ ժամանակահատվածում ընդհուպ հնչեցին տեսակետներ առ այն, որ Նախիջևանը կարող է դառնալ Ռուսաստանի և Թուրքիայի շահերի բախման կիզակետ:

Նախիջևանը դարեր շարունակ կարևոր գործոն է եղել նաև Իրան-Թուրքիա փոխհարաբերություններում, որոնք առնվազն մինչև 1926թ. թերևս թշնամական կարելի է որակել: Իրանում ծագումով ադրբեջանցի Սեֆևիդների իշ-



խանության (1499-1736թթ.) օրոք, իրանա-օսմանյան պատերազմների ընթացքում, երբ երկու երկրների միջև վաղեմի թշնամանքն առավել ընդգծված բնույթ էր կրում, Նախիջևանը վերածվել էր թշնամական գորքերի պատերազմական գործողությունների թատերաբեմի և բազմիցս ձեռքից-ձեռք անցել: Այս առնչությամբ թերևս բնութագրական է Շահ Աբասի մի առիթով ասածը. «Քրիստոնյայի կոշիկի պայտը կգերադասեն օսմանյան մեծագույն մարդկանց»:

1826-28թթ. ռուս-իրանական պատերազմների ժամանակ ռուսական բանակը գրավեց Նախիջևանը, ապա Թուրքմենչայի պայմանագրով այն անցավ Ռուսաստանի տիրապետությանը, իսկ 1849 թվականից վարչականորեն ենթարկվում էր Երևանին:

1918թ. թուրքական ուժերը ներխուժեցին Նախիջևան: Նույն թվականին այստեղ ենթափանցեցին նաև անգլիական ուժերը: Ըստ իրանական աղբյուրների՝ օտարերկրյա ուժերի դրդ-

մամբ հայերի և մահմեդականների միջև տեղի ունեցան բախումներ: Բրիտանացիները, որոնք ջանք չէին խնայում Իրանին Անդրկովկասից հեռացնելու համար, շահագրգիռ էին Նախիջևանի հայկական ենթակայությամբ: Սա այն դեպքում, երբ Արցախի հարցում (և ընդհանրապես) անգլիացիներն այդ ժամանակահատվածում պաշտպանում էին (թերևս այսօր էլ պաշտպանում են) Ադրբեջանի շահերը՝ ընդդեմ Հայաստանի: Պանթուրքական նկրտումների իրագործման տեսանկյունից Հայաստանի և Իրանի միջև շրջափակված, ռազմավարական խիստ կարևոր նշանակությամբ Նախիջևանը Թուրքիայի պահանջով, ինչպես նշվեց, ի վերջո մտավ Ադրբեջանի կազմի մեջ: Այնուհետև Անկարան իր ջանքերը կենտրոնացրեց Նախիջևանի հետ ընդհանուր սահման ունենալու հարցի լուծման վրա:

1925թ. դեկտեմբերի 13-ին, Մեծ Բրիտանիայի գործուն աջակցությամբ, Իրանում իշխանության եկավ Փեհլիների հարստության հիմնադիր Ռեզա շահը, որը հիմնովին փոփոխեց Թուրքիայի նկատմամբ Իրանի քաղաքականությունը՝ ձգտելով երկու երկրների փոխհարաբերություններում տիրող բազմադարյա փոխադարձ թշնամանքը և անվստահությունը վերածել բարեկամական և բարիդրացիական կապերի: Բացառված չէ նաև, որ նման քաղաքականությունը որդեգրելու հարցում իր ուրույն դերն է ունեցել Լոնդոնը: Այս բնագավառում Ռեզա շահի առաջին քայլը 1926թ. ապրիլի 22-ին երկու երկրների միջև «Բարեկամության և փոխադարձ անվտանգության պայմանագրի» ստորագրումն էր՝ կազմված 11 հիմնադրույթից (առնվազն 1808թ. ի վեր սա Թեհրանի և Անկարայի միջև առաջին նման քայլն էր):

Պայմանագիրը կից արձանագրությամբ գետնից էր «Իրանի և այլ երկրների միջև կնքված պայմանագրային փաստաթղթերի» բազմահատորյակի 5-րդ հատորի «Թուրքիա» բաժնում: Այն հրատարակել է Իրանի ԱԳ նախարարության «Քաղաքական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոնը», 1992թ.: Համաձայն 1984թ. փետրվարի 27-ին Իրանի խորհրդարանում հաստատված օրենքի՝ ԱԳ նախարարությանն իրավունք է վերապահվում ամբողջությամբ հրապարակել Ղաջարնե-

րի և Փեիկիների իշխանության օրոք այլ երկրների հետ ստորագրված փաստաթղթերն ու պայմանագրերը: Միաժամանակ նշվում է, որ փաստաթղթերը հրապարակելիս պետք է հաշվի առնվեն Իրանի Իսլամական Հանրապետության շահերը. հրապարակումը չպետք է վնասի երկրի տարածքային ամբողջականությանը, ինքնիշխանությանը և ազգային անվտանգությանը: Ըստ երևույթին, հենց նշյալ հանգամանքի բերումով է, որ թուրք-իրանական սահմանների վերաբերյալ 1929 և 1932 թվականների համաձայնագրերի (րովանդակությունը ներկայացված չէ (դրանց անդրադառնալու ենք ստորև)). լոկ նշվում է, որ դրանք պահպանվում են ԱԳ նախարարության արխիվներում: Բացի այդ, նույն ձևով են ներկայացված հետագայում սահմանների հարցերի համատեղ գե-



Ռեզա շահ

ր ա գ ու լ յ ն հանձնաժողովի բոլոր՝ 14 նիստերի արձանագրությունները:

Հիշյալ պայմանագրի ստորագրմամբ՝ երկու երկրների միջև առաջին անգամ հաստատվեցին

նաև դիվանագիտական կապեր, քաղաքականություն, որի շրջանակներում Ռեզա շահն առնվազն երկրի անվտանգությանը հակասող քայլ կատարեց՝ ընդառաջ գնալով Քենալի ցանկություններին՝ ի նպաստ Անկարայի պանթուրքիստական երազանքների իրականացման:

1929թ. ապրիլի 9-ին կնքվեց թուրք-իրանական սահմանների կայունացման մասին համաձայնագիր: Սակայն 1930թ. հունիս-հուլիս ամիսներին, Թուրքիայի գրաված հայկական տարածքների՝ Իրանի սահմանամերձ շրջանի քրդերն ապստամբեցին, իսկ Անկարան հայտարարեց, որ քրդերի ապստամբության լիակատար ճնշմանը խոչընդոտում է ապստամբների նահանջը՝ դեպի Իրանի քրդաբնակ վայրերը: Այս հանգամանքը, ըստ պաշտոնական աղբյուրների, բացասաբար էր անդրադառնում երկու երկրների փոխհարաբերությունների վրա, ուստի, խնդիրը կարգավորելու նպատակով, կողմերը սկսեցին բանակցություններ վարել: Թուրքիան, չնոռանալով պանթուրքիստական նկրտումները, ոչ զուտ հանուն դրանց իրագործման հայտարարեց, որ քրդերի ապստամբության ճնշումը և երկու երկրների սահմանների անվտանգու-

թյունը կապահովի այն դեպքում, եթե քրդաբնակ ողջ հատվածը Թուրքիայի վերահսկողության տակ լինի, և ըստ այդմ էլ առաջարկում է տարածքների փոխանակում՝ Իրանի հյուսիս-արևմտյան սահմանամերձ, ռազմավարական հույժ կարևոր նշանակությամբ քրդաբնակ տարածքների (որոնց մեջ ընդգրկվում էին Փոքր Սասիսի ստորոտը և Արաքսի առափնյա շրջանից մի հատված) փոխարեն առաջարկելով Ուրմիա լճի արևելյան հատվածում թուրքական երկու, թերևս ոչնչով աչքի չընկնող հողատարածքներ: Ռեզա շահը, հանուն Թուրքիայի բարեկամության և, ինչպես նրա կողմնակիցներն էին պնդում, այդ երկրի տարածքով դեպի Եվրոպա ելք ունենալու նպատակով (ինչին այսօր Հայաստանում ձգտում են շատերը), կատարեց նման գործարք, գործարք, որի շնորհիվ Թուրքիան Նախիջևանի հետ 12 կմ երկարությամբ ընդհանուր սահման ունեցավ (այդ սահմանով թուրքական բանակը անարգել ելումուտ է արել մինչև հիշյալ համաձայնագիրը - խմբ.): Իրանում հաստատված բացարձակ բռնապետական իշխանության պայմաններում, թեև լուրջ ընդդիմության դրսևորումը գրեթե անհնար էր, այսուհանդերձ, գործարքին դեմ կարծիքներ հնչեցին, որոնք հաշվի չառնվեցին: Եվ ահա 1932թ. հունվարի 23-ին Թեհրանում ստորագրվեց Իրան-Թուրքիա պայմանագիրը՝ երկու երկրների սահմանագծերի փոփոխության վերաբերյալ, որը, ինչպես նշվեց, գաղտնագերծված չէ և գործում է առ այսօր: Այսպիսով՝ Իրան-Թուրքիա փոխհարաբերությունների «մեղրամսին» Իրանի բռնապետը «հանուն սիրո», ի վնաս երկրի անվտանգության, աններելի, ճակատագրական սխալ թույլ տվեց: Ի հետևանք խնդրո առարկա գործարքի՝ 1932թ. նոյեմբերի 5-ին Անկարայում կողմերն ստորագրեցին բարեկամության համաձայնագիր, որտեղ նշվում է, որ երկու երկրների միջև հաստատվում



Ռեզա շահը Թուրքիայում

են անասան հաշտություն և ջերմ բարեկամություն:

1934թ. հունիսի 16-ին Աթաթուրքի հրավերով Թուրքիա այցելեց Ռեզա շահը: Նա երկրի առաջին ղեկավարն էր, որ այցելում էր Թուրքիա: Նրան, բնակաբար, ի նշան երախտագիտության, ընդունեցին մեծ շուքով: Այցն էլ ավելի

սերտացրեց Թեհրան-Անկարա փոխառնչությունները. ստորագրվեցին բազմաթիվ տնտեսական, քաղաքական և մշակութային համաձայնագրեր:

Այսուամենայնիվ կարելի է նշել, որ թուրք-իրանական փոխհարաբերություններում «մեղրամսի» սահմանափակվեց Ռեզա շահի իշխանության ժամանակահատվածով, քանզի նրա որդու՝ Մոհամեդ Ռեզա շահի իշխանության օրոք, թեև երկու երկրներն էլ նույն ճամբարում էին, ավելին՝ CENTO ռազմաքաղաքական և RCD (Շրջանային բարեկարգման համագործակցություն) կազմակերպությունների անդամ էին, բայց և այնպես, Թեհրան-Անկարա կապերը դեռևս հեռու էին սերտ բարեկամական կոչվելուց: 1975թ. Մոհամեդ Ռեզայի այցը Թուրքիա գնահատվեց իբրև անհաջող և տապալված: Հիրականացան CENTO-ի շրջանակներում ծրագրված մի շարք նախագծեր, այդ թվում՝ Թավրիզ-Տրապիզոն և Ուրմիա-Ալեքսանդրետ (Իսկենդերուն) երկաթգծերի կառուցման նախագծերը, որոնցով առավելապես շահագրգիռ էր Իրանը: Բացի այդ, Թուրքիան 1975թ. տասնապատկեց Իրան-Թուրքիա-Եվրոպա ավտոճանապարհների տարանցիկության գները՝ հասցված վնասները փոխհատուցելու պատրվակով:



Մուստաֆա Քենալ

Փաստորեն Ռեզա շահի՝ Իրան-Թուրքիա սահմանների մման անհեռատես փոփոխությանը համաձայնելու պատճառով սպառնալիքի տակ կարող է հայտնվել Իրանի անվտանգությունը, եթե արցախյան հիմնահարցը «լուծվի» տարածքների փոխանակման տարբերակով: Եթե Թուրքիա-Իրան սահմանագիծը փոփոխության չենթարկվեր, Հայաստանի սահմանների հնարավոր փոփոխությամբ այսօր հազիվ թե շատ մտահոգվեր Թեհրանը: Եվ եթե վերջինս հայտարարում է, որ դեմ է սահմանների որևէ փոփոխության, հավանաբար, անվտանգության հարցից զատ նաև հաշվի է առնում իր դառը փորձը, որից մենք պետք է լուրջ հետևություններ անենք, դասեր քաղենք, մանավանդ, որ ՀՀ-ում էլ կան մարդիկ, ովքեր Թուրքիայով Եվրոպա հասնելու համար շատ են շտապում...




□ □ □ □ □ □ **Գ** □ □ □ □ □ □ □ □ □ □ □ □ □ □ □ □

□ □ □ □ □ □ □ □ □ □ □ □ □ □ □ **Գ** □ □ □ □ □ □

□ □ □ □ □ □ **Գ** □ □ □ □ □ □ □ □ □ □ □ □ □ □



Կարեն Զադոյանի «Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայկական մշակութային ժառանգության պահպանման որոշ հարցեր միջազգային իրավունքի տեսանկյունից» ելույթը՝ «Քաղաքակրթությունների երկխոսությունը համամարդկային արժեքների մերձեցման մեջ» գիտաժողովում (25. 04. 2002):



Կարսի Ս. Առաքելոց մայր տաճարը 2002թ. վերածվել է մզկիթի

Հայաստանի Հանրապետության սահմանադրության 11-րդ հոդվածը սահմանում է. «Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքներ գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո: Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի և նորմերի շրջանակներում նպաստում է այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, աջակցում հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը»: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունը փաստում է, որ հայկական մշակութային ժառանգության շատ արժեքներ գտնվում են իր ներկա քաղաքական սահմաններից դուրս (մասնավորաբար՝ հայերի պատմական հայրենիքի տարածքներում) և ՀՀ-ն ստանձնում է հայկական մշակութային ժառանգության պահպանման պարտավորությունը՝ միջազգային իրավունքի շրջանակներում:

Անդրադառնալով այս բնագավառում գործող միջազգային նորմերին՝ պետք է նշել, որ ՀՀ-ն 1993 թվականի հունիսի 22-ին պաշտոնապես միացել է «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիային, որը Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ)

ընդունել է իր Գլխավոր խորհրդատուի 17-րդ նստաշրջանում՝ 1972 թվականի նոյեմբերի 16-ին: Սույն կոնվենցիան բազմաթիվ իրավունքներ և հնարավորություններ է տալիս՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվող հայկական մշակութային ժառանգության պահպանումը պատշաճ կազմակերպելու համար: Նշենք դրանցից միայն մի քանիսը՝ տեղական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:

Ըստ կոնվենցիայի առաջին հոդվածի՝ «մշակութային ժառանգություն» են համարվում հուշարձանները, հնագիտական արժեքները, անձավային կացարանները, համալիրները, տեսարժան վայրերը և այլն: Այսինքն՝ ՀՀ-ից դուրս գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքները համարվում են «մշակութային ժառանգություն» և գտնվում են կոնվենցիայի իրավական պաշտպանության ներքո: Ըստ 6-րդ հոդվածի՝ կոնվենցիայի մասնակից պետությունները (այդ թվում՝ նաև ՀՀ հարևան պետություններից յուրաքանչյուրը) ընդունում են, որ իրենց տարածքներում գտնվող մշակութային ժառանգությունը համընդհանուր է, որի պաշտպանությունը միջազգային ողջ համրության պարտքն է (այդ թվում՝ հայերի և ՀՀ):



Ս. Թադեի վանքը (Պարսկահայք, այժմ՝ Իրան) վերանորոգվել է ԻԻՀ կառավարության միջոցներով

1) Տեղական մակարդակ.
 4-րդ հոդվածը սահմանում է, որ կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն (այս դեպքում՝ ՀՀ հարևան պետություններից յուրաքանչյուրը) ընդունում է, որ իր տարածքում գտնվող մշակութային ժառանգության (այս դեպքում՝

հայկական պատմական և մշակութային արժեքների) հայտնաբերումը, պաշտպանությունը, պահպանությունը, հանրամատչելի դարձնելը և ապագա սերունդներին հանձնելն ապահովելու պարտավորությունը դրվում է նախ և առաջ իր վրա, որ այդ պետությունը պետք է ամեն ինչ անի իր ներքին հնարավորությունների (ռեսուրսների) հաշվին, և, անհրաժեշտության դեպքում (այս դեպքում՝ անհրաժեշտությունը հիմնավորվում է բազմաթիվ փաստերով), միջազգային օգնության և համագործակցության միջոցով, մասնավորապես ֆինանսական, զեղարվեստական, գիտական և տեխնիկական օգնության միջոցով, որը նա կարող է ձեռք բերել: Իսկ միջազգային օգնությունը և համագործակցությունը կարող է լինել, ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ միջազգային կազմակերպությունների, այնպես էլ ՀՀ պետական կառույցների և հանրապետության ու արտերկրի հայկական հասարակական կազմակերպությունների օգնության ու համագործակցության ձևով, եթե դրանք առաջարկվում են անհատույց:

2) Տարածաշրջանային մակարդակ
Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է, որ մասնակից յուրաքանչյուր պետություն (այս դեպքում՝ ՀՀ հարևան պետություններից յուրաքանչյուրը) երաշխավորելու համար, որ իր տարածքում գտնվող մշակութային ժառանգության (այս դեպքում՝ հայկական պատմական և մշակութային արժեքների) պաշտպանության, պահպանության և հանրամատչելի դարձնելու համար ձեռնարկվում են արդյունավետ և ակտիվ միջոցառումներ, ձգտում է աջակցել մշակութային ժառանգության պաշտպանության, պահպանության և հանրամատչելի դարձնելու նպատակով ազգային և տարածաշրջանային կենտրոնների ստեղծմանը և զարգացմանը: Կոնվենցիայի այս հոդվածը Հայաստանի Հանրապետությանը, սփյուռքին և հայկական հասարակական կազմակերպություններին հնարավորություն է տալիս ՀՀ հարևան պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պաշտպանության և պահպանության նպատակով կատարել լուրջ աշխատանքներ՝ ստեղծելու և զարգացնելու համապատասխան տարածաշրջանային կենտրոններ՝ դրանցում ընդգրկելով ՀՀ հարևան պետություններին:

3) Միջազգային մակարդակ
Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության շրջանակներում հիմնադրվել է հանրնդգրկուն արժեք ունեցող մշակութային և բնության պաշտպանության միջկառավարական բացառիկ կոմիտե, որն անվանվում է Համաշխարհային ժառանգության կոմի-

տե: Վերջինս, պետությունների ներկայացրած ցանկերի հիման վրա, կազմում, համալրում և «Համաշխարհային ժառանգության ցուցակ» խորագրով հրատարակում է մշակութային և բնության ժառանգության մաս կազմող արժեքների ցանկը: Կոմիտեն, ըստ անհրաժեշտության, կազմում, համալրում և «Վտանգված համաշխարհային ժառանգության ցուցակ» խորագրով հրատարակում է Համաշխարհային ժառանգության ցուցակում հիշատակված այն արժեքների ցանկը, որոնց պահպանության նպատակով պահանջվում են զգալի աշխատանքներ, և որոնց համար կոնվենցիայի շրջանակներում օգնություն են խնդրել: Համաշխարհային ժառանգության կոմիտեն միջազգային օգնությունները տրամադրում է կոնվենցիայով հիմնադրված Համաշխարհային ժառանգության հիմնադրամի միջոցների հաշվին: Այս մակարդակում Հայաստանի Հանրապետությունն ու սփյուռքը, Հայ Առաքելական եկեղեցին, հայկական հասարակական կազմակերպությունները և ՀՀ ու հայերի արտերկրի բարեկամները պետք է փոխգործակցությամբ հնարավոր ամեն ինչ անեն (այն, դեռևս փոքր ծավալով, սակայն արդեն իսկ արվում է), որպեսզի ՀՀ հարևան պետություններում գտնվող մշակութային ժառանգության հայկական պատմամշակութային արժեքներն ընդգրկվեն «Համաշխարհային ժառանգության» և «Վտանգված համաշխարհային ժառանգության» ցուցակներում: Դա Համաշխարհային ժառանգության կոմիտեի միջոցով կպարտավորեցնի տվյալ պետությանը պաշտպանել, պահպանել և հանրամատչելի դարձնել հայկական պատմական և մշակութային արժեքները: Իսկ Համաշխարհային ժառանգության կոմիտեի վրա կարելի է ազդել անդամ պետությունների ներկայացուցիչների միջոցով:

Կոմիտեի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով, կոնվենցիային մասնակից պետությունների խնդրանքով (այս դեպքում՝ ՀՀ կամ հայերի բարեկամ որևէ պետության), կարող են մասնակցել համանման խնդիրներ հետապնդող միջկառավարական կամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչը հնարավորություն կտա ՀՀ հարևան պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանության վերաբերյալ հարցերը բարձրացնել հեղինակավոր այդ կոմիտեում:



Թբիլիսիի Շամքորենց Ս. Աստվածածին եկեղեցին՝ պայթեցումից առաջ և հետո:



ներ հետապնդող միջկառավարական կամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչը հնարավորություն կտա ՀՀ հարևան պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանության վերաբերյալ հարցերը բարձրացնել հեղինակավոր այդ կոմիտեում:

Կարեն Զադոյան
Երիտասարդ իրավաբանների հայկական ասոցիացիայի
(ընկերակցության) նախագահ,
Հայաստանի փաստաբանների միության անդամ



Թորոս Էբբոթ-Ուոթ

«Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանին: Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-97 և 1909թթ. սարսափելի ջարդերին և 1915թ. ամենասարսափելի կոտորածին: Հայերը պետք է վերագտնեն իրենց անկախությունը»:

Լիլիտ Զորյ Դեյվիդ Անգլիայի վարչապետ (1916-22թթ.)



Դիվյա Կոհե

ԹՈՒՐԷ-ՉՐԵԱԿԱՆ ԽՈՍԷ՝ ԱՆԳԼԻԱՅՈՒ ԲԵՐՆՈՎ

ՀՀ-ում Միացյալ Թագավորության պաշտոնական ներկայացուցիչ տիկին Թորոս Էբբոթ-Ուոթը սույն թվականի հունվարի 20-ին «Ռեզնում» գործակալությունը տված հարցազրույցում ասել է. «Մեծ Բրիտանիան ընդունում է, որ 1915թ. դեպքերը եղել են զանգվածային սպանություններ, որոնց համար պատասխանատու են թուրքերը»:

Դեսպանուհին, իհարկե, չի կարծում, «թե այդ փաստի ճանաչումը որպես ցեղասպանություն շատ օգտակար լինի» և դրանից էլ եզրահանգում է. «Հայերը պետք է հարգեն սպանվածների հիշատակը, բայց պետք է նայեն դեպի ապագա և կառուցեն նոր Հայաստան»:

Լոնդոնի ներկայացուցիչը պնդում է. «Ես հասկանում եմ, թե ինչքան խորն են զգում հայերն այս դեպքերը, նույնիսկ 90 տարի անց», և ապա ավելացնում, որ «Բրիտանական կառավարությունը ժամանակին դատապարտել և այժմ էլ դատապարտում է կոտորածները որպես զազանություն»:

Տիկին դեսպանը, այնուհետև, իրեն դատավորի դեր վերապահելով, շեշտում է, որ «փաստարկը բավականաչափ հստակ չէր, որպեսզի դասակարգվեր որպես ցեղասպանություն այն բացատրությունում, որ տրված է ՄԱԿ-ի 1948թ. ցեղասպանության կոնվենցիայով»:

Թորոս Էբբոթ-Ուոթն ընդգծված թուրքական տեսակետ ունի. «Մինչ բանավեճը շարունակվում է պատմաբանների և իրավաբանների միջև, մենք հավատում ենք, որ մեր դերը պետք է լինի խրախուսել տարածաշրջանի երկրներին՝ նայելու դեպի ապագա և միասին աշխատելու լարվածության թուլացման և հարաբերությունների բարելավման ուղղությամբ»:

Էբբոթ-Ուոթը կրկնում է տարիներ առաջ Իսրայելի դեսպան Ռիվկա Կոհեմի նույնքան անվանարկող արտահայտությունը՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

Թեև հայ հասարակությունն արժանի հակահարված տվեց սիոնիստ դեսպանուհուն, սակայն ՀՀ կառավարությունը բավարարվեց դիվանագիտական թույլ դիրքորոշմամբ: Դրանից քաջալերված ենք Ալբիոնի ներկայացուցիչը ահա հանդես է գալիս ՀՀ-ում:

Էբբոթ-Ուոթը պարտավոր է հրապարակավ ներողություն խնդրել հայ ժողովրդից: Այլապես, ՀՀ պետական մարմինները պետք է նրան հայտարարեն անբաղձալի անձ և դուրս շարտեն ՀՀ սահմաններից: Իսկ թեք ոչ, յուրաքանչյուր հայ իրավունք ունի իր նախընտրած ձևով հայոց սուրբ հողն ազատել այս տիկնոջ պիղծ ներկայությունից:

1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունել է «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածը ցեղասպանություն է համարում այն գործողությունները, որոնք կատարվում են մի որևէ ազգային, ցեղային կամ կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ: Կոնվենցիայում ցեղասպանության ակտ է համարվում. ա) խմբի անդամների սպանությունը, բ) նրանց մարմնական լուրջ վնասվածք կամ մտավոր խանգարում պատճառելը, գ) խմբի համար այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնց նպատակն է այդ խմբի լիակատար կամ մասնակի ֆիզիկական ոչնչացումը, դ) խմբի ներսում ծննդաբերության կանխման միջոցառումները, ե) երեխաների հանձնումը մարդկային մի խմբից մյուսին:

Օսմանյան կայսրությունում 1915-23 թթ. հայերի ցեղասպանության ժամանակ տեղի են ունեցել բոլոր հինգ կետերում նշված գործողությունները:

Կոնվենցիայի համաձայն՝ ցեղասպանության կամ նրա գործողություններից որևէ մեկի մեղավորները պետք է պատժվեն անկախ այն բանից, նրանք սահմանադրական կարգով ընտրված կառավարողներ, հասարակական գործիչներ են, թե՞ մասնավոր անձինք, անկախ այն բանից, նրանք մասնակցե՞լ են ցեղասպանության գործողություններին անձամբ, եղե՞լ են հանցագործության մեղակից, մասնակցե՞լ են ցեղասպանության նպատակներով կազմակերպված դավադրության, ցեղասպանության հրահրման կամ ցեղասպանություն կատարելու փորձի: Ցեղասպանության համար պատժի դեպքում Կոնվենցիան չի ընդունում իրավաբանական վաղեմություն. պատիժը կարող են կայացնել ինչպես ազգային, այնպես էլ հատկապես այդ նպատակով ստեղծված միջազգային ատյանները:

1915թ. նոյեմբերի 16-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի փոխնախարար Լորդ Ռ. Սեսիլը Համայնքների պալատում հայտարարել է, որ Թուրքիան ծրագրել էր ոճիրը ոչ թե հայ ազգին պատժելու, այլ նրան ոչնչացնելու նպատակով: Դա նրա միակ նպատակն էր:

2000թ. նոյեմբերի 23-ին Մեծ Բրիտանիայի կառավարությունը հետ ուղարկեց իր խորհրդարանի առաջարկը, որը նախատեսում էր նոյեմբերի 27-ին կառավարության «Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա» կապակցությամբ հայտարարության մեջ հրեաների ողջակիզման հետ նշել նաև 1915թ. հայերի կոտորածը:


ԻՐԱՆԱՅԱՅ ԿՅԱՆՔ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավելի քան 40 տոկոս նահանջ

Ընթացիկ տարվա փետրվարի 20-ին կայացած Իրանի Իսլամական Խորհրդարանի (ԻԻԽ) 7-րդ նստաշրջանի ընտրությունները: Իրանահայությունն ընտրեց իր երկու պատգամավորներին:


Իրանի Ազգային մեջլիսի (խորհրդարանի) հիմնադրումից (1906թ.) ցայժմ (բացառությամբ՝ առաջին նստաշրջանը), իրանահայությունն ունեցել է իր պատգամավորները. մեջլիսի երկրորդից հինգերորդ նստաշրջաններում՝ մեկական, այնուհետև՝ երկու պատգամավոր:



բերտ Բեգլարյանը (հարավից) ընտրվեցին նոր պատգամավորներ:

ԻԻԽ 7-րդ նստաշրջանի ընտրություններում համայնքի ընդդիմադիր կողմը չառաջադրեց իր թեկնածուն, հանգամանք, որն ընտրությունները զրկեց աշխուժությունից: Դա բացատրվում է նրանով, որ ընտրությունների գործադիր մարմինն ընտրվում է միայն ու միայն ոչ ընդդիմադիրներից:

Թեհրանում լույս տեսնող «Արաքս» ամսագրի հրապարակած տվյալների



համաձայն՝ ընտրությունների մասնակիցների թիվը, նախորդ շրջանի համեմատությամբ, արձանագրել է ավելի քան 40 տոկոս նահանջ: Պարբերականը մտահոգիչ է համարում այդ երևույթը և պնդում՝ «ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է: Ուրեմն պետք է սրբագրել այն, քանի դեռ ուշ չէ»:

ԻԻԽ 7-րդ նստաշրջանի ընտրություններում համայնքի ընդդիմադիր կողմը չառաջադրեց իր թեկնածուն, հանգամանք, որն ընտրությունները զրկեց աշխուժությունից: Դա բացատրվում է նրանով, որ ընտրությունների գործադիր մարմինն ընտրվում է միայն ու միայն ոչ ընդդիմադիրներից:

ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ
Իրանի Իսլամական Խորհրդարանի 6-րդ նստաշրջանի՝ իրանահայության հյուսիսային շրջանի պատգամավոր, դոկտ. Լևոն Դավթյանը Թեհրանում կայացած մի «կլոր սեղանի» ժամանակ ասել է. «Խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործում խոչընդոտներ շատ կան, որոնցից մեկը խորհրդարանում մեծ թվով ազգերի պատգամավորների առկայությունն է»:

մավոր. մեկը՝ հյուսիսային շրջանից, մյուսը՝ հարավային:

Իսլամական հեղափոխությունից հետո էլ պահպանվել է այդ իրավունքը, և վերջերս կայացած 7-րդ նստաշրջանի ընտրություններում պարոնայք Գևորգ Վարդանը (հյուսիսից) և Ռո-

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՊԱՅԱՆԻ ԹԵՄԻՑ

Սպահանի Հայոց թեմի թեմական խորհրդի հսկողության ներքո կան թեմապատկան 389 բնակարան և 121 խանութ: Թեմի տարեկան ծախսերի նախահաշիվը 7 միլիարդ ռիալ (մոտ մեկ միլիոն դոլար) է: Թեմի հայոց դպրոցների աշակերտության թիվը 1100 է, ուսուցիչների՝ 50:

Վերջին մեկ տարվա ընթացքում Սպահանի առաջնորդանիստ Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանն ու եկեղեցին են այցելել 160.339 իրանցի և 11.995 օտար զբոսաշրջիկ:

Սպահանի Հայոց դպրոցների աշակերտության թիվը 786 է, իսկ Շահին շահրինը՝ 259-ը: Հայազգի որոշ թվով աշակերտներ նաև հաճախում են ոչ հայկական դպրոցներ:



Ս. Ամենափրկիչ վանք, Սպահան

Ազատագրված տարածքների սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային յուրացումը մեզ համար եղել և մնում է եզակի կարևորության խնդիր: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այն մեզ համար ամենաառաջնայինն է, **քանզի հողը նրանց է, ով այնտեղ ապրում է: ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԱՆՈՒՄ... ՀԱՅՐԵՆԻՔՆ ԱՆՏԵՐՈՒԹՅԱՆ ՉԵՆ ՄԱՏՆՈՒՄ...**

Հայկական տարրն այստեղ վերացել էր 1920-ական թվականներին, երբ թուրքական բանակը բռնագավթեց մեր պատմական հայրենիքի այս շրջանը:

Ազատագրական պայքարի շնորհիվ՝ բռնագրավված



որոշ տարածքներ, 70 տարի անց, վերադարձվեցին բնիկ տերերին: Այնտեղ այսօր նոր՝ մատաղ սերունդ է աճում: Եթե սոցիալ-կենցաղային առումով նրանց կյանքը բարեկեցիկ համարել չի կարելի, ապա բնության հետ կապն անմիջական է, ոգեղեն դաստիարակության ծիւղերը՝ ակնհայտ, ինչն արտահայտված է Քաշաթաղի երեխաների (9-15 տարեկան) լուսանկարած բնապատկերներում: Հայրենի բնության ոչ միայն զգացումն է դրոշմված երեխաներից յուրաքանչյուրի նկարած ակնթարթում, այլև, գեղեցիկի զգացողությանը զուգահեռ, հայրենի հողի պաշտամունքը՝ տիրոջ իրավունքով:

Այդ լուսանկարները 20 օր շարունակ ցուցադրվում էին Ալ. Թամանյանի անվան թանգարան-ինստիտուտի ցուցասրահում: Ներկայացվել էին քաշաթաղցի ազատամարտիկ Սմբատ Թաթոսյանի անվան մանկական կենտրոնի լուսանկարչական խմբակի 14 երեխայի 62 աշխատանք: Կենտրոնը հիմնադրել է «Մոնթե Սելթոնյան» հասարակական կազմակերպությունը՝ 2003թ. հուլիսին: Միջոցառումը ֆինանսավորել է իրանահայ էդիկ Աբրահամյանը:

- Այս երեխաների ոգին է արտացոլված լուսանկարներում,- ցուցահանդեսի բացման ժամանակ ասաց կազմակերպության Քաշաթաղի ներկայացուցիչ Ալեք Ենիգոմյանը:- Կարևոր է, որ մայրաքաղաքում ևս գիտակցեն, որ մեր հայրենիքի այս հեռավոր շրջաններում ապրում են մեր այն հայրենակիցները, ովքեր առավել արժանի են համազգային հոգատարության և ուշադրության: Մեր կազմակերպությունն ամեն ինչ անում է՝ նրանց սոցիալ-տնտեսական վիճակը փոքր-ինչ բարելավելու, երեխաների դաստիարակության հոգևոր-մշակութային համալիր ծրագիր իրականացնելու համար: Բայց դա շատ քիչ է: Մենք պետք է ազգովի գիտակցենք մեր թափած արյան արժեքը և ապահովենք մեր հայրենիքի պաշտպանությունը:



ՀԻՆԱՎՈՒՐՑ ՀՈՂԻ ԴԵՌԱՏԻ ՏԵՐԵՐԸ



Եվ ոչ միայն այդ տարածքների: Սակայն խոսքն այսօր ազատագրված այդ տարածքների մասին է, որտեղ նույնպես բնակչության աճն սկսել է նվազել՝ ի հաշիվ արտահոսքի: Ներկայացնելով այս ցուցահանդեսը՝ կազմակերպիչները, լուսանկարչական խմբակի ուսուցիչ Խաչիկ Բաղդասարյանի արտահայտությամբ՝ եկել էին ասելու բոլորիս, որ մարդիկ տեղում չեն զգում վերաբնակեցման ծրագրի գոյությունը:

- Մեր կենսապայմաններն անհամեմատելի են, իսկ մեզ խոստացված արտոնություններն այնքան են նվազել, ազատագրված տարածքների բնակիչների նկատմամբ ուշադրությունն այնքան է պակասել, որ ոչ մի շահագրգռություն չկա այլևս այնտեղ ապրելու...

Այս ցուցադրության համար մեր հարգանքն ու երախտագիտությունն ենք հայտնում քաշաթաղցիների նոր սերնդին՝ երեխաներին, ովքեր իրենց թող որ մանկական, բայց տիրոջ ծայնն են բարձրացրել՝ ի սատարումն ազատագրված տարածքների պաշտպանության և հիշեցնում են ավագներիս՝ ազատագրության կարոտ տարածքներ դեռ շատ ունենք...

Հասնիկ Գուլակյան

ԲԱՅ ՆԱՄԱԿ

ՀՀ հանրային հեռուստատեսության (ՀՀՀՀ) տնօրինությանը, ՀՀՀՀ «սերիալների» պատասխանատուներին

Հարգարժան պարոն Արզումանյան

Չորեքշաբթի՝ մարտի 3-ին առիթ ունեցանք իրանահայ միություններից մեկի հարկի տակ ծանոթանալու հայրենի մի շարք գիտնականների, ովքեր Իրանի Իսլամական Հանրապետության պաշտոնական հրավերով երկու գիտական համահավաքների էին մասնակցել Իրանում:

Հայրենի գիտնականները հայ ունկնդիրների առաջ խոսեցին Հայաստանի տնտեսական և սոցիալական մի շարք խնդիրների մասին: Տիկին Հրանուշ Խառատյանն ու պարոն Գարեգին Չուգասյանը, ի միջի այլոց, մեծ վարպետությամբ և սիրով պատասխանեցին նաև ներկաների հարցերին: Երբ պաշտոնական ծրագիրն ավարտվեց, սրահում ներկա կանանց մեծ մասը մոտեցավ տիկին Խառատյանին և խնդրեց Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստատեսության (առաջին ալիքի) տնօրինությանը հանձնել **իրանահայ զանգվածների զգվանքն ու ատելությունը՝ այս հեռուստատեսության** Երևանի ժամանակով ամեն օր ժամը 18.00-ին եթեր արձակվող լատինամերիկյան ՀԱՆՐԱՅԻՆ ՏՆԵՐՈՒՄ և երրորդ կարգի պոռնկանոցներում պատրաստված «Տանգոյի սիրահարները» «սերիալի» հանդեպ:



Այն ո՛չ միայն որևէ առեցնություն չունի հայկականության, այլև ամենաչնչին կապ անգամ չունի մարդկային ամենամշակակալի հատկանիշի՝ ԱՉՆՎՈՒԹՅԱՆ հետ:

Պարզապես չենք հասկանում, թե հարգարժան տնօրինությունն ինչո՞ւ է հայ ժողովրդի դառը դատած սենթերն ու դոլարները տրամադրում՝ պոռնոգրության տարածման ու ցրման համար:

Արդյո՞ք տնօրինությունը չունի չափահաս երեխաներ, որ մտածեր (եթե չասենք՝ մտահոգվեր), թե այս կարգի անբարոյականությունն տարածող ֆիլմերը ինչ ավերներ կարող են գործել մեր տներից, դպրոցներից ու բուհերից ներս:

Եթե նպատակը միայն էժան ֆիլմերի ձեռքբերումն է, կարելի է զանազան անբարոյական կենտրոններից վերցնել նման ֆիլմեր և եթեր հանելու համար նույնիսկ գումարներ գանձել:

Ի՞նչ նպատակ է հետապնդում «սերիալի» ցրման տնօրինությունը: Անբարոյականության քարոզչությունը: Չենք ուզում հավատալ դրան: Կամ, ամենալավ պարագային, կարելի է մտածել, որ հարգարժան տնօրինությունն ինքը ժամանակ անգամ չի արել մեկ անգամ զոնե նայելու և ստուգելու այս «սիրահարներին»:

Ժամանակին սփյուռքը լսում էր «Երևանն է խոսում» ռադիոն: Չնայած եթերային ամեն կարգի խանգարումներին այն շատ ավելի հայրենասիրություն, հայկական մշակույթ և հայերենագիտություն էր բերում սփյուռքին, քան այս հեռուստացույցի շատ ծրագրեր՝ միասին վերցրած:

Ո՞ր մարմինն է պատասխանատու հեռուստատեսային

այս ԼԿՏԻ ՖԻԼՄԵՐԻ ցուցադրության համար:

Ի՞նչ է մնում անել թեհրանում, Բեյրութում կամ Փարիզում նստած հայ ընտանիքի պատասխանատուի համար, որը լիովին վստահում է ՀՀՀՀ տնօրինությանը: Առանց այդ էլ այսօրվա աշխարհում մեր բարոյականությունը շատ ճանփաներով ու առիթներով օրական մի քանի անգամ հարցականի տակ է գնում, իսկ դուք, պարոնայք, նման ԼԿՏԻ ՈՒ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԻ տարածումով գալիս եք ավելի՛ ևս խաթարելու մեր ընտանիքների ու դպրոցների ջերմ, բարեկամական և մեր ուժերի սահմաններում՝ քրիստոնեական ու բարոյական մթնոլորտը:

Այս քարոզչությունը, վստահաբար, իր ավերիչ դերն ունի նաև Հայաստանի դպրոցների ու բուհերի բարոյական կյանքում:

Մեզ հասկանալի չէ նաև, թե ինչո՞ւ է լռում Սուրբ Էջմիածինն այս առթիվ: Արդյո՞ք Էջմիածնում լուր չունեն կրոնական ու ազգային սովորությունները այլանդակող, խաթարող և ոտնահարող նման երևույթներից:

ԻՍԿ ԵԹԵ ՈՒՆԵՆ, ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԼՈՌՈՒ:

Մեր կարծիքով՝ նման «սերիալները» պետք է խստիվ արգելվեն և նրանց գնողները, թարգմանողները և եթեր ուղարկողները, ամենաքիչը, նկատողության արժանանան, եթե ոչ քրեական պատասխանատվության կանչվեն:

Պահանջում ենք անմիջապես դադարեցնել այս կարգի «ֆիլմերի» հեռարձակումը և Հայաստանի Հանրապետության դժվար աշխատած բյուջեն ավելի լավ, բարոյական, կրոնական ու ազգային սովորություններին հարիր հաղորդումներին տրամադրել:

*Խաչիկ Խաչեր
Գրող, թարգմանիչ, բանաստեղծ,
հասարակական գործիչ, ավագ ճարտարագետ
Թեհրան, Մարտի 5, 2004թ.*

Հ. Գ. - Հայկական մամուլին խնդրում ենք արտատպել:

ՀՀ հանրային հեռուստատեսության շատ հաղորդումներ նման վրդովմունք և ցասում են առաջացնում ոչ միայն թեհրանում, այլև հայկական ու մարդկային նկարագրի նախանձախնդիրների մեջ՝ բոլոր գաղթօջախներում ու նաև մեզ մոտ՝ ՀՀ-ում: ՀՀ-ի (և ոչ միայն ՀՀ-ի) հաղորդումների մեծ մասի լեզուն, բովանդակությունը և, առհասարակ, ուղղվածությունը, մեղմ ասած, մղոններով հեռու են ազգապահպանման առաքելությունից: Հասկանալի է նաև նամակագրի գայրույթը Մայր Աթոռի անտարբեր ու կրավորական կեցվածքի նկատմամբ: Միգուցե Մայր Աթոռն ու նրա գահակալն էլ «գլորալացվել» են այժմ և միշտ և հավիտյան...

Խմբագրություն

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Պրոֆ. Դոկ. Ռադիկ Մարտիրոսեան
Ռեկտոր, Երեւանի Պետական
Համալսարան

Հայագիտական Ուսմանց
Ընկերակցութիւն
(Society for Armenian Studies)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայագիտական Ուսմանց Ընկերակցութեան (Society for Armenian Studies) Գործադիր Մարմինը 24 Յուլիս 2002-ի իր նիստի ընթացքին քննութեան առաւ Երեւանի Պետական Համալսարանի Հայոց Պատմութեան Ամպիոնի 19 Դեկտեմբեր 2001-ի «Ամերիկեան հայագիտութեան հիմնական նկրտումների մասին» որոշումը եւ այդ կապակցութեամբ հանդէս կու գայ հետեւեալ յայտարարութեամբ.

Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւնը խոր ցաւ կը յայտնէ Հայոց Պատմութեան Ամպիոնի որդեգրած այս անհիմն որոշման կապակցութեամբ, որ միայն կրնայ բացասական անդրադարձ ունենալ նոյն ամպիոնի միջազգային, գիտական հեղինակութեան վրայ:

Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւնը բնականաբար չի կրնար ընդունիլ որոշման մէջ տեղ գտած, քաղաքական բնույթ կրող եւ փաստագուրկ այն պնդումները թէ ամերիկեան հայագիտութիւնը կը գտնուի Թուրքիոյ հակահայկական քարոզչութեան բացասական խոր ազդեցութեան տակ եւ թէ ամերիկեան անհատ հայագետներու վերլուծութիւններն ու եզրայանգումներն «ջուր են լցնում» Թուրքիոյ եւ Ատրպէյճանի «իշխանութիւնների ջրաղացին»: Ընկերակցութիւնս, առաւել եւս, տարօրինակ կը գտնէ այն պնդումը թէ ամերիկեան հայագետները «անգամ Հայոց ցեղասպանութեան հարցում սկսել են աստիճանաբար որդեգրել ու քարոզել թուրքամետ տեսակետներ» եւ թէ իբրեւ անոնք այդպիսով կը հակադրուին Հայաստանի կառավարութեան ներկայ քաղաքականութեան: Մինչդէռ, պարզ է ամենքին թէ, քաղաքական պայմաններու բերումով, արտասահմանի (ներառեալ ԱՄՆ-ի) մէջ գործող հայագետներն առաջին ձեռնարկողները եղան 1915-ի Մեծ եղեռնի գիտական ուսումնասիրութեան ու միջազգային ատեաններու մէջ արծարծեցին այդ ողբերգութիւնն եւ իր հետեւանքները, երբ Խորհրդային Միութեան մէջ քաղաքական մթնոլորտը այդ առումով տակաւին բարեկամաստ չէր:

Հայոց Պատմութեան Ամպիոնի որոշումը գրեթէ բացառապէս հիմնուած ըլլալ կը թուի վիճարկոյց աշխատութեան մը, ինչպէս նաեւ վերջինովս հնայուած, բայց արդի պատմագիտութեան խնդիրներէն ընդհանրապէս անտեղեկ թուացող մի քանի լրագրողներու յօդուածներու վրայ: Ձարմանալի է, որ Հայոց Պատմութեան Ամպիոնը որոշումը որդեգրելէ

1998թ. Երևանում լույս տեսավ պատմաբան և քաղաքագետ Արմեն Այվազյանի «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն» մենագրությունը: Հեղինակը ներկայացնում է հայագիտության ամերիկյան դպրոցի խելաթախուրդները և ապացուցում այդ «դպրոցի» ծառայությունը՝ ԱՄՆ-ի վարչակարգերի աշխարհաքաղաքական նպատակներին: Հատորը մեծ աղմուկ առաջացրեց տարբեր երկրների հայագետների շրջանում. արձագանքներն առ այսօր շարունակվում են...

Սույն աշխատության հիման վրա ԵՊՀ հայոց պատմության ամբիոնը 2001թ. դեկտեմբերի 19-ին ընդունեց որոշում՝ խստորեն դատապարտելով հայագիտական հակահայկական դպրոցների գործունեությունը: Ավելի քան յոթ ամիս անց՝ այս որոշմանը հակադարձեց ԱՄՆ-ի Հայագիտական ուսմանց ընկերակցությունը՝ ԵՊՀ ռեկտորին ուղղված նամակով՝ պահանջելով «հետս կոչել» ամբիոնի հիշյալ որոշումը: Այդ գրության մեջ միախառնվել են ամերիկյան կեղծ քաղաքավարությունն ու վերջնագրային, ամբարտավան մոտեցումը՝ հար և նման ԱՄՆ-ի վարչակարգերի ձեռագրին՝ աշխարհի տարբեր երկրների հետ իրենց հարաբերություններում:

Խմբագրությունը «հիացած է» ամերիկացի հայագետների հայերենի «իմացությամբ»: Սույն նամակը «թելադրող» փաստաթուղթ է՝ հայոց պատմության պատմագրության վերաբերյալ: ՀՀ-ում այն տպագրվում է առաջին անգամ, նույնությամբ՝ սոսկ համակարգչային մուտքագրման անհամար սխալների շտկմամբ:

առաջ, հաշուի չէ առած տարբեր հայագիտական հանդէսներու մէջ լոյս տեսած գրախօսականներ, որոնք վիճարկելի կը գտնեն վերոյիշեալ հեղինակներուն շարք մը մեթոտաբանական մօտեցումները եւ հարցականի տակ կ'առնեն անգլերէնէ անոնց կողմէ հայերէնի թարգմանուած եւ յետոյ դատապարտման արժանացած մէջբերումներու լեզուներու ճշգրտութիւնը: Առաւել եւս տարօրինակ է, որ, նախքան որոշումն ընդունիլը, Հայոց Պատմութեան Ամպիոնի դասախօսներէն եւ ոչ մէկը փորձած է անձամբ դիմել որոշման մէջ անուսով նշուած կամ այլ հեղինակաւոր ամերիկեան հայագետներու եւ անոնցմէ բացատրութիւն ստանալ, հակառակ այն հանգամանքին, որ վերջիններէն շատերը սերտ կապեր ունէին Հայաստանի տարբեր գիտական հաստատութիւններու հետ:

Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւնը միաժամանակ զարմանք կը յայտնէ թէ հայաստանաբնակ փոքր խմբակէ մը բխած եւ, դժբախտաբար, խնդրոյ առարկայ որոշմամբ Հայոց Պատմութեան Ամպիոնի կողմէ անքննադատաբար որդեգրուած դիրքորոշումը արձագանգ կ'ունենայ սփիւռքի որոշ նեղ շրջանակներու մօտ եւս: Անոնք իրենց կարգին, սկսած են տեղի-անտեղի, մեքենաբար կրկնել ամերիկեան հայագիտութեան հասցէին, գիտականօրէն անտրամաբանական մեղադրանքները եւ, նոյն ելակէտէն մեկնելով, արտասահմանեան հայագիտութենէն պահանջել, որ, պատմագիտական որոշ հիմնական հարցերու առնչութեամբ, կուրօրէն որդեգրեն նախակաղապարուած, որպէս թէ քաղաքական առումով հայանպաստ, բայց գիտականօրէն յաճախ վիճարկելի, չըսելու համար երբեմն նոյնիսկ ծիծաղելի, մեկնաբանութիւններ:

Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւնը անընդունելի կը գտնէ ամերիկեան հայագետներուն, անոնց բարի համբաւին, գիտական մօտեցման ու յանգած եզրակացութիւններուն հասցէին Հայոց Պատմութեան Ամպիոնի որոշման մէջ եւ այլուր տեղ գտած, գիտութեան անյարիր եւ յաճախ քաղաքական երանգ կրող ձեւակերպումները:


Ընկերակցութիւնս կը հաւատայ, որ իր, ինչպէս նաեւ բոլոր հայագետներուն, պարտքն է հայագիտական ուսումնասիրութիւնները կատարել գիտական ամենաբարձր մակարդակով, միջազգային գիտական ամենապահանջկոտ չափանիշներուն համաձայն առանց ազդուելու գիտութեան հետ անմիջական կապ չունեցող երեւոյթներէ:

Կասկած չկայ, որ, ամենուրեք, գիտական ամենաբարձր

մակարդակով հայագիտութեան գոյութիւնը կը նպաստէ, որ հայոց պատմութիւնն ու մշակոյթը լրջօրէն հաշուի առնուին միջազգային գետնի վրայ: Հայագիտութեան յարգումած մակարդակի պահպանումը լաւագոյն միջոցն է, որ համաշխարհային հանրութեան աւելի ու աւելի լայն եւ ազդեցիկ շրջանակներ ծանօթանան Հայաստանի եւ հայ ժողովուրդի անցեալին ու ներկային: Միւս կողմէ, ինքն իր մէջ կղզիացած ու կասկածամտութիւն ցուցաբերող հայագիտութիւն մը դուրս կը մղուի միջազգային գիտական ասպարէզէն: Այսպիսի մօտեցում մը լուրջ խոչընդոտ կրնայ հանդիսանալ հայ ժողովուրդի բնական երազանքներու իրականացման ճամբուն վրայ:

Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւնը պիտի շարունակէ մնալ գիտական բանավեճի ազատ ամպիոն մը, ուր յարգանք կը վայելեն գիտական լուրջ կռուաններու վրայ հիմնուած, նոյնիսկ երբեմն հակադիր թուացող ուսումնասիրութիւններն ու եզրայանգումները: Ընկերակցութիւնս երբեք պիտի չփորձէ կաշկանդել անդամ-գիտնականներու՝ իրենց միտքերը ազատօրէն արտայայտելու իրաւունքը: Նոյն տրամաբանութենէն մեկնելով, Ընկերակցութիւնը պատրաստ է լսելու որեւէ գիտական քննադատութիւն եւ հաշուի առնել անիկա, եթէ հիմնուած ըլլայ գիտական ու համոզիչ փաստարկներու վրայ, որովհետեւ կը հաւատանք, թէ հայագիտութեան առաջընթացը միայն համատեղ ջանքերու եւ փոխադարձ յարգանքի վրայ հիմնուած գիտական բանավեճերու արդիւնք կրնայ ըլլալ:

Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւնը ցաւ կը յայտնէ Հայոց Պատմութեան Ամպիոնի որոշման այն կէտին առթիւ, ուր կոչ կը ըլլայ դադարեցնելու արտասահմանի մէջ հայագիտական կառոյցներու ֆինանսաւորումը: Այս



կառոյցները անուրանալի եւ շնորհակալ գործ կատարած են Հայաստանէն դուրս հայոց պատմութեան ու մշակոյթին հանդէպ անախադէպ հետաքրքրութիւն ստեղծելով անոնց յետագայ ֆինանսատրոււմը դադարեցնելու, այսինքն՝ նոր ամպիոններ ու գիտական կեդրոններ հաստատելու ծրագիրներէն մեկընդմիջտ հրաժարուելու կոչերը կրնան միայն ճանապարհ հարթել միջազգային գիտական շրջանակներէն հայագիտութեան մեկուսացման:

Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւնը կը խնդրէ Հայաստանի կառավարութենէն, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ գործող հասարակական տարբեր կազմակերպութիւններէն, որ բարոյական, կազմակերպչական ու միութեան ավելի լայն աջակցութիւն ցուցաբերեն Հայաստանի մէջ հայագիտական կառոյցներու պահպանման, բարելաւման եւ մանաւանդ հայագետներու նոր սերունդ պատրաստելու գործին: Այս

միջոցառումները անհրաժեշտ են հայագիտութեան միջազգային մակարդակը բարձրացնելու համար: Արտասահմանի հայագետները միշտ զգացած են Հայաստանի մէջ զարգացած հասարակական գիտութիւններ ունենալու կարիքը: Անոնք Հայաստանի մէջ բնակող հայագետները միշտ իրենց գործընկերները համարած են եւ ոչ երբեք մրցակիցներ կամ հակառակորդներ: Այս կարեւոր հանգամանքէն մեկնելով, Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւնը կը յայտնէ, որ ինքը եւս պատրաստ է իր բոլոր հնարաւորութիւնները ի գործ դնելու Հայաստանի մէջ հայագիտութեան մակարդակի յարատեւ աճ ապահովելու, միջազգային կապեր ապահովելու եւ նոր մասնագետներ պատրաստելու ուղղութեամբ:

Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւնը, ի վերջոյ, կը յուսայ, որ Հայոց Պատմութեան Ամպիոնը յետոս կը կոչէ 19 Դեկտեմբեր 2001-ի իր անպատեհ որոշումը եւ փոխարէնը միջոցներ ձեռք կառնէ այս յայտարարութեան մէջ արտայայտուած սկզբունքներն ու նպատակները համատեղ ջանքերով կենսագործելու համար:

**Պ. Բարլո Տէր Սկրտիչեան
ՀՈՐ Գործադիր Մարմնի Նախագահ**

Հ. Գ. - Ըստ երևութիւն հայագիտութեան ամերիկյան դպրոցն իր ամուր հենակետերն արդեն ստեղծել է ՀՀ-ում: ՀՀ ԳԱԱ ս/թ մարտի 12-ին կայացած տարեկան հաշվետու ժողովում ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը հայտարարեց, որ կառավարութեան կից «Նորավանք» հատուկ կառույցը պարզել է, որ աշխարհի հայագիտական մի շարք կենտրոններում զբաղված են հակահայկական բնույթի հայագիտական աշխատանքներով:

համագործընկեր

Մենք՝ օտար մամուլում

Այս վերնագրի տակ պարբերաբար կներկայացնենք միջազգային մամուլի այն հրապարակումների տվյալները, որոնք ուղղակիորեն առնչվում են հայությանը և ունեն վերլուծական բնույթ: *Խմբ.*

1. «Ստարոցիդնա ցիվիլիզացյա» (լեհ.), հանդես, Լեհաստան, թիվ 75, 2003 (համարն ամբողջությամբ նվիրված է Հայաստանին):
2. Իվ դը Բե, «Լեռնային Ղարաբաղի բանակը. Հարավային Կովկասի կղպանքը» (ֆրնս.), «Ռեյդս» (RAIDS), ամսաթերթ, Փարիզ, 2003 դեկտ.:
3. Քիրան Միք, «Մի նախկին վարչակարգի համը» (անգլ.), «Դը Մեթրո», Լոնդոն, 15. 12. 2003:
4. Ռուբ Ռոզըն, «Քողարկված ցեղասպանություն» (անգլ.), «Սան Ֆրանսիսքո քրոնիկլը», Սան Ֆրանցիսկո, 15. 12. 2003 (հայկական ցեղասպանության մասին):
5. Ջեոֆ Հիլ, «Հայաստանը բավականին լավն էր ս. Գրիգոր Լուսավորչի համար» (անգլ.), «Բելֆաստ Նյուզլեթթըր», Բելֆաստ, Գյուսիսային Իռլանդիա, 10. 01. 2004:
6. Ջեոֆ Հիլ, «Հայկական վերջին կարմրախայտի փնտրտուքով», «Բելֆաստ Նյուզլեթթըր», Բելֆաստ, Գյուսիսային Իռլանդիա, 17. 01. 2004:
7. Ֆրենք Վիվիանո, «Հայաստանի վերածնունդը» (անգլ.), «Նեշընըլ ջեոգրաֆիք», ամսագիր, ԱՄՆ, մարտ 2004 (հանդեսի էջ 28-49-ում ներկայացվում է Հայաստանի Հանրապետության ներկա կյանքը, լուսանկարները՝ Ալեքսանդրա Ավագյանի):
8. Բելիմդա Կուպեր, «Թուրքերը ճեղքում են հայերի հանդէպ լուրջան պատը» (անգլ.), «Նյու Յորք թայմզ», օրթ., Նյու Յորք, 6. 03. 2004:



ՀԱՅԵՐԻՎ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԲՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

«Երկակի ստանդարտներ գործնականում. դա է ունիվերսալ ստանդարտ սկզբունքների անխուսափելի գինը»:

Սամուել Հանթինգտոն

Ցեղասպանության հետևանքով հայերը կորցրին իրենց պատմական հայրենիքը: Աշխարհագրիկ հայերի սերունդները տասնամյակներ շարունակ այս կամ այն կերպ փորձում էին պաշտպանել իրենց իրավունքները, իսկ Սովետական Հայաստանում վերաբնակվածները զրկված էին պահանջատիրության հարցեր բարձրացնելու իրավունքից: **1973թ. հունվարի 27-ին Գուրգեն Յանիկյանի կրակոցները սթափեցրին մոլորակի միրհող խիղճը:** Աշխարհը ոչ միայն վերհիշեց հանիրավի մոռացության մատնած Հայ դատը, այլև շուրջ 15 երկրների խորհրդարաններ ճանաչեցին 1915-23թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը: Ճանաչեցին ու դատապարտեցին: Ոչ ավելին: Իսկ Թուրքիան շարունակում է տիրել իր բնաջնջած ժողովրդի հայրենիքին և ունեցվածքին՝ իսպառ բացառելով բռնությամբ հայրենանկ արված ժողովրդի տունդարձի հնարավորությունը:

Այս բազմակնճիռ հարցերի լուսաբանման է նվիրված ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ վերջերս հրատարակված պատմ. գիտ. դոկտոր, միջազգայնագետ **Հակոբ Հակոբյանի «Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը»** հիմնարար աշխատությունը: Այն հարուստ է վերլուծություններով, տեսական ընդհանրացումներով և, ամենակարևորը, գործնական ելքի հիմնավորումով, ինչպես նաև միջազգային ասպարեզում երկակի ստանդարտներով առաջնորդվող գերտերությունների և նրանց պատեհապաշտ վայ-քաղաքագետների որդեգրած ողորմելի քաղաքականության մերկացումներով:

- Պարոն Հակոբյան, մենագրության առաջին գլուխն ամբողջովին նվիրել եք հայրենիք վերադառնալու գաղափարին: Դուք բացատրում եք «հայրենիք» հասկացությունը, հիմնավորում մարդու՝ իր բնօրրանում ապրելու աստվածատուր իրավունքը՝ մարդկության ողջ պատմության ընթացքում: Ասացեք, խնդրեմ, քաղաքական գրականության մեջ ե՞րբ է առաջին անգամ արծարծվել հայրենիք վերադառնալու գաղափարը:

- Հայրենիքը պատմական կատեգորիա է: Միջազգային իրավունքում հայրենիքը որպես այդպիսին չի արծարծվել: Միջազգային իրավունքը խնդրի հիմքում դնում է տարածքային ամբողջականության սկզբունքը:

Հայրենիքի գաղափարի սաղմերը ծնվել են նոր քարե դարի (նեոլիթ) շրջանում: Այն առաջին հերթին կապված է նստակեցության՝ հողագործական աշխատանքների, կենդանիներ ընտելացնելու և էթնոսի ձևավորման հետ: Միջազգային իրավունքը հայրենիքի գաղափարը պաշտպանում է ոչ ուղղակիորեն, այլ էթնիկական տարածքի իմաստով, իսկ այն համընկնում է «հայրենիք» հասկացության հետ: Գերտախելին պետություն-հայրենիքն է: Պետության բացակայությունը երբեք չի նշանակում, թե տվյալ ժողովուրդը չունի հայրենիք: Բոլոր այն ժողովուրդները, որոնք չունեն անկախություն, ունեն հայրենիք և իրենց էթնիկական տարածքի տերն են:

Միջազգային իրավունքը պաշտպանում է ոչ միայն պետությունների տարածքային ամբողջականությունը, այլև էթնիկական տարածքի ամբողջականությունը:

- ԼՂ-ի հիմնախնդրի լուծման համար մույն այդ միջազգային իրավունք կոչեցյալը վերանում է իր իսկ որդեգրած սկզբունքներից՝ առաջնորդվելով երկակի ստանդարտներով:

- Դա հատուկ է մեծ տերությունների քաղաքականությանը: Մի դեպքում նրանք պաշտպանում են ազգերի ինքնորոշման իրավունքը, մյուսում՝ տարածքային ամբողջականություն: Մինչդեռ այդ սկզբունքները հակադրել չի՞ կարելի:

- Ներկայացրեք, խնդրեմ, «հայրենիք» հասկացության առանձնահատուկ նշանակությունը գլոբալացման աշխարհաքաղաքական խաղերի այսօրվա պայմաններում: Ի՞նչ

հանգամանքներում այն կկորցնի իր իմաստը և պարզապես կվերանա:

- Գլոբալացումն, իրոք, հավակնություն ունի վերացնելու հայրենիքները, ջնջելու սահմանները: Արդյունքում հավակնում են ստեղծել միաբևեռ ԱՄՆ կամ բազմաբևեռ աշխարհ (Արևմտյան Եվրոպա, Ռուսաստան, Չինաստան և այլն): Աշխարհը չի կարող վերածվել միաբևեռ կամ բազմաբևեռ ինչ-որ մի գոյացության: Գլոբալացման այն տարբերակը, որ հետապնդում են ամերիկացիները՝ իշխել ամբողջ աշխարհի վրա, դատապարտված է: Աշխարհն այսօր բազմակենտրոն է: Բայց դա չի նշանակում, թե փոքր պետությունները չեն կարող ապրել ինքնուրույն, ինքնիշխան կյանքով և անպայման պետք է ենթարկվեն որևէ մեծ տերության՝ համախմբվելով որևէ կենտրոնի շուրջ՝ տնտեսական կապերի, կրոնական առանձնահատկությունների, ավանդույթների և այլ գործոնների ուժով:

Իսկական համամարդկային արժեքներից է բխում այն ճշմարտությունը, որ բոլոր ազգերը, անկախ իրենց թվաքանակից, զբաղեցրած տարածքից, տնտեսական և մշակութային զարգացման մակարդակից, պետք է լինեն իրավահավասար: Այնպես ինչպես մարդիկ են հավասար օրենքի առջև, պատմության առջև պետք է հավասար լինեն նաև բոլոր ազգերը:

- Ե՞րբ և ի՞նչ պատճառներով են հայոց բնօրրանից տեղի ունեցել առաջին տեղահանությունները:

- Դա եղել է ամտիկ աշխարհի վերջերին և միջնադարի սկզբին՝ ասպատակությունների հետևանքով: Բոլոր ժամանակների նվաճողները գիտեին մի բան. նվաճված երկրներին տիրելու լավագույն միջոցը, եթե չես կարող նրա ժողովրդին հնազանդեցնել, նրա բնիկներին հայրենիքից զրկելն է: Հայկական հարցը միակը չէ: Եղել են սերբական, բուլղարական և այլ ազգային հարցեր, որոնք վաղուց լուծված են:

- Ե՞րբ սկսվեց հայերին իրենց բնօրրանից զրկելու տեսության մշակումը, որպեսզի թուրքերն այնտեղ «բնիկ» համարվեին: Ե՞րբ սկսվեց Թուրքիան «թրքացվել»:

- Թուրքիան թրքացվել և թրքացվում է երկու ձևով: Առաջին տեղաբնիկներին ֆիզիկապես բնաջնջելով կամ արտաքսելով: Հայերի համար դա սկսվել է 1890-ական թթ.: Ի դեպ, ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, երբ ռուսները Արևմտահայաստանի գրավված տարածքները կրկին վերադարձնում էին Թուրքիային, այն անմիջապես հայաթափվում էր: Ռուս-թուրքական պայմանագրերում միշտ մի կետ կար. Թուրքիան չպետք է հետապնդի իր այն քաղաքացիներին, ովքեր պատերազմի ժամանակ համակրել և օգնել են Ռուսաստանին: Նույնը վերաբերվում էր Ռուսաստանին: Սակայն թուրքերը երբեք չէին կատարում իրենց պարտավորությունները, և ամեն անգամ հայերը հեռանում էին իրենց բնօրրանից՝ ռուսական բանակի հետ:

Թրքացման երկրորդ տարբերակն սկսվեց Քեմալի ժամանակ: Սա պահանջել է թուրք գիտնականներից դադարեցնել թուրքերի եկվորության մասին խոսակցությունները և ասել, որ իրենք տեղաբնիկ են, ծագում են խեթերից: Ավելի ուշ խեթերին ավելացան շուներները, բաբելացիները, ուրարտացիները... Ավելին, սկսել են «հիմնավորել», որ քաղաքակիրթ բոլոր ժողովուրդները ծագում են թուրքերից... 1920-ական թթ. կեսերից թուրքական «գիտությունն» սկսեց մեզ «դուրս գրել» մեր պատմությունից:

- Ինչպե՞ս է արտացոլվել հայերի՝ հայրենիք վերադառնալու հարցը միջազգային պայմանագրերում:

- Սկսած 1828թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրից՝ զանազան միջազգային փաստաթղթերում ճանաչվում է հայերի ներգաղթի իրավունքը: Դա լավագույնս դրսևորվեց թերևս Սևրում, սակայն Լոզանի կոնֆերանսում Թուրքիան մերժեց տարագրված, բռնագաղթված հայերի՝ հայրենիք վերադարձը, երբ հայերի այդ իրավունքն այնտեղ ուզում էին փոխարինել Թուրքիայում «Հայկական օջախի» ստեղծումով: Արևմտյան տերությունները, փաստորեն, Լոզանի պայմանագրով իրենց համար վերջնականապես թաղեցին Հայկական հարցը: Բայց ոչ ոք այդ իրավունքը չի տվել նրանց, իսկ մենք հետամուտ ենք լինելու մեր դատի լուծմանը...

Լոզանում «Հայկական օջախ» ստեղծելու հարցադրումն ինքնին ապացուցում է, որ հայերն ունեցել են և շարունակում են ունենալ հայրենիք վերադառնալու բնական իրավունք:

- Կա թրքական տեսակետ՝ թուրքերը չեն գրավել և չեն ոչնչացրել հայկական իշխանությունները Արևմտահայաստանում, այն արդեն նվաճել էին բյուզանդացիները: Մի՞թե կարելի է հայրենիքը և պետականությունը նույնացնել: Մի՞թե հայերն իրավաբանորեն դադարել էին այդ հող ու ջրի տերը լինելուց:

- Թուրքերը ճիշտ չեն: Բյուզանդական նվաճումից հետո, երբ ընկավ Բագրատունիների հարստությունը, պետականության սաղմերը պահպանվել էին (մասնավորապես Ղարաբաղում): Սելջուկ թուրքերը, 11-րդ դարում Անդրկովկասը և Փոքր Ասիան նվաճելուց հետո, ոչնչացրին հայկական պետականության մնացորդները: Կիլիկիայի հայկական պետության անկման գործում (1375թ.) ևս թուրքերն իրենց սև «գործն» արեցին. թուրքացրին երկիրը, իսկ մամուլները գրավեցին: Թուրքերը ոչ մի արդարացում չեն կարող գտնել: Բայց խնդիրը միայն դա չէ: Ես արդեն ասացի՝ կորցնել պետականությունը, չի նշանակում զրկվել հայրենիքից: Եվրոպական շատ ժողովուրդներ այսօր չունեն պետականություն. կատալոնացիները՝ Իսպանիայում, շոտլանդացիները և ուելսցիները՝ Անգլիայում, կորսիկացիները, բրետոնները՝ Ֆրանսիայում և այլն: Հայրենիքը չի՝ կարելի նույնացնել պետականության հետ: Գերադասելի է, իհարկե, որ ամեն մի ժողովուրդ ունենա իր պետություն-հայրենիքը:

- Ձեր աշխատության երրորդ գլուխն ամբողջովին նվիրված է հայ ժողովրդի՝ հայրենիք վերադառնալու ողիսակազմին:

- Ամենից առաջ դա վերաբերում է միջազգային այն պայմանագրերին ու համաձայնագրերին, որոնք հաստատում են տարագիր հայության հայրենիք վերադառնալու իրավունքը: Այդ մասին ես արդեն հակիրճ ասացի: Սակայն մինչև Առաջին համաշխարհային պատերազմը ո՛չ հայ քաղաքական ուժերը, ո՛չ Պոլսի պատրիարքարանը, ո՛չ էլ Ամենայն հայոց կաթողիկոսարանը արևմտահայության համար չեն դրել անգամ ինքնավարության խնդիր: Նույնիսկ երբ 1912-14թթ. Ռուսաստանի նախաձեռնությամբ արևմտյան տերությունները փորձեցին վերադառնալ 1878թ. Բեռլինի վեհաժողովի բարենորոգումների ծրագրին, խոսքը դարձյալ վերաբերում էր բարեփոխումներին: Միայն պատերազմն սկսվելուց հետո դրվեց անկախ Հայաստանի հարցը: Բնականաբար, այն կարող էր արմատապես լուծվել, եթե լուծվեր Հայ դատն ամբողջությամբ, այսինքն՝ Հայաստանը դառնար անկախ պետություն՝ միավորելով իր արևելյան և արևմտյան հատվածները: Այդ դեպքում միայն վերջ կդրվեր հայոց ողիսականին և կունենար երջանիկ ավարտ: Մեզանում այսօր միտում կա՝ անհաջողության համար մեղադրել ինչ-որ գործիչների, պատճառաբանել Հայաստանի կառավարության անդամների միջև եղած տարածայնությունները և այլն: *Մեր դժբախտության պատճառը մեծ տերությունների աշխարհաքաղաքականությունն է: Ո՞վ էր խանգարում նրանց՝ կատարելու համար Սևրի դաշնագրի կետերը: Չուզեցին՝ չարեցին, որովհետև դա չէր համապատասխանում նրանց ինտերեսներին:*

- Սովետական դասագրքերում գերազանահատվում էր Ռուսաստանի ժողովրդի դեկրետը (որոշումը)՝ «Թուրքահայաստանի մասին», իսկ Դուք այն անվանել եք «Ժառանգանակ»: Ի՞նչ հնարավորություններ էր սահմանել այդ փաստաթուղթը՝ արևմտահայության պատմական և իրավաբանական իրավունքների պաշտպանության համար:

- Այդ փաստաթուղթը պարզապես թուղթ է: Խորհրդային կառավարությունն ինքն ստեղծեց զուտ քարոզչական նպատակ հետապնդող այդ փաստաթուղթը, և ինքն էլ մի հարվածով վերջ տվեց դրա գոյությանը: Խորհրդային պատմական գրականության մեջ անհարկի փառաբանվել է այն որպես Արևմտահայաստանի անկախության իրավունքը ճանաչող դեկրետ: Իրականում այն ոչինչ չի տվել: Պատճառաբանում են՝ եղան մի շարք խոչընդոտող հանգամանքներ: Առաջինը՝ 1918թ. մարտի 3-ի Բրեստի հաշտության, որը Ռուսաստանը հարկադրված ստորագրեց Գերմանիայի դաշնակիցների հետ (այդ թվում՝ Թուրքիայի), ռուսական բանակը պետք է հեռանար Արևմտյան Հայաստանից: Բայց բանակն սկսել էր հեռանալ 1917թ. վերջերին: Երկրորդ՝ Բրեստում ոչ մի որոշակի պահանջ չի ներկայացվել արևմտահայության հայրենադարձության վերաբերյալ: «Թուրքահայաստանի մասին» դեկրետում ճանաչվում է արևմտահայության՝ ինքնիշխան պետականություն ստեղծելու իրավունքը՝ հանրաքվեի միջոցով: Նույնիսկ նշվում էր, որ հանրաքվեն պետք է անցկացվի այն բանից հետո, երբ տարագրված կամ Թուրքիայի խորքերը քշված հայերը վերադառնային իրենց բնակավայրերը: Բայց հանրաքվեից առաջ ռուսական բանակը հեռացավ Արևմտյան Հայաստանից (նույն այդ դեկրետի պահանջով պետք է հեռանար), որպեսզի տպավորություն չստեղծվեր, թե ռուսները ներգործում են ընտրության ելքի վրա: Բայց ինչպե՞ս կարելի էր հանրաքվեով որոշել մի ժողովրդի հարցը, որը ֆիզիկական բնաջնջման ու բռնագաղթի էր ենթարկվել, արտաքսվել իր բնօրրանից, դարձել չնչին փոքրամասնություն կամ իսպառ բացակայում էր...

Մենք կորցրել ենք հայրենիք: Ու թեև «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» 1948թ. կոնվենցիայի 19 հոդվածներից ոչ մեկում չի ասվում ցեղասպանության զոհի փոխհատուցում ստանալու իրավունքի, ամենից առաջ՝ կորցրած հայրենիքը ետ ստա-

նալու մասին, մինևույն է, այդ իրավունքը պետք է հարգվի, որովհետև այն ճանաչված է միջազգային պայմանագրերով, օրինակ՝ Սևրով և միջազգային իրավունքի սկզբունքներով: Եվ կոնվենցիայում այդ իրավունքը հաստատող կետի բացակայությունն այդ փաստաթղթի ամենագլխավոր, բայց ոչ միակ թերությունն է: Հետաքրքրական է, որ Հայոց ցեղասպանության փաստը ճանաչած խորհրդարաններից և ոչ մեկը (այդ թվում՝ նաև Եվրախորհրդարանը, որն ուղղակի ժխտում է մեր պահանջատիրության իրավունքը), իրենց այդ առնվազն անհասկանալի դիրքորոշումը չեն փորձում հիմնավորել կոնվենցիայի նշված թերությամբ: Այնուհանդերձ, կրկնում են, կոնվենցիայի արմատական թերությունը չի կարող հիմք ծառայել՝ մեր հողային պահանջատիրությունը մերժելու համար: Ավելին, այսօր Արևմտյան Հայաստանում հայերի չնչին փոքրամասնություն լինելը կամ բացակայությունը չի կարող հիմք ծառայել՝ մեր այդ իրավունքը բացառելու համար, որովհետև այդ իրողությունը հետևանք է միջազգային ոճրի՝ հայերի ցեղասպանության և բռնագաղթի: Սակայն Առաջին աշխարհամարտից հետո արևմտյան գործիչներն այդ հետևանքն արդեն օգտագործում էին մեր դեմ՝ հօգուտ միջազգային ոճրագործ և պատերազմում պարտություն կրած թուրքերի: Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջը, որը քիչ ոգեշունչ խոստումներ չէր շալլել հայերի օգտին, մինչև իսկ հայտարարեց. «Ոչ մի սկզբունքով, որոնք առաջ են քաշվել դաշնակից տերությունների կողմից, մենք չենք կարող պաշտպանել մի վայրի հանձնումը հայերին, որտեղ մահմեդականների գերիշխող մեծամասնություն գոյություն ունի»:

Ամենթերություն է Հայ դատը լուծել հանրաքվեով՝ Արևմտյան Հայաստանում հայերի բացակայության պայմաններում, որն, ի դեպ, ունի իր պատճառները, թեև դրանց հետ չէին ցանկանում հաշվի նստել լլոյդջորջերը: Ավելին, կոնվենցիան պատասխանատու է համարում ոչ թե ցեղասպանություն կատարած պետությանը, այլ առանձին անձանց՝ պետական գործիչներին:

ՄԱԿ-ը երբեք չի քննարկել Հայոց ցեղասպանության հարցը: Սակայն բացառված չէ, որ, եթե երբևիցե քննարկի այն, վկայակոչի կոնվենցիայի հիշյալ թերությունը:

- Ամփոփենք Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը: Գրել եք՝ նա «թաղեց» Հայ դատը՝ իր թրքամետ դիրքորոշմամբ: Ինչպե՞ս: Ինչո՞ւ էր դիվանագիտական կոչված խողովակի տրամագիծն անընդհատ փոքրացվում հայերիս համար:

- Իրոք ծաղրուծանակ է բնաջնջված, արտաքսված և մասամբ ողջ մնացած ժողովրդի հարցը լուծել հանրաքվեով, գոհին ու դահճին տրվել էր նույն իրավունքը: Խ. Ռուսաստանի և քեմալական թուրքիայի մերձեցման փաստն ուղղված էր առաջինի շահերի դեմ: Ռուսները շատ բան կորցրեցին դրանով: Կատարվեց այն, ինչ այնքան երազում էր Անգլիան: Վերջինիս պետք էր ուժեղ թուրքիա՝ ընդդեմ Ռուսաստանի առաջխաղացման դեպի Միջերկրական ծով, դեպի նեղուցներն ու Մերձավոր Արևելք: Ռուսաստանն իր միջոցներով հնարավորություն տվեց Քեմալին հաղթել հույներին և վերականգնել ոչ միայն հակառուսական պատմեշը, այլև այն տեղափոխել դեպի հյուսիս: Ռուսաստանը, չունենալով այդ իրավունքը, զիջեց թուրքիային Կարսը, Արդահանը, Սուրմալուն:

Ռուսաստանն այսօր քաղում է դրա պտուղները: Այսօր նա գործ ունի ՆԱՏՕ-ի անդամ մի երկրի հետ, որն ապահովում է այդ դաշինքի հարավային թևի հզորությունը և ունի ամենամեծ ու ամենաուժեղ բանակը՝ ԱՄՆ-ից հետո: Իսկ մեզ զոհեցին՝ Քեմալով բոլշևիկյան հեղափոխությունն Արևելքում տարածելու նպատակի համար...

- Հայ դատի ծախողման և տարագրված հայության հայրենիք վերադառնալու ձգտումն ի չիք դարձնելու գործում, համաձայն Ձեր փաստարկների, առանձնահատուկ բացասա-

կան դեր է խաղացել բրիտանական դիվանագիտությունը: Հայտնի է վարչապետ Լլոյդ Ջորջի խոստովանությունը. «Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-97 և 1909 թթ. զարհուրելի սպանդներին և 1915թ. ամենասարսփելի կոտորածին»: Ինչպե՞ս:

- Երեսպաշտությունը յուրահատուկ է դիվանագիտությանը, բռնակալներին: Բրիտանական դիվանագիտությունը թրծված է, փորձված: Մեկ այլ առիթով էլ այդ վարչապետն ասել է. «Ոչ մի իրավունք չունենք թույլ տալ հայերը վերադառնան Արևմտյան Հայաստան: Մենք չպետք է թույլ տանք, որ քրիստոնյա փոքրամասնությունն իշխի մահմեդական մեծամասնությանը»: Ժամանակին նման միտք հայտնել էր Ռուսաստանի ԱԳ նախարար Սազոնովը: Ցարիզմը դեմ էր ներգաղթին: Միայն ժամանակավոր կառավարությունը թույլ տվեց Անդրկովկաս և Հյուսիսային Կովկաս տարագրված 150 հազար հայերին վերադառնալ Արևմտահայաստան: Ցարիզմն ուզում էր ստեղծել եփրատյան կոզակություն:

Անգլիական դիվանագիտության ավանդական խնդիրն է եղել վնասագերծել Հնդկաստանը, ապահովել այն ռուսական ներթափանցումից: Երբ, 1828-29թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, ռուսական բանակը մտավ Ադրիանապոլիս, Անգլիան նոտա ուղարկեց Ռուսաստանին՝ հանկարծ չփորձի գրավել Եգիպտոսը...

Քանի որ մենք ռուսական կողմնորոշում ունենք, Հայ դատի լուծումը Ռուսաստանի միջամտությամբ ձեռնտու չէր Անգլիային: Դա դեմ էր անգլիական ծավալապաշտությանը:

- Գրքում բավական մուրթ հարցադրում եք կատարել՝ հայրենադարձություն, թե՞ ներգաղթ:

- Եթե հայերը տարագիր են, նշանակում է նրանք ապատրիդներ են՝ հայրենագուրկներ: Այդ տեսանկյունից ես դեմ եմ երկքաղաքացիությանը: Նախ՝ եթե նրանք ներգաղթեն Հայաստան, նրանց այդ կարգավիճակը կվերանա: Երկրորդ՝ ոչ մի արտասահմանցի հայ չի կարող Հայաստանի լիարժեք քաղաքացի համարվել. իրավունքներ կունենա, բայց պարտականություններ՝ ոչ: Ինչպե՞ս կարող է այս կամ այն երկրի հայը որոշել, թե ով է լինելու Հայաստանի նախագահը: Չէ՞ որ նա այդ նախագահի կառավարման օբյեկտը չէ: Այդ պատճառով էլ միջազգային իրավունքում շեշտը դնում են հայրենադարձության իմաստի վրա: Եթե տարագիր հայության սերունդները գալիս են Հայաստան, դրանով լուծվում է նրանց հարցը. նրանք դառնում են ՀՀ քաղաքացի և դադարում են տարագիր լինելուց: Դա հայրենադարձություն չէ, ներգաղթ է: Հայրենադարձության դեպքում արևմտահայերը պետք է վերադառնան այնտեղ, որտեղից նրանց արտաքսել են և ստանան այն, ինչ իրենցից խլել են:

- Ցեղասպանությունը, բռնագաղթը, հայրենագրվումը մարդու իրավունքների ամենակոպիտ խախտումներ են: Ի՞նչ են հռչակել հայրենիք վերադարձի մասին միջազգային օրենքները՝ 1948թ. դեկտեմբերի 10-ի «Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագիրը», 1966թ. դեկտեմբերի 19-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտը» և այլն: Ի՞նչ է ասվում դրանց մեջ՝ փոխհատուցման և պահանջատիրության մասին:

- Այդ փաստաթղթերում ոչինչ չկա փոխհատուցման մասին: Բայց գերմանացիներն ընդունեցին, որ ֆաշիստական վարչակարգի օրոք եղել է ցեղասպանություն և կամովին վճարեցին հրեաներին: Նրանք կարող էին վկայակոչել ցեղասպանության մասին հռչակագիրը և հրաժարվել: Սակայն մարդասիրական քայլ կատարեցին. շրջանցեցին այդ փաստաթղթերը և հատուցեցին: Իսկ թուրքերն անգամ չեն ուզում ընդունել ցեղասպանությունը:

Հայրենիք վերադարձի մասին որոշակի հռչակագրեր, համաձայնագրեր կամ միջազգային այլ պայմանագրեր չկան: Դրանք պետք է բխեցնել տարբեր փաստաթղթերի առանձին

կետերից, ինչը ես արել եմ գրքում: Մարդու իրավունքն է հեռանալ իր երկրից և վերադառնալ այնտեղ: Պետությունն իրավունք չունի իր կամքով քաղաքացիությունից զրկել ում ուզում է, երբ ուզում է: Միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը դա արգելում են: Հայրենիք վերադառնալու իրավունքը բխում է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտից»:

- Աշխարհի խորհրդարանները ստեպ-ստեպ ճանաչում են Հայոց ցեղասպանությունը: Նրանց ընդունած բանաձևերում խոսք չկա հատուցման և հայրենիք վերադառնալու իրավունքի մասին: Կա՞ որևէ միջազգային իրավական փաստաթուղթ, որն սպառնի կերպով շարադրեր միջազգային իրավունքի գլխավոր կամ հիմնարար սկզբունքները:

- Միջազգային իրավունքը դեռևս կողքեսներ չունի, չնայած 1950-ական թթ. ՄԱԿ-ն զբաղվում է այդ հարցով: ՄԱԿ-ի կանոնադրությունը միջազգային իրավունքի աղբյուրն է: Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերին, դրանք մեզ պետք չեն որպես այդպիսին: Ընդունում են, որ այդ փաստը եղել է: Թուրքերն էլ կարող են նման մի բան ընդունել: Ամերիկաբնակ թուրք հոգեբան Վամիկ Վուքանի կարծիքով՝ հայերին սզից հանելու համար կարելի է ընդունել այդ ողբերգության փաստը և զղջումի հուշարձան կառուցել (ինչպես ամերիկացիները Վաշինգտոնում կառուցել են այդպիսի հուշարձան՝ նվիրված Վիետնամի պատերազմին): Մեզ պետք է այնպիսի ճանաչում, որն ընդունում է տարագրված հայության հայրենիք վերադառնալու իրավունքը: Այդ առումով արմատական է ՌԴ ընդունած որոշումը: Այնտեղ ասված է, որ ցեղասպանությունը կատարվել է հայերի հայրենիքում, որ այդ ցեղասպանությամբ Թուրքիան գործել է Ռուսաստանի շահերի դեմ. պանթուրքական ծրագրի տարածման նպատակ ուներ: Ցավոք, այնտեղ էլ խոսք չկա փոխհատուցման և վերադարձի իրավունքի մասին:

Բայց Ֆրանսիայի Սենատի ընդունած այդքան տարփող օրենքը բաղկացած է մի քանի բառից: Այնտեղ չկան օրենքին յուրահատուկ ամենատարրական պահանջները: Ասված է. «Ֆրանսիան հրապարակավ ճանաչում է հայերի ցեղասպանությունը»: Եթե դա օրենք է, պետության անունը պետք է նշվի ճիշտ՝ Ֆրանսիայի Հանրապետություն: Պետությունը ոչ թե հրապարակավ, այլ պաշտոնապես պետք է ճանաչի: Հի հասկացվում՝ ո՞ր ցեղասպանության մասին է խոսքը, ո՞վ է կատարել, ե՞րբ, որտե՞ղ...

Վերցնենք Եվրախորհրդի 1987թ. հունիսի 18-ին ընդունած բանաձևը: Առաջին կետում ասվում է, որ Օսմանյան կայսրության մեջ 1915-17թթ. կատարված դեպքերը, համաձայն 1948թ. կոնվենցիայի, ճանաչվում են որպես ցեղասպանություն: Երկրորդ կետում ասվում է, որ ցեղասպանությունը ճանաչելը, այնուամենայնիվ, ցեղասպանության պատասխանատու չի ճանաչում ժամանակակից Թուրքիային և թույլ չի տալիս ներկայացնել նրան ո՛չ իրավական, ո՛չ նյութական, ո՛չ բարոյական պահանջներ: Այսինքն՝ այդ բանաձևը ոչնչացրեց ինքն իրեն: Բայց կան փաստաթղթեր, որտեղ մեր իրավունքը ճանաչված է: Դժբախտաբար, դրանք ընդունել են ոչ թե կառավարական, այլ միջազգային կազմակերպություններ: 1984թ. ապրիլին Փարիզում «Ժողովուրդների մշտական ասոցիացիան» իր ամբողջ նստաշրջանը նվիրեց Հայկական հարցին և ընդունեց ոչ թե որոշում, այլ դատավճիռ: Երկրորդը 1989թ. մայիսին Սան Անտոնիոյում (ԱՄՆ) Եկեղեցիների համաշխարհային խորհրդի որոշումն է («Հայերի ցեղասպանության մասին», որով պահանջվում է Թուրքիայից «ազատել զավթած Հայաստանը և ապահովել հայրենիք վերադառնալու սփյուռքահայերի իրավունքը»:

- Փաստորեն 1919թ. Թուրքիայի անկախ դատարանների և 1921թ. Գերմանիայում Սողոմոն Թեհլիրյանի դատավարության վճիռները ճանաչեցին և դատապարտեցին Հայոց ցե-

ղասպանությունը: Արդյո՞ւնքը:

- Ե՛վ մարդիկ, և՛ պետությունները շուտ են մոռանում փաստերը: Այսօր հրճվում ենք, որ Ֆրանսիայի Սենատն ընդունել է այդ փաստը: Իրականում, ֆրանսիական կառավարությունը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը 1915թ. մայիսի 24-ի՝ Անգլիայի և Ռուսաստանի կառավարությունների հետ արված միացյալ հայտարարությամբ: Քեմալը չճանաչեց սուլթանական դատարանի վճիռները: Ժամանակակից Թուրքիան քեմալականի շարունակությունն է: Նրանց կարծիքով՝ դա հարկադրաբար արված որոշում է. սուլթանական կառավարությունն իբր դաշնակիցների «գերության» մեջ էր: Իսկ 1921թ. գերմանական դատավարությունը դեմոկրատական էր: Կայսերական վարչախմբի հեռանալուց հետո գերմանական դատարանը դարձավ դեմոկրատական:

- Տարօրինակ չէ՞, որ անգամ Հայոց ցեղասպանության փաստը ճանաչած երկրներն այսօր մերժում են Հայաստանի և արցախահայության վերամիավորման օրինական իրավունքը:

- Դա անկարելի է բացատրել, որովհետև ոչ մի տրամաբանության չի ենթարկվում: ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի հռչակած տարածքային ամբողջականության սկզբունքը չի վերաբերում այս դեպքերին, այլ ինքնիշխան պետությունների հարաբերություններին. «Որևէ ինքնիշխան պետություն իրավունք չունի զավթել մեկ այլ ինքնիշխան պետության տարածքը»: Սա՛ է ամբողջը: Սա կապ չունի ազգերի ինքնորոշման իրավունքի հետ: Այստեղ չկա հակամարտություն: Սա ազգային-ազգագրական, հակազաղութային պայքար է:

- ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայում» կա մի հարընթում (պարադոքս): Ցեղասպանության համար պահանջվում է պատժել կազմակերպիչներին, այսինքն՝ անհատների, սակայն ոչ մի պատժամիջոց չի առաջարկվում ցեղասպանություն կատարած պետության համար: Անհատը չի կարող ցեղասպանություն կատարել: Այն կարող է կատարել միայն պետական մեքենան՝ պետական միջոցներով: Այնուամենայնիվ, հետաքրքիր է միջազգային իրավունքն ի՞նչ պատժամիջոցներ է սահմանել ոճրագործ պետությունների համար:

- Կան միջազգային հանցագործություններ՝ ռազմական, ռասիզմ, ապարտեիդ, ցեղասպանություն: Դրանք անպայմանորեն պատժվում են: Դրանց վրա չի տարածվում վաղեմությունը: Եթե այդպես չլիներ, Եվրախորհուրդը 1987թ. չէր կարող ճանաչել 1915թ. դեպքերը որպես ցեղասպանություն: Հետևաբար Թուրքիան անպայման պետք է պատժվի:

Մենք կանք, ապրում ենք և մեր հայրենիքի տերն ենք: Այդ հողի վրա մեր քաղաքակրթության հետքերը ցույց են տալիս, որ մենք ենք նրա տերը և ո՛չ թուրքերը: Մենք չենք կարող այդ հողի համար չպայքարել: Միջազգային օրենքի բոլոր չափանիշներով մենք ունենք մեզանից բռնազավթված ետ ստանալու իրավունքը: Պարզապես մեծ տերությունները չեն ցանկանում ճանաչել միջազգային իրավունքը: Այդ մասին խոսում են, բայց գործում են այլ կերպ: Մենք չպետք է դադարենք նրանց մերկացնելուց: Մեր դժբախտությունների պատճառը մեծ տերությունների աշխարհաքաղաքականությունն է և ոչ թե միջազգային իրավունքը կամ պատմությունը: Պատմական փաստաթղթերն էլ մեր օգտին են:

- Հուսանք, որ մի օր կհաղթանակի պատմական արդարությունը և անիրավիված բոլոր ժողովուրդները կվերադարձնեն իրենցից բռնազավթվածը: Իսկ Թունամյանի բառերով ասած՝ հազար դարում հազիվ մարդասպան դարձած հավաքականությունը մարդեղեն գծեր կդրսևորի՝ փորձելով հրաժարվել իր այնքան փայփայած մարդասպանի խարանից...


Հասմիկ Գուլակյան

ԵՎ ԲԱՍԻԱԿԱՆ ՌԻՔՅՈՒՆԸ

ԵՎ ՂԱՐԱԲԱՂԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՈՒԳԻՆ, ՂԱՐԱԲԱՂԸ ՊԵՏՔ Է ԴԻՏԵԼ ԻՐԻՆԿ ԳՏՈՒԿ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ»

Ալ. Դուգինը Ռուսաստանի Դաշնությունում ճանաչված աշխարհաքաղաքական վերլուծաբան է, Եվրասիական գաղափարախոսության վերածնողն ու հիմնական տարածողը: Գարցազրույցը տպագրվում է կրճատումներով:



- Ամեն լուրջ շինարարություն պահանջում է որոշել այն հոգևոր հիմքը, որի վրա բարձրացվում է հասարակական-քաղաքական շարժման ամբողջ շենքը: Արևելյան քրիստոնեություն

հոգևոր տարածքի վերածննդի գաղափարը պահանջում է գիտակցել անցած ուղին և որոշել ավանդույթների վերականգնման ուղիներն ու ձևերը... Ինչպե՞ս կարելի է օգտագործել հին-արևելյան եկեղեցիների, մասնավորաբար Հայ Առաքելական եկեղեցու փորձը՝ արևելյան քրիստոնեության հոգևոր տարածքի վերածննդի մեջ:

- Կարծում եմ, որ շատ կարևոր է բարձրացնել Արևելյան քրիստոնեության թեման՝ որպես ինչ-որ մերձավոր քաղաքակրթական իրականության... Կարևոր է մետաֆիզիկական մերձավորությունը, հոգևոր հայեցողական փորձի միասնությունը: Այս իմաստով՝ հարկավոր է ուշադրություն դարձնել նաև ոչ քրիստոնեական համաշարադրանքում (կոնտեքստում) մասնավորաբար իրանական հոգևոր արժեքներին, հատկապես շիայականության յուրահատկությանն ու եզակիությանը... Մեզ համար ծայր աստիճան կարևոր է աշխարհաքաղաքական և մետաֆիզիկական սահման անցկացնել ներկայիս ոչ թե կրոնների, այլ հոգևոր փորձի արևելյան ձևերի միջև: Կա Արևելյան քրիստոնեությունը՝ իսկականն ու խորը, կա նաև արևմտյան տարբերակներով վերջինիս աղճատումը՝ կաթոլիկություն, բողոքականություն: Արևելյան քրիստոնեության առանցքը ուղղափառությունն է: Իր ձևով սրան է պատկանում նաև միաբնակ Հայ Առաքելական եկեղեցին: Արևելյան քրիստոնեությունն ավելի

մոտ է հայեցողական շիայականությանը, քան «գործուն» և «պղծված» Արևմտյան եկեղեցուն: Շատ անհրաժեշտ է գիտակցել, թե միայն հարցի այսպիսի՝ դրվածքով մենք կհասնենք համապատասխան արդյունքների, և, բացի այդ, կծնակերպենք մի այնպիսի մոտեցում, որը թույլ կտա խոյս տալ միջդավանական աղետներից Եվրասիայում և որոշակիորեն՝ Կովկասում:

Եվրասիական միասնական տարածքի վերածննդի խնդրի առաջադրումը պահանջում է առաջադրել և լուծել ավանդական իսլամի ու արևելյան քրիստոնեության միջև մեծ մասամբ անհետացած կամ աղճատված կապերի վերականգնման ու ամրապնդման խնդիրը:

- Ինչպե՞ս կարելի էր օգտագործել հայության, մասնավորաբար Արցախի (Լեռնային Ղարաբաղի) հոգևոր ներուժն ու պատմական փորձը՝ մանաւորիկ գործընթացներ նախածեռնելու համար՝ հաշվի առնելով արցախահայության ինչպես իրանական, այնպես էլ ռուսական քաղաքակրթությունների շրջանակներում համագործակցության պատմական փաստը:

- ...Աշխարհի առանցքը՝ Արարատ սուրբ լեռը, գտնվում է պատմական Հայաստանի տարածքում: Հետևաբար նույն աշխարհագրությունն ու պատմությունը հայերին վերածում են Եվրասիական համադրության (սինթեզ) բևեռի: Հայերը հնագույն մշակույթ ունեցող հնդեվրոպական ժողովուրդ են, ավանդաբար հարևան են եղել Եվրասիայի հիմնական քաղաքակրթություններին: Տրամաբանական պիտի լինեք, եթե հենց հայերը հանդես գային Եվրասիական համարկման (ինտեգրացիա) նախածեռնողի դերում: Ինչ վերաբերում է որոշակիորեն Արցախին, ապա նա Հայաստանի սրբազան երկրամասն է, ամբողջ ժողովրդի հոգևոր ու մարտական ակունքը:

...Արցախի դերը դուրս է գալիս պարզ քաղաքականության մակարդակից և դառնում մետաֆիզիկական հասկացություն: Եթե ռուսական քաղաք-

քակրթության համար Լեռնային Ղարաբաղը հատուկ մետաֆիզիկական հասկացություն չէ, միայն ռազմավարական առաջապահ ամրոց (ֆորպոստ) է, որի շնորհիվ բացվում է ամբողջ Կովկասի վրա տարողունակ (մասշտաբային) հսկողություն հաստատելու հեռանկարը, ապա իրանական քաղաքակրթության համար այն իսկապես «սրբավայր» է, «հոգևոր հյուսիս»:

Ենթադրում եմ՝ Արցախի հայերը պարտավոր են գիտակցել այդ տարածքի համընդհանրականությունը (ունիվերսալիզմը): Պետականության կարգավիճակի հավակնող միաէթնիկ կառուցվածքները ոչ հաստատուն պատմություն ունեն, ոչ էլ ապագա: Պետք է հասկանալ, որ էթնոսը հողին կապված է ոչ քաղաքականորեն: Ավելի տրամաբանական կլինեք Լեռնային Ղարաբաղը դիտել որպես հատուկ «Եվրասիական տարածաշրջան» և հեռակետ (պլացդարմ)՝ իրագործելու համար «Եվրասիական դաշնակցության (ֆեդերալիզմի)» հայեցակարգը, որտեղ էթնոսը ճանաչվում է քաղաքական սուբյեկտ, իսկ տարածքները աշխարհաքաղաքական սուբյեկտի տրամադրության տակ են: Նման պարագայում Արցախը կարող է դառնալ իսկական Եվրասիական բևեռ:

Ավելին՝ կարծում եմ, որ այս հարցը լուծելիս չպետք է ադրբեջանական կողմին «քցել» («չնկատել»): Ինչպիսին էլ լինեք Կովկասում թուրքական ցեղերի ներկայության պատմական հենքը, դա վերատեսության չենթակվող էթնիկ և ռասայական փաստ է: Տարածաշրջանի տարողությամբ՝ Եվրասիականության խնդիրն Ադրբեջանին աշխարհաքաղաքական դրական սցենարների նշագծումն է, հետևաբար նոր, այս անգամ՝ Եվրասիական լուծում պետք է գտնել հայ-ադրբեջանական հարաբերությունների համար:

Թյուրիմացություն պիտի լինեք Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ամբողջովին ավարտած ու ստատուս քվո հավերժ շարունակելի համարելը: Հարցը հետածգված է, բայց հանված չէ:

Իսկ դրա լուծման համար շատ ջանքեր են հարկավոր: Դրանք շոշափում են աշխարհաքաղաքական (Ռուսաստան-Եվրասիա և ատլանտյան երկրներ՝ ԱՄՆ, Արևմուտքը) և տարածաշրջանային իրողությունները (Ռուսաստան, Իրան, Թուրքիա, Յայաստան ու Ադրբեջան՝ ավելացրած արմատական իսլամի ուժերը): Այս գործոններն ուղղակիորեն ազդում են Ղարաբաղի իրավիճակի վրա: Առանց աշխարհաքաղաքականության՝ այս հանգույցն անհնար է լուծել: Կրկին ընդգծում են՝ այս հարցում հարկավոր է Ադրբեջանին ստեղծագործական դրական սցենարներ առաջարկել:

Ռուսաստանը պատրաստ չէ ԱՄՆ-ի ու Ատլանտյան միության երկրների՝ Յարավային Կովկասում հայտնվելուն և դեպի Վրաստան ու Ադրբեջան նրանց փաստական ճեղքումին: Ռուսաստանը ներկայումս ապակողմնորոշված է և թույլ: Ղեկավարության մեջ դեռևս արևմտամետների զգալի տոկոս կա: Այս պատճառով՝ Մոսկվան մինչև վերջ չի գիտակցում այն ռազմավարական կորուստները, որոնք Ռուսաստանը շարունակում է կրել Կովկասում: Եվրասիական աշխարհաքաղաքականությունն ու նրա առաջնահերթությունը, ցավոք, դեռևս, մշուշոտ են: Աշխարհամասերի պատերազմ է, և Ռուսաստան-Եվրասիան շարունակում է պարտություն կրել: Սրա հետ են կապված վերոհիշյալ գործընթացները:

-Այժմյան Ռուսաստանը կարող է Յարավային Կովկասում նպատակաճշված քաղաքականություն իրագործել՝ իր ազդեցությունը վերականգնելու համար, թե՛ ներկա վերնախավը հարցերի այս շրջանակն ընկալում է որպես երկրորդ կարգի ու հեռավոր ապագայի խնդիրներ:

- Անկարող է, քանի որ ռուսաստանյան ղեկավարության համար անհրաժեշտ պայման են մոլորակի աշխարհաքաղաքական հստակ պատկերի ընկալումը և ռուսաստանյան շահերի իրականացման պողպատյա կամքի առկայությունը: Խոսքն այն մասին է, որ արդի պայմաններում Ռուսաստանի ազդեցությունը կովկասյան տարածաշրջանում ուղղակիորեն շաղկապվում է Ռուսաստանի՝ աշխարհամասի տարողությամբ միջազգային քաղաքականության հետ: Պարզապես Ռուսաստանի «ներկայության ամրապնդումը» անկարելի է, և ոչ ոք (այսինքն՝ Արևմուտքը) դա թույլ չի տա նրան: Ուստի, իրավիճակը լուծվում է միայն աշխարհաքաղաքական բարդ խաղի միջոցով, որը շոշափում է Իրանի, Թուրքիայի և, մասամբ, Եվրոպայի շահերը: Եթե Ռուսաստանը դիտարկենք որպես տարածաշրջանային պետություն, ապա խոսք ան-

գամ չի կարող լինել ինչ-որ կովկասյան քաղաքականության մասին: Ռուսաստանի արդի վերնախավն ամբողջովին թույլ պատկերացում ունի Ռուսաստանի ինքնության, հետևաբար և նրա ռազմավարական հետաքրքրությունների մասին: Այս հարցում դրությունն աղետալի է:

- **Որքա՞ն ճիշտ ու նպատակահարմար կարող է լինել Լեռնային Ղարաբաղը հզորացնելու, տարածաշրջանում այն ռազմաքաղաքական ինքնուրույն գործոնի վերածելու քաղաքականությունը:**



Ըստ Ալ. Դուգինի՝ Ուղղափառ խաչը կարելի է համերաշխել պանթուրիզիզմի հետ: Արդյունքը կլինի Եվրասիականություն:

- Նախապես հարկավոր է ճշտել Արցախի աշխարհաքաղաքական դերն ու ռազմավարական բնույթը՝ Եվրասիական աշխարհաքաղաքականության համաշարադրանքում, հետո միայն դիտարկել այդ տարածությունը հատուկ տարածաշրջանի վերածելու կամ, ընդհակառակն, նրա՝ ավելի ընդարձակ, ուրիշ համաշարադրանքներին առավելագույնս համարկվելու (ինտեգրվելու) օգտակարության հարցը:

Ղարաբաղն ինքնուրույն ռազմաքաղաքական գործոնի վերածումը ենթադրում է որոշել հիմնական «խաղացողներին»։ Եվրաքանջուր ռազմաքաղաքական գործոն աշխատում է մեկի օգտին կամ մեկի դեմ: Չենց աշխարհաքաղաքական հակառակորդների գատորոշումն է այսօրվա ռուսաստանյան քաղաքականության հիմնական խնդիրը: Յասարակությունն այսօր, Գորբաչովի ու Ելցինի ժամանակների նման, բաժանված է Եվրասիականության ու ատլանտիզմի կողմնակիցների: Դեբախտաբար, 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո, ռուսաստանյան պետականության ամրապնդման նկատմամբ

ընդհանուր համաձայնության վրա հիմնված «պուտինյան մեծամասնության» փխրուն միաձայնությունն սկսեց փլուզվել բոլորի աչքերի առաջ...

- **Ինչպե՞ս կարելի էր նախաձեռնել Արցախի ապագա քաղաքագետների, վերլուծաբանների և, առհասարակ, առող սերնդի պատրաստման կենսական նշանակության գործընթացը՝ կադրերի պատրաստման ռուսաստանյան համակարգի շրջանակներում:**

- Կադրերի պատրաստման ռուսաստանյան համակարգն այսօր ո՛չ միայն կատարելագործված չէ, այլև քառասյին է և պատահական: Պետք է խոսել Եվրասիական կադրերի պատրաստման ինքնուրույն և հիմնարար համակարգի մասին: Այսօր բոլորն էլ պարտավոր են սովորել միայն մեկ առարկա՝ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Այն հարկավոր է գլխավոր ու հիմնական մասնագիտություն դարձնել Ղարաբաղի, Յայաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Ղազախստանի և այլոց ընտրյալների համար՝ Եվրասիայի ընտրանու հանգույն դաստիարակելու նպատակով: Մյուս բոլոր առարկաները՝ տնտեսագիտություն, աշխարհագրություն, պատմություն, քաղաքագիտություն, պետք է մակածվեն աշխարհաքաղաքական սկզբունքներից և ծառայեն որպես դրա դրսևորումներ միայն: Այդ ժամանակ ընտրանիները կկարողանան համարժեք գործել:

Այս բոլորը դեռևս հարկավոր է իրագործել: Յուսը պետք է դնել տարբեր մակարդակի սոցիալական խավերի նախաձեռնության վրա: Պետք չէ հույս դնել իշխանության վրա և նրանից լուսամտություն սպասել, այլ գործուն կերպով ազդել իշխանության վրա, դաստիարակել նրան, պատասխանատվության կոչել, օգնել դառնալ ինքնակամ (սուվերեն) իշխանություն և ո՛չ թե գիշատիչների ու անպատասխանատու այլանդակների ոհմակ:

«Արկնյուզ» լրատվական կենտրոնի հարցազրույցից)

~ ~ ~

Խորհրդային Միության կործանումից հետո միութենական հանրապետությունները հայտնվեցին գաղափարախոսական դատարկության (վակուումի) առաջ: Տարբեր հանրապետություններ այն փորձեցին լցնել տարբեր գաղափարախոսություններով: Այս խնդրի լուծումը բարդ էր՝ մասնավորապես բազմազգ հանրապետությունների համար: Նախկին Միության ամենամեծ և ամենաբազմազգ հանրապետությունը՝ Ռուսաստանը, կարիք ուներ (այսօր էլ ունի) մի այնպիսի Ազգային գաղափարի և նրա առանցքի վրա հյուսված ազգային գաղափարախոսու-

Փետրվարի 25-ին լրացավ Հայոց ազգային հերոս Ջորավար Անդրանիկի (Օզանյան) ծննդյան 139-ամյակը: Անվանի Հայրուկայետը նամակագրական կապեր է ունեցել շատերի, որոնց թվում՝ գրող և հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի հետ: 1917-1923թթ. գրված այս երեք նամակները հրատարակվում են առաջին անգամ:

ՋՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԸ՝ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ



Մեծանուն հայրենակից պ. Արշակ Չոպանյան

Ստացա Ձեր նամակը և ֆրանսական բանաստեղծությանց թարգմանությունները և հանձնեցի խմբագրության: Իմ վրա առանձին տպավորություն գործեց[ին] այդ գրվածքները: Անոնք կոգեշնչեն այս մահվան գիրկը եղող ժողովուրդը:

Ես վայրկյան մ'իսկ չեմ կասկածած, թե դուք կմերժեիք «Հայաստան»-ի¹ հրավերը: Երիտասարդներ հավաքված են շուրջս, որոնք ոգի ի բուռն կաշխատին իրենց ավագներու տեղը բռնել, բայց դուք պետք է թիկունքը հանդիսանաք այդ դժվարին գործին: Օրը օրին կսպասենք Ձեր խոստման հայկական դատի շուրջը Ձեր ըսելիքներուն:

Ես իսկ հոգնած եմ և ջիղերես կնեղվիմ:

«Հայաստան»-ի մասին շատ մը կարծիքներ հայտնվեցան, որ իբր թե անիկա պիտի բաժնե Ռուսահայ ու Թրքահայը. դուք արդեն կարդացած կըլլաք «Հայաստան»-ը և կտեսնեք, թե այդպիսի նպատակ մը գոյություն ունեցած չէ ու չպիտի ունենա:

«Հայաստան»-ը կպահանջե աշխատանքի բաժանում, ինչպես և բոլոր ռուսահայ մտավորականությունը:

Մեծ հավատք ունիմ, որ դուք կկատարեք Ձեր դժվարին գործի - հայկական դատի փրփականսը գեղեցիկ և բարեկամ Ֆրանսայի մեջ:

Կխնդրեմ Ձեզմե ստեղծել ժամանակ «Հայաստան»-ին համար, որ դուրս եկած է մեր Հայաստանին համար:

Համբուրելով Ձեր ճակատը, հայ բանաստեղծ, կսպասեմ մեծ աջակցության նաև Ձեր միջոցով Փարիզ գտնված ուրիշ մտավորականներե: Ըսեք իմ կողմն՝ օգնելու «Հայաստան»-ին, ես բոլորը չեմ ճանչնար, որ գրեմ առանձին:

**Հարգանք՝
Անդրանիկ**

7 օգոստոս, 1917թ., Թիֆլիս

Սիրելի Չոպանյան


Քեզի անձանոթ չէ այն դժբախտ ճակատագիրը, որ ունեցավ մեր ողբացյալ Ջարդարյանը², որուն հետևանքով և ընդհանուր պատերազմին ու ազգային խառնաշփոթութեանց պատճառով իր այնքան սիրած զավակները մնացին անտիրական և զրկված ուսումնե: Իր մեծ որդին՝ Ռաֆայել Ջարդարյանը, որ Կովկասեն Պոլիս հասած է այժմ, կսպասե, որ իր վեհանձն ազգակիցներեն մեկ քանին բարիքը ընեն, իր մեկ քանի տարվա կրթական կյանքը հոգալու, որով, կարենա ան իր որոշ ուսումը առնելէ հետո տեր կանգնիլ իր ընտանիքին:

Բարի եղիր, սիրելի՛ Չոպանյան, իմ անունովը խնդրելու այդտեղի մեր հարուստ հայրենակիցներեն, որ հանձն առնեն մեր ազգին համար զոհ գացած մեկու մը զավակին մեկ քանի ուսանողական տարվա կյանքը հոգալու խնդրո կարգադրությունը:

Հուսով եմ, որ թե՛ քու աշխատությանդ և թե՛ մեր մեծահարուստ հայրենակիցներուն ազնվությամբ շնորհիվ կարելի պիտի ըլլա շուտով Պոլսեն բերել տալ Ռաֆայելը, որով ինձի ալ պարտական թողուցած պիտի ըլլան մեր այդ վեհանձն հայրենակիցները:

**Բարևներով
Անդրանիկ**

15 հուլիսի, 1919թ., Մանչեստր





Սիրելի բարեկամս՝ Պրն Արշակ Չոպանյան՝ ի Փարիզ

Ձեր հեռագիրը ճիշտ ժամանակին ստացած էմ, ինչպես նաև Համլիկին³ նամակն ալ: Ձեր տված հասցեին էմ ուղարկում հեռագրով (\$ 400) չորս հարյուր դոլար Վսեմ. Պողոս Նուպարին:

Այս գումարեն երկու հարյուր կրցած էմ հանգանակել այստեղի ազգայիններեն, իսկ երկու հարյուրն ալ պարտք ընելով՝ կփութացնեմ հիշյալ գումարը մեր ամենուն սիրելի բանաստեղծ և բարեկամ Հովհ. Թումանյանին օգտակար ըլլալու հավատքով:

Ինձի համար հոգեկան մեծ տանջանք մ'է, որ չեմ կրնար հազարներ դրկել ինձի պաշտելի և սիրելի Հովհ. Թումանյանին: Այսքան փոքր գումար մը չպիտի ուղարկեի, եթե տեղիս ժողովուրդը նյութական դժվարության ենթարկված չըլլար:

Գեներալ Բեչերախով՝ ծանոթ հայասեր ռուս գեներալը, ինձի նամակ մը ուղարկած էր՝ օգնություն խնդրելով երեք ամիս առաջ: Ըստ իր նամակին, պատվիրակության դիմած է եղեր օգնության համար, բայց մերժված է: Չեմ գիտեր, ո՞ր մեկ պատվիրակության դիմած է՝ Չեզի⁴, թե՞ պրն. Սիարոնյանին: Ուշ գիշեր նամակը ինձի հասավ. հազար մեղությունե վերջ հազիվ կրցի (\$ 250) երկու հարյուր հիսուն դոլար մը դրկել իրեն իր հետևյալ հասցեին.

Allarich Str. 21
Berlin - Tempelhof

Գեներալին նամակը ինձի հասավ Փարիզեն դրկված դեպի Նյու Յորք՝ պրն Թյուրաքյանին, պրն. Թյուրաքյանեն ալ ինձի: Այս հիմներուն վրա օգնել աշխատեցա հիշյալ գեներալին: Ստացա նամակը 1918-ին: Կխնդրեմ, որ պրն. Պապաճանյանին համար ինձի համար զարմանք եղավ, որ չէիք երկու տողով մը գրել, թե ի՞նչ արդյունք ունեցած է Պապաճանյանի մեկնիլը դեպի Մոսկվա: Կհուսամ, որ օգտաշատ վերջավորություն ունեցած [անընթ.] ըլլա:

Ինձի համար զարմանք եղավ, որ չէիք երկու տողով մը գրել, թե ի՞նչ արդյունք ունեցած է Պապաճանյանի մեկնիլը դեպի Մոսկվա: Կհուսամ, որ օգտաշատ վերջավորություն ունեցած [անընթ.] ըլլա:

Թերթերուն մեջ երևցած լուրերը հուսատու և քաջալերիչ և ոչ նոր բաներ էին:

Վսեմ. Նորատունկյանի⁵ նամակն ալ ստացած էմ ժամանակին: Լոս Անջելոսի մեջ հավաքված դրամը ի նպաստ պատվիրակության անշուշտ ստացած էք մինչև հիմա, իսկ Ֆրեզնոյի մեջ հավաքված (500) հինգ հարյուր անգ. ոսկին ուղարկած ենք Լոնդոն: Իսկ եթե տեղիս մասնաճյուղեն զանձելիք \$ 4-500 դոլար (ապահովագրյալները) հանգանակովին, կուղարկենք իսկույն:

Ինչպե՞ս, հույս կա՞ դիպլոմատիայով Հայաստանը ազատել... Ամեն բանե առաջ, երբ պետք էր Ռուսաստանին դիմել, ամենեն վերջը՝ շատ ուշ ատեն թողուցիք. երբ պետք էր տարիներ առաջ դիմելու էինք հեռուները տեսնելով, անոր բարեկամությունը վայելելու, մենք ոչ միայն բարեկամությունը չվայելեցինք, այլ թշնամություն ցույց տվինք: Իհարկե, չեմ սպասեր, որ այս վերջերս պ. Պապաճանյանին մխիթարական բաներ մը խոստանան, բայց գեթ կտեսնեն, թե մեր խելացիները սթափած են այլևս և կջանան շահասիրել Ռուսիան:

Հաճեցեք իմ սիրալիր բարևներս տալ Վսեմ. Պողոս Նուպարին, ինչպես նաև Նորատունկյանին և պրն. Պապաճանյանին, բոլոր ծանոթներուն հետ:

*Մնամ Ձերդ անկեղծ՝
Անդրանիկ
12 ապրիլի, 1923թ., Ֆրեզնո*

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), \$ 133

- 1- Նկատի ունի իր նախածեռնությամբ երևանում հրատարակվող թերթը:
- 2- Գրող, խմբագիր, ՀՀԳ անդամ, Մեծ եղեռնի նահատակներից:
- 3- Հովհաննես Թումանյանի որդին:
- 4- Միքայել Բաբաջանյան - Ռուսաստանի Սահմանադրական ժողովրդավարական կուսակցության (կաղետ) անդամ, Դումայի պատգամավոր, Հայ ժողովրդական և Ռամկավար ազատական կուսակցությունների հիմնադիրներից, Ազգային պատվիրակության անդամ:
- 5- Գաբրիել Նորատունկյան - Իթքիհատական կուսակցության անդամ, Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար, Ազգային պատվիրակության նախագահ (1923թ.):

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



■ Հրաչիկ Սիմոնյան, «Ազատագրական պայքարի ուղիներում» (չորս հատորով), գիրք 1, գիրք 2: «Հայագիտակ», Երևան, 2003, 816 էջ (գիրք 1), 760 էջ (գիրք 2) (A-5):

Ակադեմիկոս պատմաբանը հանգամանորեն քննել է Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին: Առաջին հատորում ընդգրկված է 1905թ. հոկտեմբերից 1906թ. օգոստոս ժամանակաշրջանը, երկրորդում՝ 1906թ. օգոստոսից 1907թ. հուլիսը:

Գիրքը կարելի է ձեռք բերել «Բուկինիստ» ՄՊԸ գրախառնուրթից (Երևան, Մաշտոցի պող. 20, հեռ.՝ 53-74-13):

■ Ս. Գրիգոր Նարեկացի, «Նարեկ. Մատեան Ողբերգութեան եւ Համաբարբառ»: Աշխարհաբարի է վերածել Ս. Գարեգին արք. Խաչատուրյանը (Տրապիզոնի): «Կիլիկիա» հրատարակչատուն, Հալեպ, 2003, 864 էջ (A-4):

Լույս է տեսել «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության «Հայկական մատենաշարով»: Հրատարակվել է գրաբար բնագրի հանդիպակադրությամբ:

■ Վարդի Քեչիշեան, «Գոյապատում. Պատմութիւն Ա. Գեորգ Եկեղեցւոյ եւ Մարաշի Ազգ. Մեսրոպեան Վարժարանի, Հալեպ», «Կիլիկիա» հրատարակչատուն, Հալեպ, 2002, 224 էջ (A-4):

Գրքում ներկայացվում է Հալեպի հիշյալ եկեղեցու և դպրոցի ընդարձակ պատմությունը՝ տեղի հայկական գաղթօջախի 20-րդ դարի պատմության համաշարադրամբում: Գիրքը հարուստ է լուսանկարներով:



■ Յովհան Մանդակունի Հայրապետ, «Ճառեր»: Աշխարհաբարի է վերածել Ս. Եփրեմ արք. Թապազյանը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության տպարան, Անթիլիաս, 2002, 448 էջ (A-4):

Հրատարակվել է գրաբար բնագրի հանդիպակադրությամբ:

■ Ռաֆիկ Ղազարյան, «Իրականի և ցանկալիի հոլովություն»: «Հայաստանի ազգային գրադարան», Երևան, 2004:

Ազգային գրադարանի փոխտնօրենը ներկայացնում է ՀՀ գրադարանների մի շարք հարցեր և դրանց աղերսները՝ անցյալի ու ներկայի հետ, նաև արժանին մատուցում ՀՀ գրադարանային-մատենագիտական գործի երախտավորներին:

■ Ստելլա Բրան, Մեհմեթ Ուլֆեր, «Գորշ գայլեր»: «Ձանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2003 (հայ.):

Հոլանդացի և քուրդ համահեղինակների հետազոտությունը բացահայտում է թուրքիայում և Եվրոպայում գործող թուրքական ֆաշիստական, համաթուրքական կազմակերպության էությունը, գործելակերպը և վտանգը՝ տարածաշրջանի ու Եվրոպայի ժողովուրդների համար: Երեք անգամ հոլանդերենով լույս տեսած գիրքը թարգմանել է Արսեն Նազարյանը:

■ Ռաֆայել Ղազարյան, «Հաշվետու եմ...»: Հեղինակային հրատարակություն, Երևան, 2003, 317 էջ (A-5):

«Ղարաբաղ» կոմիտեի երբեմնի անդամ, 1990-1995թթ. ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ակադեմիկոս Ռ. Ղազարյանի հուշագրությունը համառոտ ներկայացնում է իր կենսագործունեությունը՝ մեծ տեղ հատկացնելով Արցախյան շարժման և ՀՀ վերջին 15 տարվա իրադարձությունների վերլուծմանը: Կան լուսանկարներ:



■ «Թագավորի երազները»: Կազմել, ծանոթագրել և հրատարակության է պատրաստել Սերգեյ Վարդանյանը: «Գասպրինտ», Երևան, 2003, 144 էջ (A-4):

Բանահյուսական ժողովածուում տեղ են գտել 1980-ական թթ. Խ. Հայաստանի, ԼՂԻՄ-ի և Աբխազիայի հայերից հավաքված հեքիաթներ (գրառել են դպրոցականները): Հեքիաթները ներկայացվում են բարբառով: Կան դժվար հասկանալի բառերի բառացանկեր: Նկարագրումները կատարել է Նիկոն (Նիկոլայ Մանուկյան):

■ Հովիկ Չարխչյան, «Սուլամիթա. Սեւակի մեծ սերը»: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2004, 370 էջ (A-5):

Փաստագրական հարուստ նյութի (փոխանակված նամակներ, հեռագրեր, երկտողեր և այլն) հիման վրա գեղարվեստորեն շարադրված է Պարույր Սեվակի արտանուսնական սիրո, սեռական կրքի պատմությունը՝ լիտվացի հրեուհի Սուլամիթա Ռուդնիկ-Ֆրիդբերգի հետ: Գիրքը լույս է տեսել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորությամբ, «ի Հայրապետութեան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ սրբազնագույն և վեհափառ կաթողիկոսի անձնայն հայոց»:



■ Արծվի Բախչինյան, «Հայաստան-Սկանդինավիա»: Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Երևան, 2003, 256 էջ, (A-5):

Հանրագիտարանային բնույթի մենագրությունը նվիրված է հայ-սկանդինավյան հարաբերությունների և Սկանդինավիայի (Ղանիա, Նորվեգիա, Շվեդիա, Իսլանդիա, Ֆինլանդիա) հայկական գաղթօջախների պատմությանը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

■ «Ամերիկյան եւ 1915-ի Հայկական ցեղասպանությունը»: Խմբագիր՝ Ջեյ Ուինթեր: Քեյմբրիջի համալսարանի հրատարակչություն, ԱՄՆ, 2004, 320 էջ (անգլ.):

Ժողովածուն ընդգրկում է մի շարք ամերիկահայ պատմաբանների՝ Վահագն Տատրյանի, Ռիչարդ Հովհաննիսյանի, Ռուբեն Աղալյանի, գրող Փիթեր Բալաքյանի և այլոց հոդված-

ներն ու ուսումնասիրությունները:

■ Գագիկ Մարտոյան, «Հայոց դի-
ցարանի գերագույն եռյակը»: «Աս-
դիկ» հրատարակչություն, Երևան,
2004, 112 էջ (A-5):

Հեղինակը փորձում է վեր հանել Վա-
նի (Արարատյան) թագավորության դի-
ցարանի գլխավոր եռյակի, ինչպես նաև
Հայկական լեռնաշխարհի այլ աստվա-
ծությունների ժառանգական կապն ու
էական առնչությունը՝ համաստեղու-
թյունների և հայկական անշարժ տոնա-
րի հետ: Հեղինակն ապացուցում է, որ
Վանի թագավորության պետական կրոնի
հիմքում ընկած միհրական երեք Արևների
պաշտամունքի ակունքները տե-
ղական են և, ըստ երևույթին, գալիս են
հնդեվրոպական մի-
ասնության ժամանակներից: Կան գծանկարներ:

■ «Արամ Խաչատրյան» (ռուս.): Կազմել է Դ. Հարություն-
նովը: «Սլովո» հրատարակչություն, Մոսկվա, 2003:

Ներկայացված են դրվագներ՝ հայ մեծ կոմպոզիտորի
կյանքից ու արվեստից, ընտանեկան, ընկերական և բարե-
կամական հարաբերություններից: Օգտագործվել են հատ-
վածներ՝ Ա. Խաչատրյանի մասին լույս տեսած գրականու-
թյունից, որոնք անձնական արխիվում պահպանվող հազ-
վագյուտ լուսանկարներ: Գրքին կից կա ձայնասկավառակ՝
երգահանի ստեղծագործությունների կատարումներով, հըն-
չում է նաև Ա. Խաչատրյանի ձայնը:

■ Ալիս Թաշչյան, «Քարեր սրտի վրա. Վարվառի՝ Հայոց
եղեռնից նազապուրծ մի երեխայի օրագիրը», Իտալիա,
2003 (իտալ.):



■ Արծվի Բախչինյան, «Նապոլեոն
Բոնապարտը և հայերը»: Ե. Չարենցի
անվան գրականության և արվեստի
թանգարան, Երևան, 2003, էջ 152 (A-
5):

Լուսաբանվում են Ֆրանսիայի կայ-
սեր առնչությունները՝ հայության հետ,
տրվում արժեքավոր տեղեկություններ՝
Նապոլեոնի հայազգի թիկնապահների,
Միֆթարյանների հետ նրա կապերի,
հայ ծանոթների ու հակառակորդների
մասին:

■ Վահրամ Տատրյան, «Դեպի անապատ. էջեր իմ օրագ-
րից» (անգլ.): Թարգմանել է Հակոբ Խաչիկյանը, նախաբանը
գրել և խմբագրել է Արա Սարաֆյանը: «Կոմիտաս ինստի-
տուտ» և «Կարոտ» հրատարակչություն, Փրինսթաուն և Լոն-
դոն, 2003, xvi + 410 էջ:

Ներկայացվում է Մեծ եղեռնի տարիներին դեռևս պատա-
նի հեղինակի (1900-1948) տարագրության օրագիրը՝ ծնն-
դավայր Չորունից մինչև Ջարաշ (Հորդանան), որտեղ ապրել
է մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը: Գիրքն առաջին
անգամ լույս է տեսել Նյու Յորքում, 1945թ.՝ հայերեն:

■ Յակոբ Օշական, «Երբ պատանի են»: Երկրորդ հրա-
տարակություն, «Գառնի» ուսանողական մատենաշար, Բեյ-
րութ, 2003:

■ Ալվարո Բարխուդարյան, «Ղարաբաղ. դարավերջ»:
«Վան Արյան» հրատարակչություն, Երևան, 2004:

Մեկտեղվել են Արցախյան ազատամարտի ակնամտես
հեղինակի հոդվածները, հարցազրույցներն ու զանազան
հրապարակումները ՀՀ մամուլում՝ 1990-ական թվականնե-
րի առաջին կեսին: Հեղինակը փորձում է հավատարիմ մնալ
ճշմարտության և անաչառության սկզբունքներին, որոնք այ-

սօր հազվադեպ են պահպանվում, մասնավորաբար՝ Ար-
ցախյան ազատամարտին նվիրված աշխատություններում:

■ Էդուարդ Ս. Լիտլ, «Հայկական հարցը», «Նահապետ»
հրատարակչություն, Երևան, 2003, 40 էջ (A-5): Հրատա-
րակությունը երաշխավորել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպա-
նության թանգարան-ինստիտուտի գիտխորհուրդը: Սա Քան-
գաս նահանգի լեյտենանտ-գնդապետ Էդուարդ Ս. Լիտլի գե-
կուցումն է ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատում, 1918թ.
փետրվարի 1-ին: Ակնհայտ է հեղինակի դրական վերաբեր-
մունքը դեպի հայերը, պատմական անհերքելի փաստերի
վրա հիմնված գնահատականը, բայց և ակնհայտ են նրա՝
մեծ տերության ներկայացուցչի անթաքույց նկրտումները:

■ Յոհաննես Լեփսիուս, «Գաղտնի
տեղեկագիր. հայ ժողովրդի ջարդերը»:
«Նահապետ» հրատարակչություն,
2003, 205 էջ (A-5):

Հրատարակել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցե-
ղասպանության թանգարան-ինստի-
տուտը: Աշխատությունը գերմաներե-
նից արևմտահայերեն է թարգմանել Սի-
բայել Շամտանճյանը և հրատարակել
1919թ., Կ. Պոլսում: Այն արևելահայե-
րենի է վերածել և գերմաներեն բնագրի
հետ համեմատել Գ. Թոսունյանը:

■ «Գաղթը Կովկասում» (ռուս. և անգլ. առանձին տարբե-
րակներով): Հրատարակել է ՋԼՄ-ների կովկասյան ինստի-
տուտը, Երևան, 2003, 132 էջ (A-5):

Տեղ են գտել ինստիտուտում 2003թ. կայացած նույնանուն
միջազգային կոնֆերանսում հայ, վրացի և ռուս մասնագետ-
ների զեկուցումները:

■ Վիգեն Չետերյան, «Փոքր պատերազմներ և մեծ խաղ»
(ռուս. և անգլ. առանձին տարբերակներով): Հրատարակել է
ՋԼՄ-ների կովկասյան ինստիտուտը, Երևան, 2003, 132 էջ (A-
5):

Ներկայացվում և վերլուծվում են Կովկասյան տարա-
ծաղջանում 20-րդ դարի վերջին ծագած հակամարտու-
թյունները, դրանց նախադրյալները, ընթացքը, արդի վիճա-
կը և հնարավոր զարգացումների տարբերակները: «Հավել-
վածում» բերվում են վիճակագրական կարևոր տվյալներ,
ինչպես նաև առանձին վարչական միավորների քարտեզներ:

■ Ռոբերտ Բաղդասարյան, «Ցեղաս-
պանությունը և Ռուսաստանի հայ մտա-
վորականությունը» (ռուս.): «Գիտու-
թյուն» հրատարակչություն, Երևան,
2003:

Ներկայացվում է Ռուսաստանի, մաս-
նավորաբար՝ Սանկտ-Պետերբուրգի և
Մոսկվայի հայ մտավորականության
գործունեությունը՝ 19-րդ դարի 90-ա-
կան թվականներից 20-րդ դարի 20-ա-
կան թվականների սկիզբն ընկած ժա-
մանակահատվածում: Հատուկ ուշադ-
րություն է դարձվել այդ մտավորակա-
նության հրապարակագրական գործունեությանը՝ Ռուսաս-
տանի հայկական և ռուսական պարբերական մամուլում:

■ Յակոբ Պարոնեան, «Մեծապատիւ մուրացկաններ»:
Երկրորդ հրատարակություն, «Գառնի» ուսանողական մա-
տենաշար, Բեյրութ, 2003:

■ Լեւոն Շառոյեան, «Յաւերժօրէն Սիրելի «Մերին Պօլի-
սը»»: Հրատարակել է «Մարմարա» օրաթերթը, Ստամբուլ,
2003:

ՎՐԱՑԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ



Մաս առաջին

Վրացական «Վարդերի հեղափոխությունը» տրամաբանական ավարտն էր այն քաղաքական զարգացումների, որ հարևան հանրապետությունն ապրում էր անկախությունից հետո:

Արդեն մի քանի տարի երկրում տիրող իշխանական ճգնաժամը, ի վերջո, հանգուցալուծվեց «թավշյա» հեղափոխությամբ:

2003թ. նոյեմբերի 23-ին ցուցարարների ճնշման տակ հրաժարական տվեց նախագահ Է. Շևարճնաձեն:

2004թ. հունվարի 4-ին կայացած նախագահական ընտրություններում, լուրջ հակառակորդի բացակայության պայմաններում, հսկայական առավելությամբ հաղթանակ տարավ ընդդիմության առաջնորդներից մեկը՝ Միխայիլ Սահակաշվիլին:

Մարտի 28-ին երկրում տեղի են ունենալու խորհրդարանական ընտրությունները:

Սրանք են այն հիմնական ուղեցիղները, որոնք էլ կմնան պատմության մեջ՝ «Վրացական հեղափոխություն» անվամբ:

Սա նման է թատերական մի ներկայացման՝ անհրաժեշտ բոլոր պարագաներով. ունի իր սցենարը, դեկորացիաները, իր գլխավոր հերոսը, հիմնական դերակատարները, կան դրսից հրավիրված աստղեր, ուղեկցվում է վրացական ավանդական երգերով: Չկա միայն վերջաբան, և դժվար է նույնիսկ ենթադրել, արդյո՞ք սա ավարտուն թատերգություն է, թե՞ ներկայացման առաջին մասը միայն:

Վարդեր և խաչեր Դեկորացիաներ

Ամեն հեղափոխություն ստեղծում է իր խորհրդանիշերը: Բացառություն չէր

նաև «Վրացական հեղափոխությունը»: Մեր հարևաններն այս դեպքում կրկին ցուցաբերեցին իրենց բնորոշ թատերականացման մեծ վարպետությունը:

Առաջինը, որ աչքի է զարնում թբիլիսիում, վրացական պետական նոր դրոշմների առատությունն է: Հին՝ հոնագույն, սև և սպիտակ դրոշմը, որ վրաց սոցիալիստների դրոշմն էր, հեղափոխությունից հետո ամնիջապես փոխարինվեց կարմիր խաչով պսակված սպիտակ դրոշով, որն, ի միջի այլոց, Բագրատունյաց հարստության դրոշմն է (վրաց Բագրատունիներն այն յուրացրել են): Հենց այս դրոշի ներքո Սահակաշվիլին գնաց ընտրությունների, իսկ դրանց կեղծումից հետո, հեղափոխականներն այս դրոշի փողփողանքի ներքո էլ գրավեցին խորհրդարանը:

Վարդն այլ խորհրդանիշ էր: Այս ծաղիկը խորհրդանշող հուշանվերներ հնարավոր չեղավ գտնել թբիլիսիում, սակայն, անկասկած, մոտ ապագայում այն կարող է դառնալ երկրի նույնանման խորհրդանիշ (ինչպես այսօր գինին է կամ վրացական ազգային երգը): Արդեն իսկ այն համարվում է ժողովրդավարության և բողոքի խորհրդանիշ երկրում: Մի օրինակ միայն: Երբ փետրվարին թբիլիսիի «Սուխումիի համալսարանի» ուսանողները պահանջում էին ռեկտորի հրաժարականը, նրանք մուտք գործեցին վերջինիս առանձնասենյակը՝ «գինված» վարդերով...

Հաղթանակ՝ առանց կասկածների Գլխավոր հերոս

Սահակաշվիլին այսօրվա միջին վրացու հերոսն է: Երիտասարդ նախագահի յուրաքանչյուր քայլը ժողովուրդն ընդունում է բուռն ոգևորությամբ: Կարելի է առանց վարանելու հայտարարել, որ Սահակաշվիլին ստացել է վս-

տահության անսահմանափակ քվե, իսկ Վրաստանը, 13 տարվա դեգերումներից հետո, վերջապես էֆեկտիվ պետություն կառուցելու պատմական հնարավորություն:

Ըստ վերջին օրերին հասարակական կարծիքի ուսումնասիրման «Գորբի» կենտրոնի անցկացրած հետազոտության՝ Վրաստանի բնակչության միայն 1 տոկոսն է դժգոհ նախագահի պաշտոնում Սահակաշվիլու գործունեությունից, 90 տոկոսը սատարում է նրա քայլերը:

Եվ նախագահը, զգալով այս աջակցությունը, ավելի ու ավելի համարձակ քայլեր է ձեռնարկում՝ իր ժողովրդականությունը պահպանելու և ավելացնելու համար: Նրա ամբոխահաճ քայլերը (սովորական ինքնաթիռով Մոսկվա կատարած այցը, Վրաստանի ռեզբիի հավաքականի խաղին մարզադաշտում հանկարծակի հայտնվելը և, վերջապես, նախկինում ազդեցիկ մի շարք անձանց ձերբակալությունը) շատ հաճախ տպավորություն են ստեղծում, որ 36-ամյա իրավաբանն ինքը դեռ չի գիտակցել իր նախագահ ընտրվելու փաստը, և որ այլևս անհրաժեշտություն չկա նման ձևով քաղաքական միավորներ վաստակելու: Մյուս կողմից՝ կարելի է ենթադրել, որ այս ամենն արվում է հետազայում ոչ ժողովրդական քայլերի նախապատրաստվելու, ինչպես նաև ներիշխանական պայքարում, այլ անհրաժեշտության դեպքում, բնակչության աջակցությունն ստանալու համար:

Քաղաքական հարսանիք կամ ժամանակավոր դադար Այլ դերակատարներ

Նախագահ Սահակաշվիլին արդեն արել է ժողովրդականություն չվայելող իր առաջին, սակայն սպասվող քայլը:

Խոսքը Ջուրաբ ժվանիային վարչապետի պաշտոնում նշանակելու մասին է: Բավական է մի փոքրիկ հարցախույզ անցկացնել թբիլիսիի փողոցներում՝ համոզվելու համար, որ ժվանիայի նկատմամբ վրացիների վերաբերմունքը հակադարձ համեմատական է Սահակաշվիլու նկատմամբ տածած զգացմունքներին: Ժվանիային չեն սիրում: Ավելին, շատերը նրան ուղղակի ատում են: Նոր վարչապետի անունն անխափելի թելերով կապված է նախկին նախագահ Շևարճնաձեի անվան հետ, որի հնարավոր «ժառանգորդն» էր համարվում ոչ վաղ անցյալում:

Ամեն դեպքում՝ այսօր վարչապետ ժվանիայի դերը չափազանց մեծ է: Երկար տարիներ գտնվելով իշխանական

մեքենայի ներսում՝ նա միակն է, ով կարող է մեղմել կարդային քաղցը, որին բախվում է նախագահ Սահակաշվիլին: Միզուցե վերջինիս համար ավելի նպաստավոր լիներ ոչ թե այսօրվա սրընթաց իշխանափոխությունը, այլ հաղթանակը կրկնական խորհրդարանական ընտրություններում և սեփական «թիմի» ձևավորումը՝ մինչև 2005թ. կայանալիք հերթական նախագահական ընտրությունները: Իսկ այսօրվա իրողությունն այն է, որ շատ հանգուցային պաշտոններ տրվել են «խորանակ» ժվանիային հավատարիմ մնացած ուժերին, ինչն էլ ավելի է ուժեղացնում վերջինիս դիրքերը: Եվ դժվար է ասել, թե որքան կտևի այս քաղաքական «ամուսնության» հետևանքով առաջացած երկիշխանությունը:

Հեղափոխական շարժման «եռյակի» երրորդ ներկայացուցիչն այսօր ստվերում է: Նինո Բուրջանաձեի հանկարծակի վերելքը իշխանական բուրգի նախ՝ երկրորդ, իսկ հետո նաև՝ առաջին դիրքերը, զարմանալի էր նույնիսկ շատ վրացիների համար, ովքեր մասնավոր գրույցներում, բոլորովին էլ չէին ընդունում հայերիս մեջ ձևավորված հիացական զգացմունքը՝ խորհրդարանի կին նախագահի նկատմամբ: Շատերը նրան նույնիսկ «գորշ» կամ «մի օրական» քաղաքական գործիչ են անվանում, որը հայտնվեց խորհրդարանի նախագահի պաշտոնում միայն 2001թ. նոյեմբերին՝ խորհրդարանում առաջացած «պատային» իրավիճակի հետևանքով, երբ Ջ. Ժվանիայի հրաժարականից հետո երկար ժամանակ չէր հաջողվում օրենսդիր մարմնի նախագահ ընտրել: Սակայն այն արտաքին վստահությունը, որով միջազգային իրավունքի թիմիսի համալսարանի նախկին պրոֆեսորն ստանձնեց Վրաստանի նախագահի պաշտոնակատարությունը՝ երկրի համար ճգնաժամային իրավիճակում, ցույց տվեց, որ Նինո Բուրջանաձեն մոտ ապագայում կարող է վճռորոշ դեր խաղալ Վրաստանի ներքաղաքական կյանքում, մասնավորապես, եթե անհաջողության մատնվեն սկսված բարեփոխումները կամ Սահակաշվիլի-Ժվանիա հակամարտությանը մեծ թեժություն հաղորդվի:

Նոր կառավարություն և հին խոստումներ Նախաբան

2004թ. փետրվարի կեսերին կազմվեց վրացական նոր կառավարությունը: Թեև նախագահ Սահակաշվիլին հայտարարեց, որ նշանակումների հիմքում ընկած են «ազնվությունն ու բանիմացությունը», պարզորոշ երևում է, որ այս հատկությունների առկայության դեպքում նույնիսկ բոլորովին անտես-

վել է փորձառության գործոնը: Երիտասարդ նախարարների քանակը ռեկորդային է:

Նոր կառավարությունը հնից ժառանգություն ստացավ մոտ 1 մլրդ 850 մլն ԱՄՆ դոլար արտաքին պարտք, փլուզված տնտեսություն, կանգուն, բայց չաշխատող գործարաններ, սոցիալական դժվարին խնդիրներ: Երկրում միջին աշխատավարձը համարժեք է 50 ԱՄՆ դոլարին, իսկ թոշակառուներն ստանում են մոտ 5 դոլար:

Դառնալով նախագահ՝ Սահակաշվիլին անմիջապես սկսեց իրականացնել նախկին իշխանությունների ժամանակ չարաշահումներ թույլ տված անձանց պատասխանատվության կանչելու խոստումները:

Իշխանությունները դրանով փորձեցին ցույց տալ, որ նույնիսկ ամենաագդեցիկ դեմքերը չեն կարող խույս տալ պատասխանատվությունից: Ձանգվածային ձերբակալություններից առանձնանում է Շևարդնաձեի փեսայի՝ «Մագթիքոն» բջջային հաղորդակցության ընկերության սեփականատեր Գիյա Ջոխթաբերիձեի ձերբակալումը օդանավակայանում, երբ վերջինս, տեղեկացնելով գլխավոր դատախազությանը, պատրաստվում էր մեկնել Փարիզ՝ ընկերության բաժնետերերի հանդիպմանը մասնակցելու համար: Նա մեղադրվում է ամերիկյան 350 մլն դոլարին համարժեք հարկերի չվճարման մեջ և երեքամսյա նախնական կալանքի է առնվել:

Կոռուպցիայի դեմ պայքարից բացի՝ վրացական նոր իշխանությունների առջև ծառայած կարևորագույն հարցերից մեկը ինքնավար շրջանների հետ կապված խնդիրն է: Անցած երկու իշխանափոխություններն ուղեկցվում էին երկրի տարածքային անբողջականությանը հասցված հարվածներով: Ջ. Գամսախուրդիայի նախագահ դառնալուն զուգահեռ սկսեց անկախանալ Հարավային Օսեթիան, իսկ Շևարդնաձեի պաշտոնավարման սկզբում Աբխազիան: Այսօր Սահակաշվիլին հսկայական ջանքեր է գործադրում՝ այդ սցենարն Աջարիայում բացառելու համար: Իսկ այն շատ հավանական է:

Աջարական առյուծի սանձահարումը Անսպասելի հանգույց

1999 թվականից Աջարիան իր տարածքում հավաքագրված հարկերը չի տրամադրում Վրաստանի կենտրոնական իշխանություններին: Թուրքիայի սահմանի վրա գտնվող Սարիփի մաքսատունը նույնպես չի ենթարկվում Թբիլիսիին. սա Աջարիայի եկամուտների գոյացման հիմնական աղբյուրներից մեկն է: Ռազմական տեսակետից՝ տարածքը նույնպես գրեթե անկախ է: Այս-

տեղ տեղակայված է ռուսական 145-րդ մոտոհրաձգային զուկոնը, որի հետ Աբաշիձեն բավական լավ հարաբերություններ է պահպանում: Աբաշիձեն ստեղծել է նաև տեղական սահմանային զորքեր, որոնք կարող են ամեն պահի լուրջ ռազմական ուժի վերածվել:

Աջարիայի նախագահը միակ ազդեցիկ ուժն էր, որ սատարեց Շևարդնաձեին՝ նոր իշխանություններին հայտարարելով անօրինական: Թեև վերջին շրջանում նա մեղմել է իր դիրքորոշումը, նույնիսկ թույլ տվել ինքնավար հանրապետությունում անցկացնել Վրաստանի նախագահի ընտրությունները և հայտարարել Թբիլիսի ժամանելու իր պատրաստակամության մասին (մի բան, որ նա չէր արել 1991 թվականից՝ պատճառաբանելով անձնական անվտանգության խնդիրը), բայց և այնպես, վիճակը պայթյունավտանգ է: Թբիլիսիում ժամանակ առ ժամանակ կոչեր են հնչում՝ Բաթումի զորք մտցնելու մասին, ի պատասխան որի Աջարիան հայտարարում է պաշտպանվելու իր պատրաստակամության մասին:

Վրացական կոմպլեմենտարիզմ Դրսից հրավիրված աստղեր

Արտաքին ուժերի ազդեցությունն ակնառու էր Վրաստանում թե՛ հեղափոխության ընթացքում, թե՛ նրանից հետո: Արդեն զաղտնիք չէ, որ ամերիկացի միլիարդատեր Ջորջ Սորոսը ընդդիմադիրներին և հատկապես «Կմարա» («Հերիք է») երիտասարդական կազմակերպությանը և ընդդիմության «ժամր հրետանի» «Ռուսթավի-2» հեռուստաընկերությանը տրամադրել էր հսկայական միջոցներ: Իսկ Վրաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մայլսին հեղափոխության ընթացքում նույնիսկ անվանեցին «Կովկասի նոր փոխարքա». այնքան մեծ էր նրա դերն այս իրադարձություններում: Ընդհանրապես դեսպան Մայլսի կերպարը շատ ուշագրավ է: Վրաստանի իշխանափոխությունը երրորդն էր նրա դեսպանական կարիերայում՝ Ադրբեջանից և Սերբիայից հետո:

Իշխանական ճգնաժամի սկզբից, ԱՄՆ-ը, գիտակցելով Շևարդնաձեի վիճակի անհուսությունը, հրաժարվեց նրան սատարելուց, իսկ Ռուսաստանի հիմնական մտահոգությունը հնարավոր քաղաքացիական պատերազմի բացառումն էր:

Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավումը հայտարարվեց Մ. Սահակաշվիլու արտաքին քաղաքական կարևորագույն նպատակներից մեկը: Վրաստանի նախագահն այցելեց Մոսկվա, որտեղ ՌԴ նախագահի հետ հանդիպման ժամանակ ընդգծեց Ռուսաստանի հետ հարաբերությունների կարևորությունը Վրաստանի համար և

առաջարկեց իր և իր երկրի բարեկամությունը:

Իսկ այս բարեկամությունն անհրաժեշտ է Վրաստանին: Երկրի էներգետիկան գրեթե ամբողջովին կախված է Ռուսաստանից: Հայաստանից գնվող էլեկտրաէներգիան և այս տարվա վերջին չինական ներդրումների միջոցով շահագործման հանձնվող Խաղողի ՋԷԿ-ը փակելու են պահանջվող էներգիայի մոտ 15 տոկոսը միայն:

Սակայն, այս ամենով հանդերձ, Թբիլիսին այսօր նայում է ոչ թե Հյուսիս, այլ Արևմուտք: Իսկ Արևմուտքը, ինչպես միշտ, պատրաստ է նրան օգնություն ցուցաբերել: ԱՄՆ-ը չափազանց մեծ հոգատարությամբ է վերաբերվում Վրաստանին: Վաշինգտոնը պատրաստ է վարկեր և օգնություն տրամադրել Թբիլիսիին: Պահանջը

մեկն է՝ վերջնականապես ազատվել ռուսական ազդեցությունից: Այս գործում նույնպես ԱՄՆ-ը պատրաստական է աջակցել:

Փետրվարի 22-ին մեկ շաբաթյա պաշտոնական այցով Միացյալ Նահանգներ մեկնած Վրաստանի նախագահին ԱՄՆ-ի նախագահը հայտնեց. «ԱՄՆ-ն ակնկալում է Ռուսաստանից ստամբուլյան հանդիպման ժամանակ իր ստանձնած պարտավորությունների կատարում» (1999թ. ստորագրված հռչակագրով ՌԴ-ն պարտավորվում էր իր զորքը դուրս բերել Վրաստանից): Իսկ Վրաստանն իր հերթին պատրաստ է պատասխան քայլերի: ԱՄՆ-ի պետքարտուղար Քոլին Փաուելի հետ հանդիպման ժամանակ Սահակաշվիլին հայտարարեց, որ Վրաստանը ցանկանում է ավելացնել իր զինվորականներ-

րի ներկայությունը Իրաքում:

Սակայն Վրաստանի արտաքին քաղաքականության մեջ, ամենակարևորը, հավանաբար, ո՛չ ռուսական, ո՛չ էլ ամերիկյան ուղղություններն են լինելու:

Իր երդման արարողության ժամանակ նախագահ Մ. Սահակաշվիլին, Վրաստանի դրոշը բարձրացնելուց հետո, Եվրամիության օրհներգի ներքո, ի զարմանա շատ ներկաների, երկրի խորհրդարանի առջև բարձրացրեց Եվրամիության դրոշը՝ ստեղծելով ևս մեկ խորհրդանիշ՝ Եվրամիության տասներկու դեղին աստղերի կողքին ծածանվող վրացական հինգ կարմիր խաչերը:

Սուրեն Մանուկյան
Պատմ. գիտ. թեկնածու
2004թ. փետրվար

29 —>

Հալեպահայ հեղինակի՝ 2000թ. Ստամբուլ կատարած այցի տպավորություններն են գաղթօջախի և, հատկապես, պոլսահայ արդի գրականության մասին, ինչպես նաև Լ. Շառոյանի գրախոսականները՝ պոլսահայ ժամանակակից գրողների հրատարակված գործերի մասին:

■ Արտաւազդ արք. Սիրմեան, «Պատմութիւն Հալեպի Հայոց», Բ. հատոր: Երկրորդ հրատարակություն: «Կիլիկիա» հրատարակչատուն, Հալեպ, 2003:

Լույս է տեսել «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության «Հայկական մատենաշարով»:

■ Օհաննես փաշա Գույումջյան, «Լիբանանը պատերազմի նախօրյակին և ընթացքում. մի կառավարչի հուշերը» (ֆրանս.): Հրատարակության են պատրաստել Ռեմոն Գևորգյանը, Վահե Թաշչյանը և Միշել Փաբուջյանը: Հրատարակել է Հայկական ժամանակակից պատմության կենտրոնը, Փարիզ, 2003, 190 էջ:

1933թ. Հռոմում մահացած, Լեռնալիբանանի վերջին հա-

յագգի կառավարչի հուշերն են իր կառավարման շրջանի մասին (1913–1915թթ.): Գիրքը հարուստ է լուսանկարներով և ծանոթագրություններով:

■ «Ռուսաստանը և Հայոց ցեղասպանությունը 1915-1917թթ. (փաստաթղթերի ժողովածու)»: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 2004, 208 էջ (A-5):

Կազմել և առաջաբանը գրել է թարգմանության հեղինակը՝ Արմեն Մարուքյանը: Լույս է տեսել «Հայոց ցեղասպանությունը և միջազգային հանրությունը» մատենաշարով (թիվ 1):



Ծանոթ.- Խմբագրությունը պատրաստ է այս խորագրի ներքո զետեղել հայությանն առնչվող կարևոր նոր հրատարակությունների հրատարակչական մատենագիտական տվյալները:

25 —>

հյուսված ազգային գաղափարախոսության, որը հաշվի կառներ պետության բազմաթիվ ազգերից, ազգություններից և էթնիկ հանրություններից բաղկացած լինելու հանգամանքը: Այս փնտրտուքում ծնվեց, ավելի ճիշտ՝ վերածնվեց Եվրասիականության գաղափարախոսությունը, որը հավակնում է փրկօղակ լինել ՌԴ-ի համար: Այս տեսության հակիրճ էությունը հետևյալն է՝ արդի ռուսաստանյան քաղաքակրթությունը սլավոնական, բյուզանդական և մոնղոլ-թաթարական ժառանգությունների համադրումն է (սինթեզը): Նման գաղափարախոսությամբ փորձ է արվում հաճոյանալ ՌԴ թյուրքացեղ և մահմեդական քաղաքացիներին (այսօր արդեն ավելի քան 20 միլիոն): ՌԴ նախագահ Վլ. Պուտինը Եվրասիականությունը հռչակեց ՌԴ պետական գաղափարախոսություն: Այլ հարց է, որ,

մեր կարծիքով, այս տեսությունը հեռանկարային չէ Ռուսաստանի համար:

Մեզ հուզում է այլ բան: Ինչպես երևում է այս հարցազրույցից՝ «Եվրասիականները» հային և աղբբեջանցուն չափում են նույն «արշինով»: Արցախյան հարցի կարգավորման՝ Դուզինի առաջարկած տարբերակը, փաստորեն, «ընդհանուր պետության» տարբերակն է, ի դեպ, «ընդհանուր պետություն»՝ Արցախի և Աղբբեջանի միավորմամբ:

Նման տարբերակը հիմնովին մերժելի է հայության համար:

Դուզինի Եվրասիական տեսությունը, ըստ էության, վտանգավոր է հայության համար, մանավանդ որ դա, ինչպես նշեցինք, այսօր դրված է ՌԴ պետական քաղաքականության հիմքում: Հետևաբար հայությունը պետք է միշտ փարած մնա ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔԻՆ՝ ռուսական կողմնորոշումը համարելով սոսկ

ժամանակավոր երևույթ: Մենք իրավունք չունենք մեր ճակատագիրը վստահելու որևէ օտարի, նույնիսկ եթե վերջինս ռուսն է, իսկ ՌԴ քաղաքական վերնախավում, Դուզինի իսկ խոստովանությամբ, «հարևանություն» են անում տրամազոծորեն հակառակ բևեռների մարդիկ: Երբեք չպետք է մոռանալ դասերը 1917-21թթ. իրադարձությունների, որոնք 1993թ. մեծ հավանականություն ունեին կրկնվելու Ելցին-Խասբուլատով աշնանային արյունոտ ընդհարման ժամանակ:

Մենք իրավունք չունենք բախտախաղի սեղանին դնել մեր լինելությունը: Հայկական մետն իր սլացքն առել է Հայկի աղեղից և միայն հայկական ներուժով կարող է շարունակել իր հավերժական թռիչքը:

Գևորգ Յազըճյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԹՈՒՐՔԻԱ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թուրքիա-Եվրամիություն (ԵՄ) հարաբերությունները շատ կարևոր տեղ են գրավում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ: Դա առանցքային ուղղություն է Թուրքիայի համար, քանի որ նա, ի տարբերություն իր հարևաններ Իրաքի, Իրանի, Սիրիայի, ընտրել է եվրոպական զարգացման ուղին:

1963թ. Եվրոպական ընկերակցության և Թուրքիայի միջև «Անդամակցության պայմանագրի» ստորագրումից հետո բավական երկար ժամանակ պահանջվեց, որպեսզի ընդունվի Թուրքիայի թեկնածությունը՝ ԵՄ լիիրավ անդամակցության համար: Թուրքիա-ԵՄ փոխհարաբերություններում զգալի առաջխաղացում էր 1995թ. ԵՄ-ի և Թուրքիայի միջև ստորագրված «Մաքսային միութեան» պայմանագրի: ԵՄ-ի լիիրավ թեկնածու դառնալու ճանապարհին շրջադարձային կետ կարելի է համարել 1999թ. դեկտեմբերին ԵՄ Յեյխիմյան զագաթաժողովը, որտեղ Բուլղարիայի, Լատվիայի, Լիտվայի, Մալթայի, Ռումինիայի և Սլովակիայի թեկնածությունների կողքին լիիրավ անդամակցության համար ամրագրվեց նաև Թուրքիայի թեկնածությունը: Սակայն այդ առաջխաղացումը թվացյալ էր, քանի որ Յեյսիմկիում եվրոպական 15 պետությունները որոշում կայացրին ընդգրկել Թուրքիան ընդարձակման գործընթացի մեջ՝ մեկ վերապահումով՝ ԵՄ-ն հրաժարվում է Թուրքիայի հետ անդամության բանակցություններն սկսել այնքան ժամանակ, քանի դեռ վերջինս չի բավարարել Կոպենհագենի չափանիշները:

Թուրքիայի իշխանությունները, վերոհիշյալ չափանիշները բավարարելու նպատակով, ձեռնարկեցին մի շարք միջոցառումներ: Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) քարտուղարության մարտու իրավունքների հարցերը կոորդինացնող բաժինը պատրաստեց խնդրո առարկա թեմային նվիրված զեկույցի նախագիծ, որտեղ առաջնահերթ էին սահմանադրությամբ վերաբերող փոփոխությունները:

2001թ. դեկտեմբերին Բելգիայի Լեաքեն քաղաքում տեղի ունեցած զագաթաժողովում հայտարարվել էր, որ Թուրքիան մասնակցելու է ԵՄ ապագայի հետ կապված պայմանագրային աշխատանքներին, հասկացնել տալով, որ Թուրքիան բավական մոտ է լիիրավ անդամակցությանը: Անկարան արագացրեց իր ժողովրդավարական բարեփոխումները, որոնց նպատակն էր իր օրենսդրությունը մոտեցնել Եվրոպայի ժողովրդավարական չափանիշներին:

2002թ. փետրվարին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը (ԹԱՄԺ) վավերացրեց «մինի-ժողովրդավարացման» փաթեթը, որն ընդգրկում էր բարեփոխումներ կապված խոսքի ու խղճի ազատության հետ:

Շատ կարևոր քայլ էր Անկարայի համար 2002թ. օգոստոսի 3-ին ԹԱՄԺ-ի բարեփոխումների փաթեթի վավերացումը, որն օրենքի ուժ ստացավ օգոստոսի 9-ին: Այն ընդգրկում է.

Մահապատժի վերացումը՝ բացառությամբ պատերազմական ու պատերազմի վտանգ ունեցող ժամանակներում:

Մտքի ու խղճի ազատություն՝ ըստ Եվրոպական կոնվենցիայի նորմերի:

Փախստականների ապօրինի մուտքի արգելումը:

Թուրքիայի քաղաքացիների համար տարբեր լեզուների ուսուցման և այդ լեզուներով էթեր հեռարձակելու թույլտվությունը:

Ցույցերին ու երթերին օտար քաղաքացիների մասնակցելու թույլտվությունը:

Ազգային փոքրամասնությունների հիմնադրամների՝ մասնավոր սեփականության խնդիրների կարգավորումը:

Թուրքիայում օտարերկրյա հիմնադրամների գործունեության համար իրավական հիմքի ապահովումը:

Մամուլի ազատության ընդարձակումը:

Ոստիկանության պարտականություններում և իրավասություններում փոփոխությունները և այլն:

Այս փաթեթի ընդունումը շրջադարձային կետ կարելի է համարել Թուրքիայի պատմության մեջ, քանի որ սրանով թուրքերը ձեռնարկել են մի շարք քայլեր, որոնք մեծ քաջություն էին պահանջում: **Առաջին**՝ քրդերը և ազգային այլ փոքրամասնություններն իրավունք են ստացել ոչ միայն սովորել իրենց մայրենի լեզուն, այլև այդ լեզվով մամուլ ունենալ, ծրագրեր հեռարձակել: Սրանով, փաստորեն, քրդերը պաշտոնապես ճանաչվում են որպես ազգային փոքրամասնություն՝ տևական հերքումներից հետո: **Երկրորդ**՝ մահապատժի վերացում, որի վիճելի կողմը հիմնականում ՔԲԿ-ի առաջնորդ Աբդուլլա Օջալանի պարագան է: **Երրորդ**՝ ազգային փոքրամասնությունների հիմնադրամների՝ վաքըֆների հարցը: Լոզանի պայմանագրում նշվում է Թուրքիայում ապրող երեք ազգային փոքրամասնություն՝ հայեր, հույներ և հրեաներ, իսկ, համաձայն ԵՄ պահանջների, «Թուրքիայում կան 30-ից ավելի էթնիկական խմբեր, որոնցից յու-

րաքանչյուրը պետք է համարվի փոքրամասնություն»: Սա նշանակում է, որ հայերից, հույներից և հրեաներից բացի կրոնական, բարեգործական, սոցիալական, կրթական, առողջապահական ու մշակութային նպատակ հետապնդող հիմնադրամներ բացելու իրավունք ստանում են եզդիները, չերքեզները, լազերը և ուրիշներ:

Վերոհիշյալ կետերում էր հիմնականում Ազգայնական շարժում կուսակցության (ԱՇԿ) սուր անհամաձայնությունն այս փաթեթի հետ: Այս ամենը, ըստ նրանց, տանում է Թուրքիայի մասնատմանը, վտանգավոր է տարածքային ամբողջականության տեսակետից, վիրավորում է հակահաբեկչական պայքարում մահացածների հիշատակը: ԱՇԿ-ի նախագահ Դևլեթ Բահչեչին դիմել է Սահմանադրական դատարան՝ փաթեթի այս կետերը չեղյալ համարելու հայցով, սակայն մերժում է ստացել: Միանշանակ կողմ են հանդես եկել Մայր հայրենիք կուսակցությունն ու ժողովրդավարական ձախ կուսակցությունը:

Իսլամիստները կողմ են այս փաթեթին այն պատճառով, որ իրենց գործելու ավելի լայն հնարավորություններ են տրվում: Քաղաքական դաշտում նրանք ստանում են ավելի լայն ազատություն, դժվարանում է նրանց հիմնած կուսակցությունների փակումը:

Ձիմվորականությունը չնայած կողմ է արտահայտվել, սակայն այս փաթեթով կրճատվում է նրա դերը Թուրքիայի քաղաքական կյանքում, նեղանում նրա ազդեցության շրջանակը: Դրա վառ օրինակն է փոփոխությունը Ազգային անվտանգության խորհրդում (ԱԱԽ): Վերջինիս կազմում քաղաքացիական անձանց թիվն ավելացել է չորսով՝ հինգ զինվորականի կողքին:

ԱԱԽ-ն խորհրդակցական մարմին է: Գործնականում՝ այն ավելի մեծ կշիռ ունի, քան զուտ խորհրդատվությունը. մասնավորապես ազդեցիկ են նրա զինվորական անդամները: ԱԱԽ-ն ամեն ամիս ժողով է գումարում, որին հետևում է մամուլի հայտարարությունը:

2002թ. հոկտեմբերի 9-ին Բոյուսելում հրապարակվել է «Առաջխաղացման զեկույցը», որտեղ նշվում և խրախուսվում են Թուրքիայի կատարած դրական քայլերը:

Չայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների կապակցությամբ նշվում է, որ Թուրքիա-Չայաստան սահմանը դեռ փակ է: Սակայն դրական զարգացումներ են տեղի ունեցել երկկողմանի հարաբերություններում: Մի քանի ան-

զան հանդիպումներ են տեղի ունեցել երկու երկրների արտաքին գործերի նախարարների միջև: Հայաստանի արտաքին գործերի նախարարը 2002թ. հունիսին Ստամբուլում մասնակցել է Սևծովյան համագործակցության խորհրդի նիստերին: Ձեկույցում նաև նշվել է Թուրք-հայկական գործարարների խորհրդի գործունեության մասին: Ընդհանուր առմամբ՝ այս զեկույցը չունի ոչ հակաթուրքական, ոչ էլ թուրքամետ մոտեցում: Իզուր էին Թուրքիայի սպասումները՝ Գերմանիայում սոցիալ-դեմոկրատների ու Կանաչների միության տարած հաղթանակի շնորհիվ հստակեցնել Թուրքիայի անդամակցության վերաբերյալ բանակցությունների ամսաթիվը: Դա հետաձգվել է մինչև դեկտեմբերի 12-ին Կոպենհագենում տեղի ունենալիք ԵՄ գագաթաժողովը:

Դա բացատրվել է նրանով, որ, չնայած կատարված բարեփոխումներին, Կոպենհագենի չափանիշները լիովին բավարարված չեն: Բացի այդ, կարևոր է նաև արված բարեփոխումները կյանքի կոչելը, դրանց իրականացումը:

ԵՄ պաշտոնյաներն ընդգծում են, որ Թուրքիայի իշխանությունների՝ Արդարություն ու բարգավաճում կուսակցության նախագահ Ռեջեփ Թայյիփ Էրդողանի մասնակցության արգելումը ընտրություններին ևս մեկ խոչընդոտ է՝ ամսաթիվը հայտնելու համար:

Կա ևս մեկ խնդիր՝ Թուրքիայի քաղաքականության մեջ զինվորականության

գրաված կենտրոնական դիրքը: Սպասվում է, որ ԵՄ խորհուրդը Թուրքիային մի ամսաթիվ կնշանակի առաջին ընդարձակման փուլի ավարտին՝ 2004-09թթ.՝ պայմանով, որ կայուն զարգացում ապահովվի Կոպենհագենի չափանիշների հարցում: Սա նշանակում է, որ Թուրքիային կտրվի մի շատ պայմանական ամսաթիվ:

Թուրքիային իրենց շարքերն ընդունելու Եվրամիության դժկամության ամենահիմնական պատճառ կարելի է համարել այն, որ, համաձայն 2001թ. փետրվարին տեղի ունեցած Նիցցայի գագաթաժողովում ընդունված որոշման, Եվրամիության խորհրդում ձայները բաշխվելու են ըստ անդամ երկրների բնակչության թվաքանակի. օրինակ՝ Գերմանիան, Միացյալ Թագավորությունը, Ֆրանսիան ու Իտալիան, որոնց բնակչության թիվն անցնում է 50 միլիոնից, այժմյան 10-ական ձայնի փոխարեն կստանան 29-ական ձայն: Թուրքիան, ընդգրկվելով Եվրամիություն, անմիջապես կմտնի այս ուժեղագույն երկրների շարքը և մեծ կշիռ ձեռք կբերի հարցերը լուծելիս: Բացի այդ, Թուրքիան, լինելով ԱՄՆ-ի ամենամերձավոր դաշնակիցը և ունենալով մեծ կշիռ ԵՄ-ի մեջ, կվարի ամերիկամետ քաղաքականություն և հնարավորություն կունենա արգելակել այն օրինագծերի վավերացումը, որոնք ձեռնտու չեն լինի ԱՄՆ-ին:

Ամսաթվի հետաձգման մեկ այլ պատճառ էլ նույնքան 3-ին տեղի ունենալիք

վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններն են: Եթե ընտրություններում հաղթեն Արդարություն ու բարգավաճում կուսակցությունը և Ազգայնական շարժում կուսակցությունը, ապա Թուրքիային ամսաթիվ չեն հայտնի, քանի որ կասկածի տակ կամնվի ընդունված բարեփոխումների իրականացումը: Սակայն հարկ է նշել, որ 2002թ. վերջին, ամսաթվի հետաձգումն էլ ավելի թուլացրեց Մայր հայրենիք և ժողովրդավարական ձախ կուսակցությունների առանց այդ էլ թույլ դիրքերը:

Ի վերջո, եթե Թուրքիան դառնա ԵՄ անդամ, դա կնշանակի, որ Թուրքիայի բոլոր խնդիրները մեխանիկորեն դառնում են ԵՄ խնդիրներ, իսկ դրանք քիչ չեն՝ Կիպրական, Հայկական և Քրդական հարցեր, տնտեսական ճգնաժամ, Հաթայի հարց, Էգեյան կղզիների հարց և այլն: Այս ամենին զումարվում է նաև ԵՄ անդամ երկրների անհամաձայնությունը Թուրքիայի անդամակցության վերաբերյալ: Համաձայն Եվրոպայում սոցիալական հարցում անցկացնող «Եվրաբարոմետր» հաստատության հետազոտությունների, ԵՄ անդամ երկրների բնակչության 31 տոկոսը կողմ է Թուրքիայի անդամակցությանը ԵՄ-ին, դեմ՝ 47-ը: Թուրքիայի՝ ԵՄ անդամակցությանը կողմ են Շվեդիան՝ 47 տոկոս կողմ ձայնով, Իսպանիան՝ 44, Իռլանդիան և Պորտուգալիան՝ 43-ական տոկոս: Ամենաթույլ օժանդակությունը Թուրքիան ստանում է Հունաստանից՝ 20 տոկոս:

ԹՈՒՐԻԻԱՅԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՄԵԾ ԽՄԲԵՐԸ

Իհլաս Հոլդինգ (IHLAS HOLDING)



Իհլաս հոլդինգի հիմքերը դրվել են 1970թ.՝ «Հաքիբաթ» (հետագայում «Թյուրքիյե») թերթի իրապարակմամբ:

Իհլաս հոլդինգը ներկայացված է շինարարության, առողջապահության, կրթության, ՋԼՄ-ների, մարկետինգի, ապահովագրության, ոչ ալկոհոլային խմիչքների և այլնի արտադրության բնագավառներում:

Իհլաս հոլդինգի պատմության մեջ կարևոր դեր է խաղացել Դր. Էնվեր Օրենը: Նա ծնվել է 1939թ. Դենիզլիում, տարրական ու միջնակարգ կրթությունը ստացել ծննդավայրում, ապա ընդունվել Քուլեֆիի ռազմական վարժարանը: Այնուհետև ընդունվել է Ստամբուլի համալսարանի կենդանաբանության-բուսաբանության բաժինը: 1961թ. պրակտիկան անցկացրել է Նեապոլում՝ ՆԱՏՕ-ի կրթաթոշակով:

1970թ. մտել է լրագրության բնագավառ, հիմնադրել «Հաքիբաթ» թերթը: Սակայն թերթի ինքնարժեքը բարձր էր, և Օրենն իր ընկերների հետ որոշում է, չդադարեցնելով իրատարակչական գործունեությունը, մտնել նաև առևտրի բնագավառ: Այստեղ նրանք այնքան մեծ հաջողությունների են հասնում, որ փոխում են թերթի անվանումը «Թյուրքիյե»-ի, տպարաններ հիմնում Անկարայում, Ադանայում, Էրզրումում, Սամսունում և

Ֆրանկֆուրտում: 1985թ. թերթի տպաքանակը 119 հազար էր, 1986թ.՝ 220, 1989թ.՝ 300 հազար: Նույն թվականին հիմնվում է «Կասետ ֆաբրիկասի»-ն, որը հետագայում դառնալու էր TGRT (Turkiye Gazetesi Radyo Televizyon) հեռուստաալիք:

1989թ. հիմնադրված «Իհլաս Յուվա» կոոպերատիվը հիմք է դնում շինարարական բիզնեսին: Այսօր այն ունի 40-ից ավելի ինժեներ և ժամանակակից մեքենաների պարկ:

1992 թվականից Իհլասը Թուրքիա է ներմուծում «Քիյա» և «Սուբարու» ավտոմեքենաներ, բանակցություններ վարում ֆրանսիական «Սիտրոեն»-ի ու «Պեժո»-ի հետ:

Այսօր Իհլաս լրատվական գործակալությունը (Ihlas Haber Ajansi) Թուրքիայում ամենահզորներից է:

ԱՄՆ-ի «Գլոբալ ֆայնենս» ամսագրի հետազոտության համաձայն՝ Էնվեր Օրենի անունն աշխարհին ուղղություն տվող 600 մարդկանց ցուցակում է :

Իհլաս խմբի մեջ մտնող ընկերություններն են՝

- *Bisan Bisiklet*
- *Ihlas Ev Aletleri*
- *Ihlas Gayrimenkul*
- *Ihlas Koleji*
- *Ihlas Uluslararası Insaat*
- *Ihlas Yapi*
- *Kristal Cola*
- *Turkiye Gazetesi*
- *Turkiye Hastanesi*
- *Ihlas Holding*
- *Ihlas Sigorta*
- *Ihlas Pazarlama*
- *Ihlas Vakfi*
- *Ihlas Haber Ajansi (IHA)*
- *Ihlas Tarsan*
- *TGRT FM*
- *TGRT*

ՆՈՐ ՏԵՆՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ` Ի ՄՊԱՍ ԱՉԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Ժամանակակից աշխարհում լայն տարածում գտած Rd88 համակարգիչները մեծապես փոխել են երեխաների մտածելակերպը և մոտեցումը դեպի գիրքն ու ուսուցումը: Այս պարագայում Հայաստանում և, առավել ևս, սփյուռքում հայերեն լեզվի, գրականության, մշակույթի, ավանդույթների և պատմական իրադարձությունների տարածման, պահպանման և ուսուցման համար կարևոր է ներկայացնել ու նատուցել այդ ամենը` լայնորեն օգտագործելով համակարգչային տեխնիկայի բոլոր հնարավորությունները:

Այդ նպատակին է ծառայում արդեն 6 ամիս գործող քառալեզու (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն) կայքը (սայթը), որը հիմնականում նախատեսված է դպրոցահասակ երեխաների համար: Այստեղ, խաղի միջոցով, զարգանում են գիտելիքները, հիշողությունը, և կենտրոնացնում ուշադրությունը:

Կայքը մտածված և կազմակերպված է այնպես, որ հնարավորություն է ընձեռում մասնակցել բազմապիսի հետաքրքիր խաղերի, համակարգչի մեջ տեղակայել բազմաթիվ պաստառներ, որոնց մեջ զգալի տեղ են գրավում Հայաստանի տեսարժան վայրերի պատկերները, նայել բազմաթիվ անհմացողներ էլեկտրոնային շնորհավորական բացիկներ և ուղարկել ձեր բարեկամներին, մտերիմներին և ընկերներին, ընտրել բջջային հեռախոսի համար հայկական երաժշտություն:

Բացի այդ, նույն ծրագրի շրջանակներում մշակված և արտադրված է ըստ Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազար» հեքիաթի համանուն էլեկտրոնային եռալեզու տարբերակը`

լակը` լազերային սկավառակի (CD) տեսքով` բաղկացած 30 անհմացողն պատկերազարդ դրվագներից, 134 զվարճալի հետաքրքրաշարժ շարժանկարներից, որոնք ուղեկցվում են հատուկ այս հեքիաթի համար գրված ազգային



www.nazarclub.com

երաժշտությամբ և երկու զուգակցող խաղերով` երեք տարբերակներով` արևմտահայերեն, արևելահայերեն և երրորդ` օտար լեզվով (անգլերեն, ֆրանսերեն կամ ռուսերեն): Այս բոլորն արդեն վաճառվում են Հայաստանում, Ֆրանսիայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Լիբանանում այլ երկրներում:

Շուտով պատրաստ կլինեն «Ձախորդ Փանոսը» և «Խոսող ձուկը» հեքիաթների էլեկտրոնային տարբերակները: Յուրաքանչյուր հեքիաթից մեկ ցուցադրական դրվագ նույնպես տեղ է գտել այս կայքում: Հետագայում կայքում կանցկացվեն բազմաթիվ մրցույթներ, որոնց հաղթողները կստանան մրցանակներ:

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՄՈԼՈՐԱԿ



www.mankutyamolrak.com

Հուրախություն Հայաստանում և արտերկրում բնակվող հայերի, նաև` օտարերկրացիների, վերջերս Հայաստանում համացանցային (ինտերնետ) կայքերի շարքը համալրվեց ևս մեկով` «Մանկության մոլորակ» անվամբ: Խոսքը մի հրաշք ու հեքիաթային մոլորակի մասին է, որտեղ իրենց սիրելի հեքիաթների հերոսներին կարող են հանդիպել ամենազգայուն և տպավորվող արարածները` երեխաները: Նրանց համար վերջապես առիթ է ստեղծվել ինտերնետում կարդալու հեքիաթներ, բանաստեղծություններ, առակներ, ծանոթանալ իրենց իրավունքներին` անցկացնելով հետաքրքիր ու անմոռանալի ժամեր:

Այս անգնահատելի աշխատանքի հեղինակը Գայանե Կլեկյանն է, մարդ, որը ոչ միայն հաճույքով է աշխատում այս «մոլորակում»` «մանուկների հետ` մանուկների համար» կարգախոսով, այլև մտահոգ է նոր սերնդի հայեցի դաստիարակությամբ:

Մանկության «մոլորակաշինությանը» մասնակցել են Դավիթ Հակոբյանը (Էջի ձևավորող), Անուշ Ղուշչյանը, Կարո Հակոբյանը (Շվեդիա), Գայանե Միքայելյանը (Հանրապետական ազգային գեղագիտական կենտրոնի ուսուցչուհի), Օֆելյա Միքայելյանը, Կարեն Մոսիսյանը, Լևոն Պետրոսյանը (Ֆրանսիա):

Մի շատ հաճելի նորություն ևս. շուտով նկարագարող հեքիաթների թիվը կհամալրվի ևս 13-ով, կավելանան պատուհաններ, հոգեբանի անկյուն, պատկերասրահ և այլ խորագրեր, կտեղադրվեն նյութերի ռուսերեն և անգլերեն տարբերակները:

«Մանկության մոլորակում» երեխաները հնարավորություն ունեն երազել, երևակայել, փնտրել, գտնել իրենց համար ամենանվիրականն ու ամենահարազատը` այն անկյունը, որտեղ հեքիաթների բարի և ուժեղ հերոսներն իրենց աներևակայելի մղումով ուժ են հաղորդում իրենց:

Շտապե՛ք հայտնվել «Մանկության մոլորակում»` հետևելով ժամ-ժակ Ռուսոյի` «Թողք մանկությունը հասունանա մանկության մեջ» խորհրդին:

Նարինե Գևորգյան

ՕԺԻՏԻ ԳՈՐԳԵՐԻ ՈՒ ԿԱՐՊԵՏՆԵՐԻ ԱՐԱԿԱՆ ԵՎ ԻԳԱԿԱՆ ՍԿԻԶԲԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ՄԻ ԶԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Լիլյա Ավանեսյան
Հայաստանի պատմության ֆանդարան


Սեզանում ավանդույթ է եղել օժիտի համար հետաքրքիր, գունագեղ պատկերներով գորգեր ու կարպետներ գործելը: Դրանց պատկերներն ունեին իմաստավորված հորինվածք ու զարդաձևեր և կոչված էին ո՛չ միայն զարդարելու նորապսակների անկյունը, այլև որպես պահպանակ՝ պաշտպանելու նրանց ու նրանց սերունդներին:

Օժիտի գորգերի ու կարպետների բազմազանությունը և դրանց հագեցվածությունը, իմաստաբանական բովանդակությամբ, թույլ չեն տալիս անդրադառնալ բոլոր պատկերների վերլուծությանը սույն հոդվածում¹:

Մեր ուշադրության կենտրոնում արական և իգական սկիզբը խորհրդանշող որոշ պատկերների ուսումնասիրությունն է, որոնք վերցված են Արցախի, Սիսիանի, Ուտիք-Տավուշի գորգագործական ու կարպետահյուս մշակույթից: Այդ մշակույթից հինգի վրա կան եռաժանու պատկերներ: Մի քանիսի վրա եռաժանին պատկերված է հորիզոնական դիրքով՝ երիտասարդ այրերի ոտքերի տակ կամ կողքին: Տավուշի XIX դ. ջեջիմի վրա այն հանդես է գալիս առանձին ուղղահայաց գոտիների մեջ՝ արական հատկանիշով մարդակերպ պատկերների հետ: Սիսիանի XIX դ. N 11467 գորգի դրվագներից մեկում ջրային թռչունը (հավանաբար՝ ձկնկուլը) պատկերված է եռաժանու վրա, որի ներքևում կա ոճավորված օձապատկեր: Ուշագրավ է, որ երեք պատկերներն էլ կապված են ջրի պաշտամունքի հետ: Սյունիքի ժայռապատկերներից մեկի վրա եռաժանու կողքին կա այծի պատկեր, որից ներքև գույգ օձերը պահպանում են ձվերով բույնը (գծանկար 1): Ջրային թռչունը, այծը և եռաժանին ջրի ու ջրային տարերքի խորհրդանշաններ են. պտղաբերություն են նշանակում: Եռաժանու պատկերը հայտնի է հին աշխարհի մի շարք աստվածությունների՝ Թեշուբի, Պոսեյդոն-Նեպտունի, Շիվայի պատկերաբանակներից: Թե՛լ Ահմարում (Սիրիա) գտնված սյան վրա Թեշուբը (ռազմի, երկնային տարերքի, կայծակի, ամպրոպի աստվածություն) ձախ ձեռքին ունի եռաժանի, աջին՝ սակր, գոտկատեղին՝ դաշույն²: Հունա-հռոմեական Պոսեյդոն-Նեպտուն ջրային աստվածությունը պարտադիր եռաժանիով է պատկերվում³: Հինդուիստական արարող ու կործանող հզոր Շիվա աստվածությունը նույնպես եռաժանի ունի:

Շիվայի հայտնի մակդիրներից է Գանգադխարա՝ «Գանգեսը տանող» անունը⁴: Հայաստանի դամբարանների պեղումներից նույնպես հայտնաբերվել են եռաժանի և երկժանիներ, որոնք թվագրվում են մ.թ.ա. XIII-X դդ.⁵: Ե. Լալայանի կարծիքով՝ Պատաշարից և Ադիամանից հայտնաբերված երկժանիները քրմական ցուպեր են, «իբրև երկրագործական նշանակ»⁶:

Եռաժանին (ինչպես և երկժանին) համարվել է նաև զենքի տեսակ և միշտ հանդես է եկել այրերի կամ էլ մարտա-



Գծանկար 1

կան հատկություններ ունեցող կերպարների հետ⁷: Կրկին նշենք, որ եռաժանին խորհրդանշում է արական սկիզբ և պտղաբերություն է Գեղամա լեռների ժայռապատկերներից մեկի վրա «կենաց ծառերի», թռչնի, այծի կողքին կա երկիրն արգասավորող աստվածության պատկեր (գծանկար 2), որի ընդգծված առնականությունը եռաժանու ձև ունի:

Ժամանակի ընթացքում վերանում են առասպելական աստվածությունների պաշտամունքները, բայց նրանց կերպարներին ուղեկցող խորհրդանշանները նույն իմաստաբանական նշանակությամբ շարունակում են պատկերվել նաև մեր օրերում: XIX-XX դդ. գորգերի ու կարպետների վրա եռաժանին դարձյալ հանդես է գալիս որպես այր մարդու ուժի և պտղաբերության խորհրդանիշ: «Եռաժանի» զարդաձևը՝ արական ուժի խորհրդանիշը, գործվածքի հորինվածքում չի անջատվում իգական սկիզբը խորհրդանշող պատկերներից: Պտղաբերության գաղափարը կրող հակադիր ուժերի՝ տղամարդու և կնոջ խորհրդանշական պատկերների օգտագործումը նույն հորինվածքում ամբողջացնում է արարման գործընթացի նկարագիրը:


Իգական սկիզբը խորհրդանշող երկրաչափական զարդաձևերի մեջ ամենատարածվածը շեղանկյուն պատկերներն են: Շեշտակի լայն որովայնով, դեպի բևեռները նեղացնող իրանով հին քարեդարյան (պալեոլիթ) արձանիկներն ունեն շեղանկյան ուրվագիծ⁸: Օժիտի կարպետների ու գորգերի մեղալիոնների հիմնական մասը շեղանկյունաձև են: Հիմնադաշտը նույնպես զարդարում են շեղանկյուն զարդաձևերը: Հատկապես շատ են շեղանկյունները կանացիակերպ աղաքսակների վրա: Աղաքսակների զարդաձևերը միայն դիմային մասում են, որտեղ ենթադրյալ կնոջ որովայնն է գտնվում: Օժիտի գորգագործ առարկաների զարդանախշերի մեջ առանձնահատուկ են ծառերի պատկերները, որոնք խորհրդանշում են պտղաբերություն, լիություն, կին⁹:

Արցախյան կարպետների շեղանկյուն մեծ մեղալիոնների կենտրոնից տարածվում են «կենաց ծառի» ծաղկած ճյուղերը: Օժիտի կարպետների ու գորգերի հիմնադաշտը նույնպես զարդարված է «կենաց ծառերի» պատկերներով

(օրինակ՝ Արցախի Ազնեք գյուղի N 11277 օժիտի գորգի պատկերները):

Տավուշի XIX դ. նրբագեղ գոտիներում տղամարդկանց, եռաժանիների, կանանց պատկերների կողքին կան «կենաց ծառի» պատկերներ: «Կենաց ծառի» պատկերներն ունեն նոր քարեդարյան (նեոլիթ) շրջանի կանանց արձանիկները: Կինը՝ մայրը և ծառը հանդես են գալիս որպես հողի գաղափարակիր ու խորհրդանիշ¹⁰: Մայր աստվածուհին հաճախ պատկերվել է ծառի ճյուղը ձեռքին կամ դրան միահյուսված: XIX դ. N 11595/11 աղաքսակը հիշեցնում է N 2260 վաղ հայկական շրջանի կնոջ կավե արձանիկը¹¹: Ինչպես արձանիկի վրա, այնպես էլ աղաքսակի գլխամասում կան վերադիր ծամեր՝ վզիկի վրա «կենաց ծառի» պատկերներով: Կանացիակերպ աղաքսակները հիշեցնում են վաղ անցյալում մայր աստվածուհու պաշտամունքի գոյությունը: Նրա պատկերը հաճախ վերացական է՝ ինչպես ժայռափոր արվեստում¹² և ընդգծված մարմնի ձև ունի:

Մեր աղաքսակներն իրենց զուգահեռներն ունեն ո՛չ միայն հին ու նոր քարեդարյան արձանիկների, այլև XIX դ. Ալաշկերտի կավե սքանչելի կանացիակերպ աղամանների հետ¹³: Կարպետների վրա իզական սկիզբը խորհրդանշող շեղանկյուն նախշերի որոշ տեսակներ ժողովրդական բարբառում կոչվում են «խնձոր»¹⁴ հաստատելով այդ զարդածևի կապը կին-պտուղ-պտղաբերություն գա-



Ջեջին, XIX դ., Ուտիք-Տավուշ, մետաքս, ԳՊԹ

Գծանկար 3

մոտ ավանդաբար մնում էր այն համոզմունքը, թե կնոջ-մոր-աստվածուհու պատկերը և նրա հատկանիշներն ու խորհրդանիշներն օժտված են գերբնական հատկություններով և ուժով: Արական և իզական սկիզբը խորհրդանշող զարդածևերով գործվածքը (գորգը, կարպետը, աղաքսակները, խուրջիները, անկողնապարկերը և այլն) օժիտի կարևորագույն մասն էին կազմում ոչ միայն իրենց կիրառական նշանակության, այլև հմայական, պաշտպանական բնույթի համար:

1. Հարսանեկան ծեսի խորհրդանիշ-պատկերների մանրակրկիտ վերլուծությունը տես Աստղիկ Իսրայելյանի «Օժիտի արցախյան մի կարպետ» հոդվածում, Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1997, էջ 461-488:
2. Ա. Մարտիրոսյան, Հայաստանը բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում (ռուս.), Երևան, 1964, էջ 105:
3. Ա. Լոսև, Պոսեյդոն, «Աշխարհի ժողովուրդների առասպելներ» մատենաշար (ռուս.), հ. 2, Մոսկվա, 1992, էջ 323-324:
4. «Աշխարհի ժողովուրդների առասպելներ» մատենաշար (ռուս.), հ. 2, Մոսկվա, 1992, էջ 644, Վ. Բաուեր, խորհրդանշանների հանրագիտարան (ռուս.), Մոսկվա, 1998, էջ 33, 61:
5. Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., տախտ. XXXV:
6. Ե. Լալայան, Դամբարանների պեղումները խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 170-171:
7. Վ. Աֆանասև, Իշտար, «Աշխարհի ժողովուրդների առասպելներ» մատենաշար (ռուս.), Մոսկվա, 1991, էջ 595, Ա. Էվանս, «Կրետի գծային գիրը» (ռուս.), «Վեստնիկ դրևնեյ իստորիի», Մոսկվա, 1939, էջ 33:
8. Ա. Դեմիրխանյան, Բ. Ֆրոլով, «Ուղղահայացի նախնադարի խորհրդանշանը» (ռուս.), Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1985, թիվ 3:
9. Ե. Անտոնովա, Առաջավոր և Միջին Ասիայի հին երկրագործների նշակույթի ուրվագծեր (ռուս.), Մոսկվա, 1984, էջ 117:
10. Հ. Իսրայելյան, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973, էջ 144:
11. Հ. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 157-158:
12. Հ. Մարտիրոսյան, Գիտությունը սկսվում է նախնադարում, Երևան, 1987, էջ 55:
13. ՀՊԹ-ի հավաքածու:
14. Ս. Դավթյան, Հայկական կարպետ, Երևան, 1975, տախտ. 2:
15. Ե. Անտոնովա, նշվ. աշխ., էջ 131:



Ժայռապատկեր Գեղամա լեռներից

Գծանկար 2

ղափարի հետ:

Պատկերների մեջ հաճախ կնոջ մարմինը անոթի, ծաղկամանի տեսք է ունենում, ինչպես Տավուշի XIX դ. մետաքսե ջեջինի վրա է (գծանկար 3): Առաջավոր Ասիայի մ.թ.ա. IV-III հազարամյակներից մեզ հասած անոթների վրա պատկերված են տեսարաններ, որտեղ կանացիակերպ անոթներն օգտագործվել են հատուկ ծեսերի ժամանակ¹⁵:

Այսպիսով՝ մեզանում տարածում գտած կանացիակերպ իրերը, պատկերները, «կենաց ծառի», շեղանկյուն զարդածևերը հայտնի են հին քարի դարի շրջանից և պահպանվել են մինչև մեր օրերը: XIX-XX դդ. գորգագործների

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2004թ. հունվարի կարևորագույն իրադարձությունները

7 - Վրաստանում կայացած ընտրություններին ակտիվորեն մասնակցեցին հայալեզու շրջանները:

- Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵԽՆԿ) սկսվեց դարավաղյան հարցի քննարկումը:

- Թուրքական «Բելգե ֆիլմ» կինոընկերությունը հրաժարվեց Ատոմ Էդոյանի «Արարատ» կինոնկարը ցուցադրելու մտադրությունից:

9 - Պերձ Մինասյանի և Ստեֆան Շերըրի գլխավորած հետազոտական խումբը հայտնաբերեց էպիլեպսիայի լաֆորա տեսակի հարուցիչ գենը:

10 - Հայ-թուրքական հաշտեցման հանձնախումբը հանդիպեց Լոնդոնում:

12 - ՀՀ ԱԺ նախագահը պաշտոնական այցով մեկնեց Ֆրանսիա:

- Հայ սպաները մեկնեցին Ստամբուլ՝ այնտեղից Բաքու թռչելու համար՝ մասնակցելու ՆԱՏՕ-ի զորավարությունների նախապատրաստական հավաքին:

13 - Արգելվեց հայկական պատվիրակության մուտքը Բաքու:

14 - Մամլո ասուլիսի ժամանակ ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը 2003թ. որակեց «ակտիվ և արդյունավետ» ՀՀ արտաքին քաղաքականության տեսակետից:

- Համաշխարհային Սանկի երևանյան գրասենյակի ղեկավար Ռոջեր Ռոբինսոնը հայտարարեց, որ մոտակա ժամանակում ՀԲ-ն Հայաստանին համակարգային SAC վարկեր չի տրամադրի՝ երկրի տնտեսական վիճակի վարելավման պատճառով:

15 - ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ստորագրեց «Այլընտրանքային զինժառանգության մասին» ՀՀ օրենքը:

16 - Հայաստանի ժուռնալիստների միությունը հանձնեց «Ոսկե գրիչ» մրցույթի 2003թ. հաղթողների մրցանակները և վկայականները:

20 - ՀՌԱԿ-ը հայտարարեց, որ այսուհետ գործելու է ընդդիմադիր դաշտում:

21 - Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալվանոյանը, հաղթելով Անդրե Ադասուն, նվաճեց այս տարվա իր առաջին տիտղոսը:

- Երևանում շահագործումից հանվեց վերջին տրամվայը:

22 - Թուրքիայում լույս տեսավ Ջորավար Անդրանիկի մասին պատմաման Անդրանիկ Չելեմյանի գրքի թուրքերեն թարգմանությունը:

- ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում վացվեց Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի անվան գրադարան-թանգարանը:

- ԱՄՆ ժամանելիս՝ ընտանեկան պատճառներով ձերբակալվեց ՀՀ ԱԺ պատգամավոր Թաթուլ Մանասերյանը:

25-30 - Վարչապետ Անդրանիկ Մարգարյանի ղեկավարած պատվիրակությունը Ստոկհոլմում մասնակցեց «Ցեղասպանության կանխարգելում, սպառնալիքներ և պատասխանատվություն» համաժողովին:

25 - Հայաստանի պաշտոնական պատվիրակությունը, ԱԳ նախարար Վ. Օսկանյանի գլխավորությամբ, ժամանեց Թբիլիսի՝ մասնակցելու Վրաստանի նորընտիր նախագահ Միխայիլ Սահակաշվիլու երդման արարողությանը:

26 - Պարույր Սևակի ծննդյան 80-ամյակը նշվեց իր ծննդավայր Սևակավանում (նախկին Չանախչի):

- Թբիլիսիում Վ. Օսկանյանը հանդիպում ունեցավ ԱՄՆ

պետքարտուղար Քոլին Փաուելի հետ:

27 - ԵԽՆԿ-ն քննարկեց Հայաստանին վերամերող գեկույցը:

- Եվրախորհրդարանի արտաքին քաղաքական հանձնաժողովը հաստատեց Հարավային Կովկասի վերամերյալ գեկույցը:

- Երևանում հիմնադրվեց «Ընդդեմ մարդկանց համարակալման» միավորումը՝ պայքարելու համար «սոցիալական քարտերի» հանընդհանուր պարտադրման դեմ:

28 - Մեծ շուքով նշվեց հայկական Սանակի օրը:

29 - «Նյու Յորք լայֆ» ապահովագրական ընկերությունը համաձայնեց 20 միլիոն դոլար վճարել Հայոց ցեղասպանության զոհերի այն ժառանգներին, որոնց պապերն ու ազգականներն ապահովագրված են եղել այդ ընկերությունում:

- Երևան ժամանեց ՌԴ կառավարության նախագահի տեղակալ, Հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Բորիս Ալյոշինը՝ «Գույք» պարտքի դիմաց» ծրագրով ռուսական կողմին հանձնված ձեռնարկություններին տեղում ծանոթանալու համար:

- ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը մարդու իրավունքների պաշտպանի (օմնիուսմեն) պաշտոնի համար ներկայացրեց «Ընդդեմ իրավական կամայականությունների» հասարակական կազմակերպության նախագահ Լարիսա Ալավերդյանի թեկնածությունը:

2004թ. փետրվարի կարևորագույն իրադարձությունները

- Առաջին օրեր - Հրապարակվեց ու հասարակական քննարկման հանձնվեց «Հանրակրթության պետական կրթակարգի նախագիծը»:

2 - Վախճանվեց ակադեմիկոս Միքայել Տեր-Միքայելյանը:

- Ծաղկածորում մեկնարկեց «Բազե. ձմեռ-2004» համահայկական երիտասարդական հավաքը:

- ԱՄՆ-ի նախագահի վարչակազմը Կոնգրեսին ներկայացրեց 2005թ. ընդունելու, որով առաջարկվում է ՀՀ-ին հատկացնել 62 միլիոն դոլար օգնություն: Կոնգրեսը 2004թ. համար հաստատել էր 75 միլիոն դոլարի օգնություն ՀՀ-ին: Ադրժեջանին առաջարկվող օգնությունը մնացել է նույնը՝ 38 միլիոն դոլար:

3 - «Ազգային միավանություն» և «Արդարություն» խմբակցությունները ԱԺ-ում հրապարակեցին իրենց համատեղ հայտարարությունը, որով առկախեցին իրենց մասնակցությունը խորհրդարանի աշխատանքներին:

5 - Կառավարության նիստում ընդունված և ԱԺ ուղարկված «Զինապարտության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծով առաջարկվեցին սկզբունքային փոփոխություններ, մասնավորապես ուսանողների տարկետման վերացումը:

- Օմնիուսմենի պաշտոնի համար Լ. Ալավերդյանի թեկնածությունը քննարկվեց ու հավանության արժանացավ ԱԺ-ում:

- Հայաստան ժամանեց Լեռնային Ղարաբաղի գծով ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի ղեկավարների հատուկ ներկայացուցիչ Գորան Լեննարթերը:

5-6 Հայաստան այցելեց ԵԽ Նախարարների կոմիտեի շրջանակներում գործող «Ազոյի խումբը»:

6 - Ծաղկածորում սկսվեց ՀՅԴ 29-րդ ընդհանուր ժողովը:

ՀՅՐ Բյուրոյի ներկայացուցիչ Հ. Մարգարյանն իր ելույթում հանդես եկավ Սավական կոչոտ դիրքորոշումներով:

- Պիետորո Էրկոլե Ազոյի կարծիքով՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի նկատմամբ փոխվել է ադրժեջանական իշխանությունների դիրքորոշումը:

- Ըստ ՌԴ ԱԳ նախարարի տեղակալ Վալերի Տրուբնիկովի՝ ԼՂ հակամարտության կարգավորման լուծակցային գործընթացը պետք է դարձնել քառակողմ՝ ընդգրկելով ԼՂ ղեկավարությանն ու ադրժեջանցի փախստականներին:

12 - ՀՀ զինված ուժերի մեկ դասակ մեկնեց Կոսովո՝ ՄԱԿ-ի հովանու ներքո իրականացվող խաղաղապահ առաքելությանը մասնակցելու համար:

16 - Լյուքսեմբուրգի Արդարության եվրոպական դատարանը մերժեց Թուրքիայի՝ Եվրամիության անդամության անհնարինության մասին «Եվրոպա - Հայաստան» միության հայցը:

- «Զինապարտության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը դատապարտող հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ Կառուցվածքային գործառնության գլխավորն Սևակ Մանուկյանը:

18 - Ավարտվեց ՀՅՐ 29-րդ ընդհանուր ժողովը: Հրապարակված հայտարարության ձևակերպումները անհամեմատ մեղմ էին լացման օրը Հ. Մարգարյանի ելույթի դիրքորոշումներին:

19 - Սան-Ֆրանցիսկոյում սկսվեց հայկական կինոյի փառատոնը:

- ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվեց ՀՀ պատմության մեջ առաջին օմնիդսենը:

- Բուդապեշտում՝ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում, անգլերեն լեզվի ուսուցման դասընթացների մասնակից ադրժեջանցի սպան կացնով սպանեց էլետենանտ Գուրգեն Մարգարյանին:

- ՀՀ կառավարությունն «ԱրմենՏել»-ին գրկեց Ըջջային կապի և ինտերնետային ծառայությունների մենաշնորհից:

- Քեմբրիջի համալսարանը լույս ընծայեց «Ամերիկան և 1915թ. հայերի ցեղասպանությունը» հոդվածների ժողովա-

ծուն:

20 - Գ. Սունդուկյանի անվան Հայաստանի պետական ակադեմիական թատրոնը նշեց իր հիմնադրման 80-ամյա հոբելյանը:

- Իրանում կայացած խորհրդարանական ընտրություններում ընտրվեց Երկու հայ պատգամավոր:

21 - Ֆրանսիական Մոն Վալերիան քաղաքում նշվեց Ֆրանսիայի Դիմադրական շարժման հերոս Միսակ Մանուշյանի գնդակահարության 60-րդ տարելիցը:

23 - Տարածաշրջան ժամանեց Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում Լեռնային Ղարաբաղի հարցով զեկուցող, Բրիտանացի պատգամավոր Թերրի Դևիսը:

25 - «Զինապարտության մասին» ՀՀ նոր օրինագծի դեմ Լիդրբոլ ուսանողները ԵՊՀ-ում հանդիպեցին ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Մարգարյանին և, դժգոհ մնալով, ցուցադրամար հեռացան սրահից:

- Հուշարձանների և պատմական վայրերի համաշխարհային խորհրդի (ԻՎՈՄՈՍ) «Վտանգված ժառանգություն» ամենամյա տեղեկագրի վերջին թողարկման մեջ ուշադրություն է հրավիրվում Նախիջևանի տարածքում գտնվող Զուղայի հայկական գերեզմանատան հազարավոր խաչքարերի ոչնչացման փաստի վրա:

26 - ՀՀ կառավարությունը ԱԺ-ից հետ կանչեց ուսանողության շրջանում մեծ դժգոհություն առաջացրած «Զինապարտության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը:

- Եվրախորհրդարանն իր լիազումար նիստում ընդունեց շվեդ պատգամավոր Պեր Գարթոնի պատրաստած «Եվրամիության քաղաքականությունը Հարավային Կովկասի նկատմամբ» զեկույցը, որտեղ նախկին ԼՂԻՄ-ի կից հայկական ազատագրված տարածքները որակվում են «գրավյալ»:

28- Նշվեց սումգայիթյան սպանդի 16-րդ տարելիցը:

*Սուրեն Մանուկյան
Պատմ. գիտ. թեկնածու*

ԲՈՂՈՔԱԳԻՐ

ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹՅՈՒՆ ՊՄՐՈՆ ԹՈՆԻ ԲԼԵՐԻՆ

Եվրոպայի հայ հասարակությունը ցնցվեց ԳԳ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանի հետևյալ հայտարարություններից. «Չեմ կարծում, թե դեպքերը որպես ցեղասպանություն ճանաչելը կարող է օգտակար լինել», «Չկան բավարար փաստեր, որոնք թույլ տային տեղի ունեցածները որակել որպես ցեղասպանություն՝ համաձայն ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի»:

Աշխարհի տասնհինգ պետություններ ու խորհրդարաններ, ինչպես և տեղական խորհրդարաններ ու վարչակազմեր, նաև ՄԱԿ-ի՝ Խտրականության կանխարգելման ու փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնախումբը, Եվրախորհրդարանը, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը և միջազգային այլ կազմակերպություններ արդեն պաշտոնապես ու անվերապահորեն ճանաչել են Գայոց ցեղասպանությունը:

Թուրքական կառավարության՝ 20-րդ դարի սկզբին իրագործած Գայոց ցեղասպանության հետևանքով ամբողջ աշխարհով մեկ ցրված սփյուռքահայերը՝ այդ զոհերի ժառանգներն ու իրենց Գայրենիքից արմատախիլ եղածների սարսափելի հուշերի կրողները, նման հարձակում չեն կարող հանդուրժել, մասնավորաբար Գայաստանի Գանրապետության սահմաններում:

Այսպիսի հաստատումը ոչ միայն անարգում է Ցեղասպանության ժամանակ բնաջնջված ավելի քան 1 միլիոն հայերի

հիշատակը, այլև անհարիր է եվրոպական ու մարդկային չափանիշներին:

Իրենց կորուստն ու ցավը սզացող, հայկական ծագումով եվրոպացիները դիմում են ԳԳ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանին՝ պահանջելով հրապարակային ներողություն խնդրել: Գանդված ենք՝ Միացյալ Թագավորության կառավարությունը ձեռք կառնի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ բացառելու նման անամոթության երբևէ կրկնությունը:

Գարգանքներով՝

Եվրոպայի հայերի համագումար
Շվեդիայի հայկական կազմակերպությունների միություն
«Գայաստան» մշակութային և սոցիալական կենտրոն,
Գունաստան

Նորվեգիայի հայ համայնք
Կիպրոսի հայ համայնք
Լիտվայի հայ համայնք
Էստոնիայի հայ համայնք
Լատվիայի «Լատվիա-հայկական ընկերություն»
մշակութային միություն
Ֆրանսիայի «ԱՍԱԴ» կազմակերպություն
Շվեյցարիայի հայկական կազմակերպություն

SHRJADARDZ IN BRIEF

Editorial – The Time of Rebirth

The different aspects of the all-Armenian, systematic and systemized crisis are analyzed. It is stated that the solution of this crisis is to resist and win the battle, based on Trinity: Nation, Homeland and Culture.

Simon Maghakyan: Who is Silent?

The author, a student in the USA, accuses the Armenians, who, by their silence, encourage the enemies to perpetrate crimes like the Armenian Genocide and the killing of the Lieutenant Gourguen Margaryan in Budapest.

Melkonyantsi: “Ataturk Will Laugh at Us”.

The Central Board of AGBU has decided to close the Melkonyan Educational Institute of Cyprus. It is said that the leadership of AGBU has far-going plans to close down all AGBU schools in the Middle East thus serving the American interests.

Assembly of the Armenians of Europe: Petition.

A petition addressed to the leadership of RA about the declarations of the UK ambassador to RA about the Armenian Genocide, proposing to take the necessary steps towards the British ambassador.

Nikol Aghababyan: Armenia is in Danger Once More.

The famous painter calls for awakening and national unity, before it is too late.

“You, Who Are Alive!”.

Hovsep Artinyan, the editor of the «Spurk» magazine, published in Beirut, speaks about the Armenian national liberation movement and the menaces that Armenian people are faced with.

Emma Begjanyan: Unveiling the Secrecy of the Turkish-Iranian Agreement of 1932 is Against the Interests of IRI.

The author, a specialist in Iranian Studies, writes about a very difficult problem of Oriental Studies, showing that this agreement was and still is against the strategic interests of Iran in the region.

Karen Zadoyan: The International Law and the Armenian Spiritual Heritage.

The author, a lawyer, shows that the neighbors of RA are obliged by international agreements to preserve the Armenian monuments that now are in their countries.

English Speech in Turkish-Jewish Words.

The author represents the unacceptable and abusive expressions of the UK ambassador to RA about the

Armenian Genocide. The Editorial Board asks the ambassador to apologize officially, or be expelled by the Government of RA or by the Armenian people.

The Armenians in Iran.

The Armenian Community news.

Hasmik Goulakyan: The Youngst Owners of the Ancient Land.

The children and youngst photo exhibition of the Kashatagh Region of the Nagorno-Karabakh Republic which is held in Yerevan in March.

Khachik Khacher: Open Letter

The Iranian-Armenian writer and social activist severely condemns on the transmission of immoral films by the Armenian State TV, and puts forward to end such a things immediately.

Conceptual Problems of Armenian Studies.

The letter-declaration of the Association of Armenian Studies (USA) against the decision of the Armenian History Chair of Yerevan State University of Dec. 19, 2001, which had condemned the anti-Armenian concepts of the American Armenian Studies.

The Armenians in the Foreign Press.

The bibliographical data of the analytical articles, related to the Armenians, published in the foreign press.

Hasmik Goulakyan (interviewer): The Natural Right of the Armenians to Return to Their Homeland.

An interview with the historian Hakob Hakobyan, in which he declares, that the recognition the fact of the Armenian Genocide is meaningless unless it is accompanied with the recognition the right of the Armenians to return to their Historical Homeland.

Euroasianism and Karabakh

An interview with the famous Russian ideologist and strategist Alexander Dugin, in which he expresses his views towards the resolution of the Artsakh problem. The editor, Gevorg Yazedjyan, criticises Dugin’s views.

The Letters of General Andranik.

Three letters of General Andranik to the writer Arshak Chobanyan during 1917-1923. Those letters being published for the first time.

New Publications

Bibliographical data and annotations of new publications, related to the Armenians, which are published in RA and Diaspora.

Souren Manoukyan: The Georgian Revolution.

The author, a historian, represents and analyzes some of the internal aspects of the Georgian “Roses” Revolution of 2003 and the American role in this Revolution.

The Analysis of Turkey-EU Relations.

Different views of the possible integration of Turkey in the European Union are being discussed. It is concluded that Turkey will not be allowed to join the EU in the coming years.

The Big Groups of the Turkish Economy.

The Ihlas Holding is one of the giant groups of the Turkish economy.

The New Technologies and the National Values.

The new programs and website for Armenian children.

Lilya Avanesyan: The Analysis of Some Pictures Symbolizing the Male and Female Initials on Carpets and Kilims.

The author, a member of the Museum of History of Armenia analyzes on scientific basis, some aspects related to sexual symbols in the Armenian carpet and handcraft arts.

Souren Manoukyan: Armenian Chronology.

The main events of the Armenian life in Jan. and Feb. 2004.

Protest Letter to Mr. Tony Blair.

Ten European-Armenian organizations’ joint letter to the Prime Minister of the UK, protesting the notorious declarations of the UK ambassador in RA about the Armenian Genocide.

КРАТКОЕ СОДЕРЖАНИЕ

Редакционная “Время перелома”

Анализируется общенациональный, системный и систематизированный характер охватившего армянский народ кризиса. Выход из кризиса представляется в необходимости оказать сопротивление и победить опираясь на тройственный союз Нация-Родина-Культура.

Симон Магакян “Кто молчит?”

Автор статьи, студент, обучающийся в США, обвиняет нас - армян в том, что мы своим молчанием вдохновляем противника на повторение таких преступлений, как Геноцид армян и недавнее убийство армянского офицера Гургена Маркаряна.

Мелконяновец “Ататюрк будет смеяться над нами”

Подвергается резкому осуждению решение Центрального правления Всеобщего Армянского Благотворительного Союза (“Барегорцакан”) о закрытии учебного заведения “Мелконян” на Кипре. Сообщается, что служа интересам США в регионе, руководство “Барегорцакана” намеревается в дальнейшем закрыть все свои школы на Ближнем Востоке.

“Съезд армян Европы” Обращение

Обращение к Президенту РА, Председателю НС РА и Министру ИД РА с требованием принять соответствующие меры в отношении посла Великобритании в Армении в связи с ее оскорбительными высказываниями по вопросу

Геноцида армян.

Никол Агабабян “Вновь Армения подвергается угрозе”

Известный художник призывает очнуться и объединиться, иначе можем и имеющееся потерять.

“Воззовем к живущим!”

Интервью с редактором журнала “Спюрк” (Бейрут) Овсепом Артиняном о задачах армянской национально-освободительной борьбы и актуальных проблемах, стоящих перед армянским народом.

Эмма Бегиджян “Рассекречивание турецко-иранского договора 1932г. противоречит интересам ИРИ”

Автор статьи — ирановед обращает внимание на один из запутанных вопросов востоковедения и доказывает, что упомянутый договор наносил и продолжает наносить вред стратегическим интересам Ирана в нашем регионе.

Карен Задоян “Международное право и армянское духовное наследие”

Автор статьи - юрист указывает на обусловленную международными соглашениями обязанность охранять армянские памятники, находящиеся сегодня на их территории.

“Турецко-еврейское высказывание устами англичанки”

Автор статьи обращает внимание на неприемлемые и оскорбительные высказывания посла Великобритании в Армении о Геноциде армян. В связи с этим редакция требует, чтобы она публично извинилась, в противном же случае выдворить ее из страны.

Жизнь иранских армян

Информация из жизни армянской общины Ирана.

Асмик Гулакян “Юные хозяева древней земли”

Корреспонденция о состоявшейся в марте с.г. в Ереване выставки фоторабот детей Кашатагского района НКР.

Хачик Хачер “Открытое письмо”

Армянский писатель и общественный деятель из Ирана резко осуждает Армянское государственное телевидение за показ аморальных фильмов, требуя немедленно положить конец этому.

Концептуальные вопросы арменоведения

Арменоведческая ассоциация США своим решением от 24 июля 2002г. в ультимативной форме требует от кафедры истории армянского народа ЕГУ аннулировать свое решение от 19 декабря 2001 года, осуждающее антиармянские поползновения в арменоведческих исследованиях в США.

Мы в зарубежной прессе

Библиографические данные аналитических статей об армянах, опубликованных в зарубежной прессе.

Асмик Гулакян “Естественное право армян на возвращение на историческую Родину”

В своем интервью историк Акоп Акопян обосновывает ту точку зрения, что признание Геноцида армян станет бессмысленным, если не будет сопровождаться признанием права армян на возвращение на историческую Родину.

“Евразийство и Карабах”

Взгляды видного русского политолога и стратега Александра Дугина на урегулирование Арцахского вопроса и их критика членом редколлегии, историком Геворком Язычяном.

“Полководец Андраник в письмах”

Впервые публикуются три письма Полководца Андраника известному писателю Аршаку Чобаняну, написанных в 1917-1923гг.

Новые издания

Библиографические данные и краткое содержание новых книг по армянской истории, культуре и литературе, изданных в Республике Армения и за рубежом.

Сурен Манукян “Грузинская революция”

Автор статьи — историк представляет и анализирует ряд внутренних складок “Грузинской” или “Революции роз” в конце 2003г., подчеркивая роль американцев в ней.

“Анализ отношений Турция-Евросоюз”

В публикации обсуждаются различные подходы к вопросу вхождения Турции в Евросоюз. Делается вывод, что в ближайшие годы Турции не разрешат войти в Объединенную Европу.

Крупные группы турецкой экономики

Вкратце представляется “Ихлас холдинг” со своей обширной и разноплановой предпринимательской сетью.

Новые технологии на службу нации

Сообщается об одном начинании в области создания армянских компьютерных игр для детей.

“Планета детства”

Информация об армянском интернет-сайте, предназначенном для воспитания армянских детей.

Лиля Аванесян

Анализ нескольких изображений, символизирующих мужское и женское начала на коврах и коврах, предназначенных для приданного невесты. Сотрудник Музея истории Армении с научной точки зрения анализирует ряд ключевых вопросов, касающихся половых отличительных знаков, отображенных в образцах армянского прикладного искусства.

Сурен Манукян “Армянская хроника”

Одним-двумя предложениями сообщается о наиболее значимых событиях в жизни армян, имевших место в январе-феврале 2004г.

Письмо протеста Тони Блеру.

Письмо 10 армянских организаций Европы премьер-министру Великобритании, осужда-



Համահայկական ամսագիր
 Լրատվական գործունեությունն
 իրականացնող՝
 «Վերածննդի համախմբում» ՍՊԸ

Հասցե՝ 375002, Երևան,
 Լեոյի փող. 13, բն. 7
 հեռ.՝ (3741) 53 93 13
 հեռապատճեն՝ (3741) 53 93 44

Գրանցման վկայական՝ 03Ա 061322,
 տրված է 19. 08. 2003թ.

Տպաքանակը՝ 1000 օրինակ, 44 էջ

Խմբագրակազմ՝
Գևորգ Յազըճյան
 (համարի պատասխանատու),
Հասմիկ Գուլակյան

Համագործակցությամբ՝ «Ազատ ծայն»
 (Կիպրոս), «Հայաստան» (Աթենք), «Նոր
 հորիզոն» (Շվեդիա) և «Սփիւռք»
 (Լիբանան) պարբերականների և
 «Վերածննդի համախմբում»
 հայրենասիրական հ/կ-ի (Երևան)

Ø ÐÄÆÀÄÐÄÇ

Âñãàðì ýì ñèèè æòðì àè

Ó-ðááèðàèü:

“Âáðàðì í àè àì àðì áóì ”

í àððèì òè-âñðèäý í áù . í ðæáì èçàðèý

Èçáàðàèü:

Í Í Í “Âáðàäçí í àè àì àðì áóì ”

Ñì òððáì è-âñðàì :

“Âçàð àçàèí ” (Èèí ò), “Âéàñðàí ”
 (Âðáàðèý), “Í í ð í ðèçí í ” (Øááðèý),
 “Ñì ð ðè ” (Èèááì)

Âáðáñ: 375002, Âðáááí ,

óè. Èáì 13, èá. 7

Òàè. (3741) 53 93 13,

ò àèñ: (3741) 53 93 44

Ðááàèèèí í í àý èí èèááèý:

Âááí ðè ßçááæýí

Âñì èè Âóèáèýí

SHRJADARDZ

All-Armenian Magazine

Founder:

Veradznnndi Hamakhmboum

Patriotic NGO

Publisher:

Veradznnndi Hamakhmboum Co. Ltd.

With the cooperation of the periodicals
Azat Dzayn (Cyprus), **Hayastan** (Athens),
Nor Horizon (Sweden) & **Spurk** (Lebanon)

Editorial Board:

Gevorg Yazedjyan

Hasmik Gulakyan

Address: 375002, Yerevan,

Leo str. 13, # 7

Tel.: (3741) 53 93 13,

Fax: (3741) 53 93 44

Շապիկի առաջին էջում՝
 խաչքար՝ «Հայաստան», 1984թ.:
 Քանդակագործ՝ Նելսոն Շիրվանյան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրական

Շրջադարձի ժամանակը	...3
Ո՞վ է լռում	...4
«Աթաթուրքը մեզ վրա պիտի խնդա»	...5
Եվրոպահայերի համագումարի դիմումնագիրը	...6
Կրկին վտանգված է Հայաստանը	...7
Հարցազրույց Բեյրութի «Սփիւռք» պարբերականի խմբագիր Հովսեփ Արթինյանի հետ	...8
1932թ. թուրք-իրանական պայմանագրի գաղտնազերծումը հակասում է ԻԻՀ շահերին	...10
Միջազգային իրավունքը և հայկական հոգևոր ժառանգությունը	...12
Թուրք-հրեական խոսք՝ անգլիացու լրերանով	...14
Իրանահայ կյանք	...15
Հինավուրց հողի դեռատի տերերը	...16
Բաց նամակ	...17
Հայագիտության հայեցակարգային խնդիրներ	...18
Մենք՝ օտար մամուլում	...19
Հայերի՝ Հայրենիք վերադարձի ընդհանուր իրավունքը	...20
«Եվրասիականությունը» և Ղարաբաղը	...24
Զորավար Անդրանիկը նամակներում	...26
Նոր հրատարակություններ	...28
Վրացական հեղափոխություն	...30
Թուրքիա-Եվրամիություն հարաբերությունների վերլուծություն	...33
Թուրքիայի էկոնոմիկայի մեծ խմբերը	...34
Նոր տեխնոլոգիաները՝ ի սպաս ազգայինի	...35
«Մանկության մոլորակ»	...35
Արական և իգական խորհրդանիշները հայկական գորգերում և կարպետներում	...36
Հայկական ժամանակագրություն	...38
Բողոքագիր պարոն Թոնի Բլերին	...39

Տպագրությունը՝ «Սամարկ» ՍՊԸ:

Ամսագրի նյութերից արտատպումներ կատարելիս՝
 հղումը «Շրջադարձին» պարտադիր է: